

Ա.Ա. ՊՈՐՅԱԿԻՆ

ՊՈՐՅԱԿԻՆ ՎՈՅՏ
ՎԱՐԱՄԻՐԵՎՈՒԹՅՈՒՆ



891.71
7-97







Луи Фон

891.71
7-97м

19 NOV 2010

А. С. ПУШКИН

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

ИСТОРИЯ
ПУГАЧЕВА



ՀՈՒՅ
10/10
41 261



ГОСУДАРСТВЕННОЕ ИЗДАТЕЛЬСТВО ССРА

1936 • ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
3 6 0 6 4 2 1 9 3 6

23 JUL 2013

73168



Q0490204

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Սույն պատմական հատվածը կազմում եր իմ կազմած աշխատանքի մի մասը։ Նրանում ի մի յեն հավաքված այն բոլորը, ինչ հրապարակել ե կառավարությունը Պուգաչովի վերաբերյալ, և այն, ինչ ինձ հավաստի յե թվացելնը մասին խոսող ուսարերկրյագրողների գործերում։ Նմանապես և առիթ եմ ունեցել ոգտվելու վրոշ ձեռագրերից, ավանդություններից և կենդանի մարդկանց վկայություններից։

Պուգաչովի գործը՝ ցարդ չկնքատված, գտնվում եր պետական սանկտպետերբուրգյան արխիվում ուրիշ այլ կարեոր թղթերի հետ, վորոնք յերբեմն պետական գաղանիքներ են յեղել, հիմա դարձած են պատմական նյութեր։ Թագավոր-կայսրը գահ բարձրանալուց հետո հրամայեց դրանք կարգի բերել։ Սույն գանձերը դուրս են բերված ներքնահարկերից, ուր մի քանի հեղեղումներ այցելել են նրանց և հաղիվ չեն վոչնչացըրել։

Ապագա պատմաբանը, վորին կթույլատրվի կնքատել Պուգաչովի գործը, հեշտությամբ կուղղի և կլրացնի իմ աշխատանքը — վորն, ինարկե, կատարյալ չե, սակայն՝ բարեխիղճ ե։ Պատմական այն եջը, վորի վրա հանդիպում են Յեկատերինայի, Ռումյանցեվի, յերկու Պանինների, Սուվորովի, Բիբիկովի, Միկայալյանի և Դերժավինի անունները, չպետք ե կորսվի գալիք սերունդների համար։

Ա. Պուչկին

Հ-ն Կոյնմբերի 1833.

Բոլղինո գյուղ.



Ա Խ Ա Զ Ի Ն Ս Ա Ս

Ինձ թվում ե, թե ամեն տեսակ դիտավորությունների և արկածների սույն գողին վոչ միայն միջակ, այլ վոչ իսկ ամենագերազանց պատմագիրը հազիվ թե կարողանար կարդին նկարագրել. մի գողի, վորը բոլոր արարքները բանականությունից և սաղմական կարգ ու կանոնից չեն, այլ՝ հանդգնությունից, դիպածից կամ հաջողությունից են կախված յեղել: Ինչո՞ւ և ինքը Պուգաչովը (կարծում ես) դրանց մանրամասնությունները վոչ միայն պատմել, այլ շատ մասը հեղել ի վիճակի չե, վորքանով վոր դրանք աեղի յեն ունեցել վոչ թե նրա անմիջական, այլ նրա բազմաթիվ համախոհների լի ու լի կամքով ու խիզախությամբ և զանազան վայրերում հանկարծ:

Վանահայր Պլատոն Լյուբարսկի

Ա ռ ա զ ի ն գ լ ո ւ լ ս

Յափկան կաղակների սկզբնավորությունը: — Պոետիկ ավանդություն: — Յարական չըովարտակը: — Ավարառությունները Կասպից ծովի վրա: — Ստենկա Ռազին: — Նեչայը և Շամարը: — Կետրոս Մեծի դիտավորությունները: — Ներքին հուզումները: — Վաչկատուն ժողովրդի փախուստը: — Յափկան կաղակների ըունտը: — Նրանց խաղաղեցումը:

Յափկը՝ Յեկատերինա Ա-ի հրամանով վերանվանած Ուրալ, սկիզբն ե առնում այն լեռներից, վորոնք նրան տվել են նրա այժմյան անունը. հոսում ե գրանց շղթայի յերկարությամբ գեղի հարավ մինչև այն տեղ, ուր յերբեմն դրված ե յեղել Որենքուրզի հիմքը և ուր հիմա գտնվում ե Որսկ բերդը. այդուեղ, կտրելով գրանց քարքարոտ շղթան, շրջվում ե գեղի արևմուտք և հոսելով ավելի քան յերկու հազար հինգ հարյուր վերստ, թափվում ե Կասպից ծովը: Նա վոռոգում ե Բաշկիրիայի մի մասը, կազմում ե Որենքուրզի նահանգի համարյա ամբողջ հա-

բավարկելլան սահմանը. աջից նրան մոտենում են անդրվորդյան տափաստաները. ձախից ընկած են տիսուր անապատները, ուր թափառում են հորդաները վայրենի ցեղերի, վորոնք մեղանում հայտնի յեն կիրգիզ-կայսակ անունով: Արագընթաց են րա հոսանքը. պղտոր ջրերը լի յեն ամեն տեսակ ձկներով. ափերը մեծ մասմար կավային են, ավազոտ և անտառազուրկ, սակայն վողողվող մարգագետիներ ունեցող տեղերում նրանք հարմար են անասնապահության համար: Գետաբերանի մոտ Յափկը թափուտ բարձր շամբեր ունի, ուր թաքնվում են վայրի խողերն ու վագրերը:

Ահա այս գետի ափերին, տասնեհինգերորդ դարում, յերեացին Դոնի կազակները, վորոնք նավարկություններ եյին ունենում Խվալին ծովի վրա¹⁾: Նրանք ձմեռում եյին գետի՝ այն ժամանակ դեռևս անտառով ծածկված և իրենց մեկուսացմամբ անվտանգ ափերին. դարնանը նորից ծով եյին դուրս գալիս, ավազակություն անում մինչև խոր աշուն և ձմռան դեմ վերադառնում Յափկ: Գետի հոսանքով միշտ վեր, մի տեղից դեպի մյուսը շարժվելով, վերջապես նրանք իրենց մշտական բնավայր ընտրեցին Կոլովրատնոյե կոչված տեղը, այժմյան Աւրալսկից վաթսուն վերստի վրա:

Նորաբնակների հարեան վայրերում թափառում եյին մի քանի թաթարական ընտանիքներ, վորոնք անջատվել եյին Վոսկե Հորդայի²⁾ ուլուսներից³⁾ և ազատարձակ բնակալար եյին փնտրում նույն այդ Յափկի ափերին: Սկզբում այդ լերկու ցեղերը թշնամանքի մեջ եյին, սակայն վերջին ժամանակները բարեկամական հարաբերությունների մեջ մտան. կազակներն սկսեցին կանաչք առնել թաթարական ուլուսներից: Պահպանվել ե

1) Կամ Խվալիսի ծով — հոսում ոռուսները այսպես եյին կոչում կասպից ծովը:

2) Վոսկե Հորդա — մոնղոլական ֆեոդ. պետություն, վոր հասատվեց XIII դ. կուսերին և բռնում եր Ստորին Վոլգայի գուգա տիկերին ընկած ընդարձակ տարածությունները: Մոտ 2 դար ոռուս իշխանները տուրք եյին գճարում վ. Հ.-ին և վասսալական կախման մեջ եյին նրանից: Շնորհիվ ներքին կատաղի յերկապառակությունների, այս զորեղ ուազմական բռնակալությունը կարճ միշտում վերածվեց առանձին խառնությունների — կազակ, Աստրախանի, Նորդակի և Ղրիմի, գործելով վորպես մի թույլ ֆեղերացիա:

3) Ուլուսներ — թյուրք-մոնղոլական ծագում ունեցող մի փոքրիկ ազգություն եր և ապրում եր այժմյան Կալմիկիայի սահմաններում:

այսպիսի մի պոետիկ ավանդություն. կազակները՝ ամուրի ապրելու սաստիկ սովոր, միմյանց հետ ուխտ են կապած յեղել սպանել ծնվող զավակներին, իսկ կանանց՝ լքել նոր արշավանքի դուրս գալիս: Նրանց ատամաններից մեկը, Դուզնյատ անունով, առաջնը զանց առաջ որենքը, խնայելով իր ջահել կնոջը, և կազակները ատամանի որինակով հնազանդվեցին ընտանեականության լծին: Մինչև հիմա ել ուրալյան ափերի լուսավորված և հյուրասեր բնակիչները իրենց խրախճաններին խմում են Գուգնիիսա տատիկի կենացը:

Ապրելով ասպատականություններով, շրջապատված թշնամի ցեղերով, կազակները զգում եյին մի ուժեղ հովանավորության անհրաժեշտությունը և Միխայիլ Ֆեոդորովիչի թագավորության որով իրենց կողմից մարդ ուղարկեցին Մոսկվա՝ թագավորին խնդրելու, վոր նա իրենց ընդունի իր բարձր ձեռքի ներքո: Կազակների բնակավայրը անտեր Յափկի ափերին կարող եր թվականում, վորի կարենորությունն ակներև եր: Թագավորը փայփակեց նոր հպատակներին և մի հրովարտակ շնորհեց Յափկ գետի վերաբերյալ, ակունքներից մինչև գետաբերանը նրանց տալով և թույլատրելով բնակության համար ազատ մարդիկ համախմբել իրենց ըստօքը:

Նրանց թիվը քանի գնաց մեծացավ: Նրանք շարունակեցին նավարկություններ անել կասպից ծովի վրա, այստեղ միացան Դոնի կազակների հետ, միասին հարձակումներ եցին գործում պարսից առետրական նավերի վրա և կողոպտում ծովամերձ գյուղերը: Շահը գանգատվեց ցարին: Մոսկվայից խրատական թղթեր ուղարկվեցին գետի Յափկ և Դոն:

Կազակները նավակներով, դեռևս ավարով բեռնված, վորդայով գնացին Նիժնի-Նովգորոդ, այստեղից ուղենորվեցին Մոսկվա և ներկայացան արքունիքին՝ մեղայական գալով, յուրաքանչյուրն իր համար հետև տանելով կացինն ու գլխատման կոճղը: Նրանց հրամակվեց մեկնել Լեհաստան և Ռիգայի մոտերք՝ իրենց հանցանքներն այնտեղ լավ ծառակությամբ քավելու համար, իսկ դեպի Յափկ ուղարկվեցին սարելեցները¹⁾, վորոնք հետագայում մի ցեղ կազմեցին կազակների հետ:

1) Ստելեցներ — այսպես եյին կոչվում Մոսկովյան թագավորության մշտական ընտար զորքի զինվորները սկսած 16 դ. մինչև 18 դ. սկզբները: Խուսապտամության մեջ հայտնի ե Ստելեցների բունը 1682 թ.:

Ստենկա Ռազինը այցելեց Յափյան բնակատեղերը։ Տարեգորությունների վկայությամբ կազակները նրան ընդունեցին վորպես թշնամու։ Այս խիզախ խոռվարկուն վերցրեց նրանց փոքրիկ քաղաքը, իսկ այստեղ գտնված ստրելեցները սպանվեցին կամ ջրահեղճ յեղան։

Թաթարական տարեգորության հետ համախոս ավանդությունը նույն այդ ժամանակին և վերագրում Յափյան յերկու ատամանների՝ Նեչայի և Շամայի արշավանքները։ Առաջինը, կամավոր զորք հավաքելով, դիմեց գեպի Խիզա, հուսալով հարուստ ավար ձեռք բերելու Բախտը ժապառմ եր նրան։ Դժվարին ճանապարհորդությունից հետո կազակները հասան Խիզա։ Այդ ժամանակ խանը իր զորքով պատերազմի մեջ եր։ Առանց զորկե խոչնդութիւննեչայը գրավեց քաղաքը, բայց նա յերկար մնաց այնտեղ և ուշ շարժվեց յետ դառնալու։ Ավարով ծանրաբեռնված կազակներին վրա հասավ կովից վերադարձող խանը Միր-Դարիայի ափին, ջարդեց ու բնաջնջեց նրանց։ Միայն յերեք հոգի վերադարձան Յափյի, լուր տալով քաջ նեչայի մահվան մասին։ Մի քանի տարի հետո մի ուրիշ ատաման, Շամայ մականունով, գնաց նրա հետքերով։ Բայց նա գերի ընկավ տափաստանաբնակ կալմիկների ձեռքը, իսկ նրա կազակներն առաջ անցան, ճանապարհը կորցրին, Խիզա գուրս չեկան, այլ հասան մինչև Արալյան ծովը, ուր և հարկադրված յեղան ձմեռել։ Վրա հասավ սովոր։ Դժբախտ թափառաշրջիկները սպանում ելին միմյանց և ուտում։ Մեծ մասը կոտորվեց։ Վերջապես մնացածներն իրենց կողմից մարդ ուղարկեցին Խիզայի խանին, վորպեսզի նա ընդունի իրենց և փրկի սովաման լինելուց։ Խիզացիները յեկան նրանց յետեից, բոլորին հավաքեցին և վորպես ստրուկներ տարան իրենց քաղաքը։ Այսուեղ ել նրանք կորան։ Իսկ Շամային, մի քանի տարի հետո կալմիկները բերին յափյան զորաբանակը՝ հավանորեն գերիների հետ փոխանակելու համար։ Այդ ժամանակվանից սառավ կազակների հեռազոր արշավանքների դուրս գալու սերը։ Քիչշիչ նրանք ընտելացան ընտանեական ու քաղաքացիական կյանքին։

Յափյան կազակները հլու-հնապանդ ծառայում եյին Մոսկովյան Պրիկազի¹⁾ կարգագով, սակայն տներում պահպանում

1) Պրիկազներ — պետական հիմնարկություններ, վորոնք պլավորում եյին քարչական սպանձին ճուղերը Մոսկովյան թագավորության մեջ։

յին իրենց կառավարման նախնական յեղանակը։ Իրավունքների կատարյալ ազատություն եր ատամանները և ավագները՝ ժողովրդի կողմից ընտրվող, ժողովրդական վորոշումների ժամանակավոր գործադրողներն եյին։ Կային շրջաններ (կրցի) կամ խորհրդակցություններ (совещания), ուր յուրաքանչյուր կազակ ազատ ձայնի իրավունք ուներ և ուր հասարակական բոլոր գործերը վճռվում եյին ձայների մեծամասնությամբ։ Հարավոր վոչ մի գրավոր վորոշում. դավաճանության, յերկշոտության, սպանության և գործության գեպքերում հանցավորին դնում եյին պարկի մեջ յեվ նետում ջուրը. այսպիսիք են սույն վարչության հիմնական գծերը։ Դեռևս Դոնից իրենց հետ բերած պարզ ու բոի կարգերին Յափյան կազակները միացրին և այլ կարգեր՝ տեղական, վորոնք վերաբերում եյին ձկնորսությանը — նրանց հարստության գլխավոր զրագմունքին և իրավունքին՝ ծառայության համար վարձել պահանջված թվով կազակներ, — չափազանց բարդ և ծայրահեղ ճգրտումներով վորոշված կարգեր։

Պետրոս Մեծը միջոցներ ձեռք առավ յափյան կազակներին պետական վարչության ընդհանուր սխստեմի մեջ մտցնելու համար։ 1720 թվին յափյան զորքը հանձնված եր ուղամական կոլեգիայի գերատեսչությանը. Կազակները գրգովեցին, այլեցին իրենց փոքրիկ քաղաքը, դիտավորություն ունենալով փախչել գեպի Կիրգիզյան տափաստանները, սակայն նրանց գածնարար խազաղացրեց գնդապես Զախարովը։ Նրանց մեջ վիճակագրություն կատարեցին, զինվորական ծառայություն սահմանվեց և ոռօճիկ նշանակվեց։ Թագավորն ինքը նշանակեց զորական ատամանին։

Աննա իռանովնայի և Յելիսավետա Պետրովնայի թագավորության ժամանակ կառավարությունն ուղղում եր իրագործել Պյոտրի ղիտավորությունները. Դրան նպաստում եյին զորական ատաման Մերկուլիկի և զորական ավագ Լոգինովի միջև ծագած յերկպառակությունները և դրանց հետևանքով կազակների բաժանումը յերկու մասի — ատամանական և լոգինովական կամ ժողովրդական։ 1740 թվին վորոշված եր վերակազմել յափյան զորքի ներքին վարչությունը, և նեպլիուել, վորն այն ժամանակ Որենբուրգի նահանգապետն եր, ուղամական կոլեգիային ներկայացրեց նոր կազմակերպության նախագիծը, սակայն դիտավորությունների և առաջադրանքների մեծ մասը մնաց անկատար՝ մինչև Յեկատերինա II թագուհու գահ բարձրանալը։

Ստենկա Խազինը այցելեց Յափյան բնակատեղերը։ Տարեգությունների վկայությամբ կազակները նրան ընդունեցին վորպես թշնամու։ Այս խիզախ խոսվարկուն վերցրեց նրանց փոքրիկ քաղաքը, իսկ այնտեղ գտնված ստրելեցները սպանվեցին կամ ջրահեղձ յեղան։

Թաթարական տարեգության հետ համախոս ավանդությունը նույն այդ ժամանակին և վերագրում Յափյան յերկու տատամանների՝ նեչայի և Շամայի արշավանքները։ Առաջինը, կամավոր զորք հավաքելով, դիմեց գեպի Խիվա, հուսալով հարուստ ավար ձեռք բերել։ Բախտը ժպտում եր նրան։ Դժվարին ճանապարհորդությունից հետո կազակները հասան Խիվա։ Այդ ժամանակ խանը իր զորքով պատերազմի մեջ եր։ Առանց վորեե խոչընդոտի նեչայը գրավեց քաղաքը, բայց նա յերկար մնաց այնտեղ և ուշ շարժվեց յետ դառնալու։ Ավարով ծանրաբեռնված կազակներին վրա հասավ կովից վերադարձող խանը Միր-Դարիայի ափին, ջարդեց ու բնաջնջեց նրանց։ Միայն յերեք հոգի վերադարձան Յափյի, լուր տալով քաջ նեչայի մահվան մասին։ Մի քանի տարի հետո մի ուրիշ ատաման, Շամայ մականունով, գնաց նրա հետքերով։ Բայց նա գերի ընկալ տափաստանաբնակ կալմիկների ձեռքը, իսկ նրա կազակներն առաջ անցան, ճանապարհը կորցրին, Խիվա դուրս չեկան, այլ հասան մինչև Արալյան ծովը, ուր և հարկադրված յեղան ձմեռել։ Վրա հասավ սովը։ Դժբախտ թափառաշրջիկները սպանում եին միմյանց և ուտում։ Մեծ մասը կոտորվեց։ Վերջապես մնացածներն իրենց կողմից մարդ ուղարկեցին Խիվայի խանին, վորպեսզի նա ընդունի իրենց և փրկի սովամահ լինելուց։ Խիվացիները յեկան նրանց յետեից, բոլորին հավաքեցին և վորպես ստրուկներ տարան իրենց քաղաքը։ Այնտեղ ել նրանք կորան։ Իսկ Շամային, մի քանի տարի հետո կալմիկները բերին յափյան զորաբանակը՝ հավանորեն գերիների հետ փոխանակելու համար։ Այդ ժամանակվանից սառավ կազակների հեռավոր արշավանքների դուրս գալու սերը։ Քիչքիչ նրանք ընտելացան ընտանեական ու քաղաքացիական կյանքին։

Յափյան կազակները հլուհնազանդ ծառալում եյին Մոսկովյան Պրիկազի¹⁾ կարգագրով, սակայն տներում պահպանում

1) Պրիկազիներ — պետական հիմնարկություններ, վորոնք գլխավորում եյին գարշական առաջին ձուղերը Մոսկովյան թագավորության մեջ։

եյին իրենց կառավարման նախնական յեղանակը։ Իրավունքների կատարյալ ազատություն եր ատամանները և ավագները՝ ժողովրդի կողմից ընտրվող, ժողովրդական վորոշումների ժամանակավոր գործադրողներն եյին։ Կային շրջաններ (կրցի) կամ խորհրդակցություններ (совещания), ուր յուրաքանչյուր կազակ ազատ ձայնի իրավունք ուներ և ուր հասարակական բոլոր գործերը վճռվում ելին ձայների մեծամասնությամբ։ Հկար վոչ մի գրավոր վորոշում գավաճանության, յերկշոտության, սպանության և գողության գեպքերում հանցավորին դնում եյին պարկի մեջ լիլ նետում ջուրը. այսպիսիք են սույն վարչության հիմնական գծերը։ Դեռևս Դոնից իրենց հետ բերած պարզ ու բոխ կարգերին Յափյան կազակները միացրին և այլ կարգեր՝ տեղական, վորոնք վերաբերում եյին ձկնորսությանը — նրանց հարստության գլխավոր գաղամունքին և իրավունքին՝ ծառայության համար վարձել պահանջված թվով կազակներ, — չափազանց բարդ և ծայրահեղ ճշգրտումներով վորոշված կարգեր։

Պետրոս Մեծը միջոցներ ձեռք առավ յափյան կազակներին պետական վարչության ընդհանուր սիստեմի մեջ մտցնելու համար։ 1720 թվին յափյան զորքը հանձնված եր ուղմական կոլեգիայի գերատեսչությանը։ Կազակները գրգովեցին, այրեցին իրենց փոքրիկ քաղաքը, դիտավորություն ունենալով փախչել գեպի Կորգիզյան տափաստանները, սակայն նրանց գաժանարար խաղաղացրեց գնդապետ Զախարովը։ Նրանց մեջ վիճակագրություն կատարեցին, զինվորական ծառայություն սահմանվեց և ոռմիկ նշանակվեց։ Թագավորն ինքը նշանակեց զորական ատամանին։


Աննա Իոսինովայի և Յելիսավետա Պետրովնայի թագավորության ժամանակ կառավարությունն ուղղում եր իրագործել Պյոտրի դիտավորությունները։ Դրան նպաստում եյին զորական ատաման Մերկուրի և զորական ավագ Լոգինովի միջն ծագած յերկառակությունները և դրանց հետևանքով կազակների բաժանումը յերկու մասի — ատամանական և լոգինովական կամ ժողովրդական։ 1740 թվին վորոշված եր վերակազմել յափյան զորքի ներքին վարչությունը, և նեպլումը, վորն այն ժամանակ Որենքուրդի նահանգապետն եր, ուղմական կոլեգիային ներկայացրեց նոր կազմակերպության նախագիծը, սակայն դիտավորությունների և առաջադրանքների մեծ մասը մնաց անկատար՝ մինչև Յեկատերինա II թագուհու գահ բարձրանալը։

1762 թվից իսկ լոգինովական յարկան կազմելու սկսեցին գանգատվել զանազան ձնշումներից, վոր նրանք կրում ելին զորքի մեջ կառավարության հաստատած կանցելյարիայի անդամներից՝ վորոշված ոռճիկից լետ պահելու, ինքնակամ հարկեր դնելու և ձկնորսության հնավանդ իրավունքներն ու սովորությունները խախտելու համար: Այս գանգատաները քննելու նպատակով նրանց մոտ ուղարկված աստիճանափորները չկարողացան կամ չկամեցան բավարարել դրանք: Քանից ապստամբվեցին կազմելու և գեներալ-մայորներ Պոտապովը և Զերեպովը (առաջինը 1766 թվին, իսկ յերկրորդը՝ 1767-ին) հարկադրված եին դիմել զենքի ուժին և մահապատիժների սարսափին: Յակ փոքրիկ քաղաքում հիմնվեց քննիչ հանձնաժողով: Նրա կազմի մեջ կային գեներալ-մայորներ Պոտապովը, Զերեպովը, Բրիմֆելդը և Դավիդովը ու գվարդիայի կապիտան Զերիչևը: Զորական ատաման Անդրեյ Բորոդինը հեռացվեց. նրա տեղ ընտրվեց Պյոտր Տամբովցեվը. կանցելիարայի անդամները դատապարտվեցին՝ բացի յետ պահած դրամներից, նշանակալից տույժ վճարել զորքին, սակայն նրանք կարողացան խուսափել դատապահուը կատարելուց: Կազմելու չեյին կորցնում իրենց հույսերը: Նրանք փորձեցին իրեն իսկ թագուհուն տեղեկացնել իրենց արդարացի գանգատները: Սակայն նրանց ուղարկած մարդկանց ուղամական կոլեգիայի նախագահ կոմս Զերնիշովի հրամանով Պետերբուրգում գաղտնի կերպով բռնեցին, շղթայակապ արին և պատճեցին վորպես խոռվարարների: Նույն միջոցին հրամայված եր մի քանի հարյուր կազմելու ծառայության կարգել Ղզլարում: Տեղական իշխանությունն ոգտվեց և սույն գեղքով, վորպեսզի նոր ձնշումներով վրեժինդիր լինի ժողովրդից՝ նրա ընդդիմադրության համար: Իմացան, վոր կառավարությունը դիտավորություն ուներ կազմել և վոր արդեն հրամայված ե ածիլել նրանց մորուքները: Գեներալ-մայոր Տրաուբենբերգը, վորն այդ նպատակով ուղարկված եր Յահկ փոքրիկ քաղաքը, իր վրա գրավեց ժողովրդական զալրույթը: Կազմելու հուզվեցին: Վերջապես, 1771 թվին խոռվությունն լերան յեկավ իր բովանդակ ուժով:

Մի դեպք, վոչ պակաս կարեոր, առիթ յեղավ դրան: Վոլգայի և Յահկի միջև, Աստրախանի և Սարատովի անձայրածիր տափաստանների վրա թափառում եյին խաղաղասեր կալմիկները, վորոնք տասնութերորդ դարի սկզբում Զինաստանի սահ-

մաններից յեկել ելին սպիտակ ցարի հովանավորության տակ: Այդ ժամանակից նրանք հավատարմությամբ ծառալում ելին Ռուսաստանին, պաշտպանելով նրա հարավային սահմանները: Ռուս գավառակապետները, ոգտվելով նրանց միամտությունից և վարչության կենտրոնից հեռու գտնվելուց, սկսեցին հարստահարել նրանց: Սույն խաղաղ ու բարի ժողովրդի գանգատները չեյին հասնում բարձրագույն իշխանությանը: Կորցնելով իրենց համբերությունը, նրանք վճռեցին թողնել Ռուսաստանը և գաղտնի բանակցություններ վարեցին չինական կառավարության հետ: Նրանց համար դժվար չեր առանց կասկածներ հարուցելու քոչելով գալհասնել մինչև Յահկի ափը: Յեկ հանկարծ նրանց թվով յերեսուն հազար կիրիտկաներն անցան գետի մյուս կողմը և կիրգիզական տափաստաններով ձգվեցին դեպի իրենց նախկին հայրենիքի սահմանները: Կառավարությունը փութաց արգելել անսպասելի փախուստը: Յահկյան զորքին հրամայվեց դուրս գալ հետապնդելու, սակայն կազմելու (բացի շատ սակավաթիվներից) չմեցին և բացե ի բաց հրաժարվեցին ամեն տեսակ ծառայությունից:

Խորվությունը դադարեցնելու համար այնտեղի իշխանության պետերը դիմեցին խստագույն միջոցների, բայց պատիժներն ալլս չեյին կարող խաղաղեցնել դաժանացած մարդկանց: 1771 թվի հունվարի 13-ին նրանք հավաքվեցին հրապարակի վրա, յեկեղեցիներից վերցրին սրբապատկերները և կազմակ կիրպիչներովի առաջնորդությամբ գնացին գվարդիայի կապիտան Դուրնովի մոտ, վորը քննիչ հանձնաժողովի գործերով գտնվում եր յահկյան փոքրիկ քաղաքում: Նրանք պահանջեցին կանցելյարիայի անդամների հրաժարեցումը և չվճարած ոռճիկի հատուցումը: Գեներալ-մայոր Տրաուբենբերգը զորքով և թնդանոթներով դուրս յեկավ նրանց դեմ, հրամայելով ցըվել, սակայն վոչ նրա հրամանները, վոչ զորական ատամանի հորդորանքը չունեցան վոչ մի ազդեցություն: Տրաուբենբերգը հրամայեց կրակել. կազմելու հարձակվեցին թնդանոթների վրա: Տեղի ունեցավ կորիկ. խոռվարարներն հաղթեցին: Տրաուբենբերգը սպանվեց իր տան դարպասի մոտ: Դուրնովը վերքեր ստացավ: Տամբովցելին կախեցին, կանցելյարիայի անդամներին կալանքի տակ դրին, իսկ նրանց տեղ հաստատվեց նոր իշխանություն:



Խոռվարաբները ցնծում եյին: Նրանք իրենց կողմից ընտրյալներ ուղարկեցին Պետերբուրգ, վորապեսի բացատրեն և արդարացնեն արյունահեղ գեպքը: Նույն միջոցին նրանց խաղաղեցման համար Մոսկվայից ուղարկվեց գեներալ-մայոր Ֆրեյմանը մի վաշտ գրենադերներով¹⁾ ու հրետանիով: Ֆրեյմանը գարնանը հասավ Արենբուրգ, ուր սպասեց մինչև գետերի բացվելը և, ճետը վերցնելով դաշտային լերկու թեթև զորախումբ ու մի քանի կազակներ, գնաց յակիցան փոքրիկ քաղաքի վրա: Խոռվարաբները թվով յերեք հազար, դուրս յեկան նրա դեմ. Երկու հակառակորդ զորքերը հանդիպեցին իրար քաղաքից յոթանասուն վերստի վրա: Հունիսի 3-ին և 4-ին տեղի ունեցան տաք կրիմսեր: Ֆրեյմանը կարտեշով եր ճանապարհ բացում իր համար: Խոռվարաբները սրարշավ վերադառն իրենց աները, վերցրին կանանց ու յերեխաներին և սկսեցին անցնել Զաղան գետով, դիտավորություն ունենալով փախչել գեպի կասպից ծով: Ֆրեյմանը, վոր նրանց հետեւց քաղաք եր մտել, կարողացավ սպանալիքներով ու հորդորներով ժողովրդին պահել Գնացողների յետելից հետապնդում ուղարկվեց և համարյա բոլորին բռնեցին: Արենբուրգում հիմնադրվեց քննիչ հանձնաժողով՝ զնդապետ Ներոնովի նախագահությամբ: Բազմաթիվ խոռվարաբները ուղարկվեցին այնտեղ: Բանտերում տեղ չմնաց: Նրանց տեղավորեցին Հյուրատան և Դրամների փոխանակության²⁾ խանութներում: Նախկին կազակային վարչությունը վերացվեց: Իշխանությունը հանձնվեց յափկյան պարետ, յենթագնդապետ Սիմոնովին: Զորական ավագ Մարտեմյան Բորոդինին և ավագ (հասարակ) Մոստովչիկովին հրամայվեց ներկա լինել նրա կանցելյարիայում: Բունտի հեղինակները պատժվեցին մարակով. մոտ հարյուր մարդ աքսորվեց Սիբիր, մյուսներին զինվոր քշեցին (HB³ բոլորը փախան). մնացածներին ներեցին և յերկրորդ անգամ յերդվել տվին: Սույն խիստ և անհրաժեշտ միջոցները վե-

1) Գրենադերը վաշտի բնափր զինվորներն եյին, վորոնց սպարտականությունն եր կոզի ժամանակ՝ ձեռնանոնակներ շպրտել թշնամու վրա: Հետագայում այսպես կոչվում եյին ընտիր հետեւակ զորամասերը:

2) Բնագրում՝ „... по лавкам Гостиинного и Меноваго дворов,,.

3) Nota bene (լատ.) — «Լավ նկատի՛ր», անհրաժեշտ և նկատել:

բահաստատեցին արտաքին կարգը, սակայն անդորրությունն անհուսալի էեր: «Հալա ինչեր պիտի լինեն», — ասում եյին ներված խոռվարաբները. «Եսպես կցնցենք Մոսկվան»: — Կազակները մինչ այդ ժամանակ դեռևս բաժանված եյին լերկու մասի. համաձայնականներ և անհամաձայնականներ (կամ, ինչպես շատ ճիշտ թարգմանել և սույն խոռվարը ուղմական կողեզիան— հսազանդներ և անհնապանդներ): Գաղտնի խորհրդակցությունները տեղի եյին ունենում տափաստանային ումեաներում¹⁾ և հեռու ընկած խուսորներում²⁾: Ամեն ինչ նախագուշակում եր նոր խոռվարությունն: Զիար առաջնորդը գտնվեց:

1) Ումես — իջևանատուն (տեղական լեզվով):

2) Խուսոր — ադարակ, զյուղակ՝ հողոգագործման այն յեղանակը, յերբ ընակելի շինքերը և վարելահողերը գանգում են միւնույն հողամասում և այդ հողը կազմում և մշակողի (— ների) սեփականությունը:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Պուգաչովի հայտնվելը: — Նրա փախուստը կազանից: — Կոժեվնիկովի ցուց-
մունքները: — Ինքնակոչի առաջին հաշողությունները: — Իւեցյան կազակների
դավաճանությունը: — Ռասսիլանյայ բերդի առումը: — Նուրալի-Խան: — Ռեյն-
դորպի կարգադրությունը: — Նիժնե-Ռուսական բերդի առումը: — Տատիշ-
չեայի առումը: — Խորհրդակցություն Որենբուրգում: — Զերնուելենսկայա
բերդի առումը: — Պուգաչովը Սակմարսկում: —

Սույն խառնակ ժամանակ, կազակների մեջ տնից-տուն
թրկ եր գալիս մի անհայտ շրջմոլիկ, վորպես գործավոր վարձ-
վելով մերթ այս, մերթ այն տնատիրոջ մոտ, և ձեռք զարկե-
լով ամեն տեսակ արհեստի: Նա ականատես յեղավ խոռվության
խաղաղեցմանը և նրա հեղինակների մահապատճին, մի առ ժա-
մանակ հեռացավ դեպի իրդիքի մենաստանները. այնտեղից
1772 թվի վերջին ուղարկվեց Յաիցկի փոքրիկ քաղաքը ձուկ
գնելու համար, ուր և իջևանել եր Դենիս Պյանով կազակի տանը:
Նա աչքի լեր ընկնում իր ճառերի հանդինությամբ, վատարա-
նում եր իշխանությունը և կազակներին նախապատրաստում
փախչելու դեպի տաճկական սուլթանի մարզերը. Նա հավատաց-
նում եր, վոր Դոնի կազակները չեն հապաղի հետեւ իրենց,
վոր նա սահմանագլխում պատրաստ ունի լերկու հարցուր հա-
զար ոռուբլի դրամ և յոթանասուն հազար ոռուբլու ապրանք և մի
ինչ-վոր փաշա՝ հենց վոր կազակները գան իր մոտ՝ պետք ե
նրանց տա մինչեւ հինգ միլիոն. չառ այժմ նա յուրաքանչյուրին
խոստացավ ամիսը տասներկու ոռուբլի ոռնիկ: Բացի դրանից
նա, ասում եր, վորպես թե յաիկյան կազակների դեմ Մոսկա-
յից գալիս են յերկու գունդ և վոր ծննդիան կամ մկրտության

որերին անպայման բունտ կլինի: Հնագանդներից վոմանք ու-
ղեցին բոնել նրան և ներկայացնել վորպես խոռվարկու, սակայն
նա թագնվեց Դենիս Պյանովի հետ և բոնվեց Մալիկովկա գյու-
ղում (վոր հիմա Վոլ'սկ և կոչվում) իր հետ մի ձանապարհով
գնացող գյուղացու ցուցմունքով: Սույն շրջմոլիկը Յամելյան
Պուղաչովն եր, Դոնի կազակ և աղանդավոր, վորը կեղծ անցա-
գրով յեկել եր Լեհաստանի սահմանի այն կողմից, դիտավորու-
թյուն ունենալով բնակություն հաստաել իրգիզ գետի ափին,
այնտեղի աղանդավորների մեջ: Պահակների հսկողության տակ
նա ուղարկվեց Միմրիլսկ, իսկ այնտեղից՝ Ղազան: և ինչպես
ամեն ինչ, վոր յաիկյան զորքի գործերի վերաբերյալ կարող եր
կարեռ թվալ այն ժամանակվա հանգամանքներում, ուստի
Որենբուրգի նահանգապետն անհրաժեշտ համարեց այդ մասին
տեղեկացնել պետական ուղմական կոլեգիային իր 1773 թվի
հունվարի 18 զեկուցագրով:

Յաիկյան խոռվարաբներն այն ժամանակ հաճախ եյին
յերեան գալիս և Ղազանի իշխանությունը մեծ ուշադրություն
չդարձրեց ուղարկված հանցագործի վրա: Պուգաչովը բանտում
պահվում եր մյուս բանտարկաներից վոչ խիստ: Մինչեւ նրա
համախոհները քնած չեյին: Մի անգամ նա բերդական յերկու
զինվորների հսկողությամբ շրջում եր քաղաքում՝ վողորմու-
թյուն հավաքելով: Զամոչնայա Ռեշոտկայի մոտ (այսպես եր
կոչվում Ղազանի գլխավոր փողոցներից մեկը) կանգնած եր յե-
ռածի մի սայլակ: Պուգաչովը մոտեցավ դրան, հանկարծ հրեց
իրեն ուղեկցող զինվորներից մեկին. մյուսն ողնեց կոճղագոր
կալանավորին նստել կիրտեկան և նրա հետ միասին սրարշավ
փախավ քաղաքից: Դա պատահեց 1773 թվի հունիսի 19-ին:
Յերեք որ հետո Ղազանում ստացվել եր դատարանի վճիռը՝ հաս-
տատված Պետերբուրգում, ըստ վորի Պուգաչովը դատապարտված
եր մտրակահարման և Պելիմ աքսորվելու՝ տաժանակիր աշխա-
տանքների:

Պուգաչովը հայտնվեց պաշտոնաթող կազակ Դանիլ Շելու-
դյակովի խուտորներում. վորպես գործավոր առաջ նա ապրել
եր այնտեղ և ուր այդ ժամանակ տեղի ունելին չարագործների
խորհրդակցությունները:

Մկրտում պատրաստվում եյին զեպի Տաճկաստան փախչե-
լու. այդ միտքը վաղուց ի վեր ընդհանուր եր բոլոր դժգոհ կա-
զակների համար: Հայտնի լե, վոր Աննա Իոաննովնայի գահակա-

լության որով իգնատիյ նեկրասովը կարողացավ այն ի կատար ածել և իր հետ բազմաթիվ կազմակներ՝¹⁾ տարավ Դոնից։ Նրանց հետորդները մինչև այսոր ել ապրում են. տաճկական մարդերում, իրենց համար խորթ հայրենիքում պահպանելով նախկին հայրենիքի հավատը, լեզուն ու սովորությունները։ Վերջին տաճկական պատերազմի ժամանակ նրանք կատաղորեն կովում եցին մեր գեմ։ Նրանց մի մասը ներկայացավ կայսր նիկոլային, վորը զապորոժյան մի նախակով արդեն անցել եր Դանուբը. ինչպես և Սեչի մնացած մասը, նրանք մեղայական բերին իրենց հայրերի համար և վերադարձան իրենց որինական թագավորի տիրապետության տակ։

Սակայն յափկան դաշտի բազմաթիվ չափից գուրս կապված եյին իրենց հարուստ, հարազատ ափերին։ Փոխանակ փախչելու, նրանք նոր խոռվություն սկսեցին։ Ինքնակոչությունը նրանց թվաց վորպես մի հուսալի զսպանակ։ Այս բանի համար պետք եր սոսկ մի հանդուգն ու վճռական յեկվոր, վորը դեռ անհայտ եր ժողովրդին։ Նրանց ընտրությունն ընկալ Պուգաչովի վրա։ Նրանց համար գժվար չեր համոզել սրան։ Նրանք անհապաղ սկսեցին համախոներ հավաքել։

Հազանի կոճղավորի փախուստի մասին ուազմական կոլեզիան հայտնեց այն բոլոր տեղերը, ուր ըստ յենթագրությունների նա կարող եր թաքնվել։ Շուտով յենթագնդապետ Սիմոնովի իմացավ, վոր փախստականին տեսել են Յափկ փոքրիկ քաղաքի մոտերքը. գտնվող խուստորներում։ Պուգաչովին բոնելու համար զորախմբեր ուղարկվեցին, սակայն դրանում նրանք հաջողություն չունեցան. Պուգաչովը և նրա զիսավոր համախոները փնտրվելուց փրկվում եցին տեղից տեղ անցնելով և ժամ առ ժամ բազմապատկելով իրենց հրոսախումբը։ Նույն միջոցին արտասովոր լուրեր տարածվեցին... Շատ կազակներ կալանքի տակ առնվեցին։ Բոնեցին Միխայիլ Կոժեմյակովին, տարան պարետային կանցելլարիա և տանջելով նրանից կորզեցին հետեւյալ կարևոր ցուցմունքները. սեպտեմբերի սկզբին նա իր խուստորումն եր գտնվում, յերբ նրա մոտ յեկալ իվան Զարուբինը և

¹⁾ Նեկրասովիներ — Դոնի կազակների զորախումբ, վոր իր առաման նեկրասով առաջնորդությամբ մասնակցել ե Մագնայի համախոն Բուլավինի ապստամբությանը ընդդեմ Պյուտ Ա-ի և պարտությունից հետո նախ անցել Կոտընա և ապա Տաճկաստան — Դոբրուշա։

(Ծանոթ. «Կերջալի» կապակից)

վորպես գաղտնիք հայտնեց, վոր մի մեծանուն անձնավորություն գտնվում ե իրենց կողմերում։ Նա համոզում եր Կոժեմյակովին՝ նրան թաքնել իր խուստորություն։ Կոժեմյակովը համաձայնեց։ Զարուբինը մեկնեց և հենց նույն գիշերը լուսարացից առաջ մերձարձակ Տիմոֆեյ Մյասնիկովի և մի անհայտ մարդու հետ, բոլոր յերեքն ել ձիով։ Անծանոթը միջահասակ եր, լայնաթիկունք ու նիհար։ Նա հազար ուներ ուզտի ըրդից գործածած արմյակ, գլխին՝ կալմիկական բաց կապույտ գլխարկ և զինված եր հրացանով։ Զարուբինը և Մյասնիկովը գնացին քաղաք՝ ծողովրդին ազգարարելու համար, իսկ անծանոթը մնալով Կոժեմյակովի մոտ, հայտարարեց նրան, վոր ինքը կայսր Պյուտր III-ն ե, վոր իր մասին տարածված լուրերը սուտ են յեղել վոր նա պահակային սպայի ողնությամբ փախել ե կիեվ, ուր թաքնվել ե մոտ մի տարի, վոր հետո յեղել ե Յարեգագուռ և գաղտնի կերպով գտնվել ու ոռւսական զորքի մեջ վերջին տաճկական պատերազմի ժամանակ։ Վոր այստեղից նա հայտնվել ե Դոնում և հետո բոնվեած ե յեղել Յարեցինում, սակայն շուտով ազատվել ե իրեն հավատարիմ կազակների ձեռքով։ Վոր անցյալ տարի նա գտնվելիս ե լեղել իրգիզում և Յափկան փոքրիկ քաղաքում, ուր նորից ե բռնվել և տարվել Ղազան։ Վոր մի անհայտ վաճառականի կողմից յոթհարյուր ուուրլով կաշառված ժամանակում նորից բաց ե թողել իրեն. Վոր դրանից հետո նա մոտեցած ե յեղել Յափկայան փոքրիկ քաղաքին, սակայն մի կնոջ միջոցով իմանալով այն խստության մասին, վորը հիմա պահանջվում ե և քննում են անցագրերը, վերադարձել ե Սիզըանի ճանապարհը, վորով նա թափառել ե մի առ ժամանակ, մինչև վոր Տալովինան ուժեթափ նրան առել և Կոժեմյակովի մոտ են բերել Զարուբինն ու Մյասնիկովը։ Այս անհեթեթ պատմությունն անելով, ինքնակոչ սկսել ե բացատրել իր դիտավորությունները։ Նա մտադիր եր իր գեմքը բանալ կազակների զորքը և լուսական այս կողմության ակնորությունից և զար արյանանեղությունից խուստությունը համար։ Իսկ աշնանավորսին նա ուզում եր հայտնվել կազակների մեջ, ատամանին կապուել, ուղիղ գնալ Յափկայան փոքրիկ քաղաքի վրա, առնել այն և բոլոր ճանապարհներին ուղեկալներ զնել, վորպես գաղտնակից շամանակից շուտ իր մասին վոչ մի տեղ լուր չգնա, Անհաջողության գեղքում սակայն նա մտադիր եր ընկել Որուս, ամբողջ յերկիրը գրավել իր կողմը, ամե-

նուրեք նոր դատավորներ դնել (քանի վոր այժմյանների գործերում, նրա ասելով, ինքը շատ անարդարացիություն և նկատել) և թագավորի գահը բարձրացնել մեծ լշխանին: Խակ յես, ասում եր նա, այլեվս չեմ ուզում քագավորել: Կոժեմիկովի խուտորում Պուգաչովը մնացել և յերեք որ. Զարուբինը և Մյասնիկովը յեկել են նրա հետեւց և տարել նրան Ռուսիխինա Ռոսսաշ, ուր և նա մտադիր եր թաքնվել մինչև աշնանացին ձկնորսություն. Կոժեմիկովը, Կոնովալովը և Կոչուրովը ուղեկցել են նրան:

Կոժեմիկովին և նրա ցուցմունքով գործին մասնակից կազմակերին կալանավորելու արագացրեց գեպքերի ընթացքը: Սեպտեմբերի 18-ին Պուգաչովը Բուգորինյան առաջապահ պոստից մոտեցավ Յափկյան փոքրիկ քաղաքին յերեք հարյուր մարդուց բաղկացած ամբոխով և կանգ առավ քաղաքից յերեք վերստի վրա, Զաղան գետի այն կողմը:

Քաղաքը խրտում ընկավ: Դրանից քիչ ժամանակ առաջ խաղաղեցված բնակիչներն սկսեցին անցնել նոր խոռվարաների կողմը: Սիմոնովը Պուգաչովի գեմ ուղարկեց հինգ հարյուր կազակ, հետները զորավիզ գնելով հետեւակաղոր և յերկու թնդանոթ: Յերկու հարյուր կազակներ կապիտան Կոխովի հրամանատարությամբ ուղարկվեցին առաջ: Նրանց գեմ դուրս յեկավ մի ծիավոր կազակ, բարձր պահելով ինքնակոչի վրդովիչ նամակը: Կազակները պահանջեցին, վոր նամակը կարդացվի իրենց: Կոխովն ընդդիմացավ դրան: Խոռվություն ծագեց և զորախմբի կեսը տեղն ու տեղն անցավ ինքնակոչի կողմը և իր յետեւց քարշ տվեց հիսուն հավատարիմ կազակների, նրանց ձիերի սանձերը պինդ բռնած: Տեսնելով այս դավաճանությունը իր զորախմբում, նառամովը վերադարձավ քաղաք: Բոնված կազակներին տարան Պուգաչովի մոտ ու նրանցից տասնկմեկ հոգու, Պուգաչովի հրամանով կախեցին: Նրա սույն առաջին զոհերն ելին՝ հարյուրապետներ—Վիտոշնով, Չերտորոգով, Ռայխնով և Կոնավալով. հիսնապետներ—Ռուժենիկով, Տոլստով, Պոդյաչեվ և Կոլղակով. շարքայիններ—Սիդորովին, Լարզյանյեվ ու Չուկալին:

Մյուս որն Պուգաչովը մոտեցավ քաղաքին, սակայն տեսնելով, վոր իր գեմ զորք և դուրս գալիս, սկսեց նահանջել, տափաստանի վրա ցրելով իր հրոսախումբը: Սիմոնովը չհետապնդեց նրան, քանի վոր չեր ուզում կազակներ կարգել այդ նպատակի

համար, վախենալով նրանց դավաճանությունից, իսկ հետեւակազորը չեր համարձակվում հեռացնել քաղաքից, վորի ընակիչները պատրաստ եյին բունա սկսելու: Ամեն ինչի մասին նատեղեկացրեց Որենբուրգի նահանգապետին՝ գեներալ-պորուչիկ Ռեյնոսդորպին, նրանից թեթև զորք պահանջելով Պուգաչովին հետապնդելու համար: Սակայն ուղիղ հաղորդակցությունը Որենբուրգի հետ արդեն կտրված եր և Միմոնովի տեղեկագիրը նահանգապետին հասալ վոչ չուտ, քան մի շաբաթից:

Նոր խոռվարաներով բազմապատկված հրոսախմբով Պուգաչովը դիմեց ուղիղ գեպի իլեցկ փոքրիկ քաղաքը և այնտեղի իշխանության պետ ատաման Պորտնովին հրաման ուղարկեց—իրեն դիմավորելու դուրս գալ և միանալ իրեն: Նա կազակներին խոստացավ շնորհել իւաչ ու մորուք (իլեցկի, ինչպես և յափկյան կազակները բոլորն ել հնադավաններ ելին), գետեր ու մարդապետիններ, դրամ և պարեն, արձիճ ու վառող և մշտնջենական ազատություն, սպառնալով վրեժինդրություն՝ անհնապանդության գեպքում: Հավատարիմ իր պարտականությանը, ատամանը մտածեց դիմադրություն ցույց տալ, բայց կազակները կապեցին նրան ու զանգերի զողանջով և աղ ու հացով ընդունեցին Պուգաչովին: Վերջինս կախեց ատամանին, յերեք որ տոնեց իր հաղթությունը և հետն առնելով իլեցկի բոլոր կազակներին և քաղաքի թնդանոթները, գնաց Ռասսիականայա բերդի վրա:

Այդ յերկում շինված բերդերը վոչ այլ ինչ ելին, բայց յեթե գյուղեր, շրջապատված հյուսացանկով կամ փայտյա ցցապատերով: Մի քանի ծեր զինվորներ և տեղացի կազակներ յերկու կամ յերեք թնդանոթների պաշտպանության տակ ապահով ելին Որենբուրգի նահանգի և նրա սահմանների մոտ տափաստաների վրա ցրված վայրի ցեղերի նետերից ու նիզակներից: Սեպտեմբերի 24-ին Պուգաչովը հարձակվեց Ռասսիականայա բերդի վրա: Կազակներն այստեղ ել դավաճանեցին, Բերդը գրավվեց: Պարետին, մայոր Վելովսկուն, մի քանի սպանների և մի քահանայի կախեցին, իսկ կայազորի վաշտը և հարյուր հիսուն կազակ միացան խոռվարաներին:

Ինքնակոչի համբախ արագ տարածվում եր: Դեռ ևս Բուրգինսկի առաջապահ պոստից Պուգաչովը գրում եր կիրգիզ կայսակի խանին, իրեն անվանելով թագավոր Պլոտը III և պահանջելով նրա վորդուն իր մոտ՝ վորպես պատանդ, ու հարյուր

մարդուց բաղկացած ոժանդակ զորք: Նուրալիշանը Յափկի փոքրիկ քաղաքին մոտեցավ տեղական իշխանության հետ բանակցելու պատրվակով, վորին նա առաջարկեց իր ծառայությունները: Եթան շնորհակալություն հայտնեցին և պատասխանեցին, վոր հույս ունեն խոռվարաների հախիցը գալ առանց նրա ոգնության: Ինքնակոչի հայտնվելու առաջին տեղեկության հետ խանը Որենքուրգի նահանգապետին ուղարկեց նրա թաթարերեն գրած առաջին նամակը: «Մենք, ասիստաններում ապրող մարդիկ, — գրում եր Նուրալին նահանգապետին, — չգիտենք՝ մի ե այս մարդը, վոր ձին նստած շըջագայում ե գետափի յերկանքով. խաբերան յե արդյոք, թե՝ իսկական թագավորը Մեր կողմից ուղարկված սուրհանդակը վերադարձավ, հայտնելով, վոր չկարողացավ այդ իմանալ և վոր այդ մարդու մորուքը շեկ ե»: Ըստ սմին, ոգտվելով հանգամանքներից, խանը նահանգապետից պահանջում եր վերադարձնել ամանաթները, քշված անասունները և իրեն հանձնել հորդայից փախած ստրուկներին: Ույնսդորել շտապեց պատասխանել, վոր կայսր Պյոտր III-ի վախճանվելը ամբողջ աշխարհին ե հայտնի, վոր ինքը թագավորին տեսել ե դադաղի մեջ և համբուրել նրա մեռած ձեռքը: Նա հորդորեց խանին՝ ինքնակոչի դեպի կիրգիզյան տափաստանները փախչելու դեպքում՝ նրան հանձնել կառավարության ձեռքը, դրա փոխարքին խոստանալով թագուհու վորորմածությունը: Խանի խնդիրները կատարվեցին: Մինչդեռ Նուրալին բարեկամական հարաբերությունների մեջ մտավ ինքնակոչի հետ, չդադարելով հավատացնել Ռյանսդորպին իր՝ դեպի կայսրութիւն ունեցած ջերմեռանդության մեջ, իսկ կիրգիզներն սկսեցին պատրաստվել առպատակությունների:

Խանի տեղեկությունից անմիջապես հետո Որենբուրգում ստացվեց Յափյակի պարետի տեղեկագիրը, ուղարկված Սամարայի վրայով։ Ապա շուտով ստացվեց և Վելովսկու տեղեկագիրը՝ իրեցկ փոքրիկ քաղաքի առման մասին։ Ինեյնտորպը շտապեց միջոցներ ձեռք առնել ծավալվող չարիքը՝ դադարեցնելու համար։ Նա հրամանագրեց բրիգադիր բարոն Բիլովին գուրս դալ Որենբուրգից չորս հարյուր հետևակ զինվորներով և այրուծիով ու վեց դաշտային թնդանոթներով և շարժվել գեպի Յափյակի փոքրիկ քաղաքը, ճանապարհին մարդկի հավաքելով առաջապահ պոստերից ու բերգերից։ Վերիններ Ողերնայա շրջանի բրիգադիր բարոն Կորֆին հրամայեց վորքան կարելի յե շուտով գնալ դե-

պի Որենքուրդ. յենթագնդապետ Սիմոնովին՝ մայոր Նառամովին՝ գաշտալին զորախմբով և կազակներով ուղարկել Բիլովին միանալու համար. Ստավրոպոլի կանցելյարիային¹⁾ հրամայված եր Սիմոնովի մոտ ուղարկել էինդ հարյուր զինված կալմիկներ, իսկ մոտերքում ապրող բաշկիրներին և թաթարներին՝ վորքան կարելի յե շուտ հավաքվել և հազար մարդկանցով դիմավորել Նառամովին: Այս կարգադրություններից վոչ մեկը չկատարվեց: Բիլովը գրագեց Տատիշչևա բերդը և այն ե ուզում եր շարժվել դեպի Ողերնայա, սակայն ազդաեղից տասնեհինդ վերստի վրա գիշերը թնդանոթագին զարկեր լսելով նահանջեց, յենթագրելով, վոր Պուգաչովը արդեն զրավել ե բերդը: Ուեյնսդորպը յերկրորդ անգամ հրամայեց նրան փութալ խոռվարեներին ընկճելու. Բիլովը չլսեց և մնաց Տատիշչևայի մեջ: Կորքը արշավանքից հրաժարվում եր զանազան պատրվակներ բռնելով: Հինգ հարյուր զինված կալմիկների փոխարեն յերեք հարյուրն ել հավաքվեց: Նրանք ել ձանապարհից փախան: Բաշկիրները և թաթարները չեյին լսում հրահանգները: Իսկ մայոր Նառամովը և զորական ավագ Բորոդինը գուրս գալով Յափկյան փոքրիկ քաղաքից, հեռվից գնում եյին Պուգաչովի հետքերով և հոկտեմբերի 3-ին Որենքուրդ մտան տափաստանի կողմից՝ թշնամուն չտեսած:

Ըստսիփանայլից Պուգաչովը գնաց Նիժնե-Ոզերնայա բերդի վրա: Ճանապարհին նա հանդիպեց կապիտան Սուրինին, վորին Նիժնե-Ոզերնու պարետ մայոր Խարլովը ուղարկել երթելովսկուն ոգնության: Պուգաչովը նրան կախաղան հանեց և վաշտը միացավ խռովարաներին: Տեղեկանությունը Պուգաչովի մոտենալու մասին, Խարլովը Տատիշչես ուղարկեց իր ջահել կողջը՝ այնտեղի պարետ Յելագինի աղջկան, իսկ ինքը պատրաստվեց դիմագրելու: Կազակները դավաճանեցին նրան և անցան Պուգաչովի կողմը: Խարլովը մնաց սակավաթիվ զառամյալ զինվորների հետ: Սեպտեմբերի՝ լույս 26-ի գիշերը, նրա խելքին փշեց զինվորներին սիրտ տալու համար կրակել իր լերկությանոթներից և հենց այս դժբախտ զարկերն եցին, վոր կանգնեցրին նրան ոգնության գնացող Բիլովին: Առավոտյան Պուգաչովը լերեաց իր զորքի առջեց: Նա ձիով գնում եր իր զորքի

1) Սատարոսողի կանցելյալիան վարում եր Ուժնորոգի նահանգում բնակեցրած մկրտաված կալմէնների գործերը: Ծանոթ ենդինակի:

առջեմից: «Զգույշ, թագավոր», — ասաց նրան մի ծեր կազակ. «Թնդանոթը չի հարցնում, թե ում և սպանում»: — «Դու, ծեր մարդ, — պատասխանեց ինքնակոչը, — միթե թնդանոթները թագավորների համար են ձուլվում»: — Խարլովը մի զինվորից մյուսն եր վազում և հարամյում կրակել: Վոչ, վոք չլսեց նրան: Նա ճանկեց պատրուզը, կրակեց մի թնդանոթից և վրա ընկավ մյուսին: Նույն այդ ժամանակ խոռվարաբները գրավեցին բերդը, հարձակվեցին նրա միակ պաշտպանի վրա և վերքեր հասցրին նրան: Կիսամեռ դրության մեջ նա մտածեց փըրկանքով ազատվել և նրանց տարավ գեղի այն խրճիթը, ուր իր ունեցվածքն եր թաքցված: Այսինչ, բերդի հետևում արդեն դըրել եյին կախաղանը: Նրա առջև նստած եր Պուգաչովը, ընդունելով բնակիչների և կայազորի յերդումը: Նրա մոտ տարան վերքերից խելացնոր և այրունաքամզող Խարլովին: Նիզակի հարվածով դուրս ընկած նրա աչքը կախվել եր այտի վրա: Պուգաչովը հարամյեց կախաղան բարձրացնել նրան և նրա հետ, միգներ և կաբալերով պրապորշիկներին, մի գրագրի և թաթար Բիկրային: Կայազորն սկսեց խնդրել իր բարի պարետի համար, սակայն յահիլան կազակները՝ խոռվության պարագլուխները, անողոք եյին: Նահատակներից վոչ մեկը փոքրոգություն ցուց չտվեց: Մահմեդական Բիկրայը, բարձրանալով սանդուխքի վրա խաչ հանեց և իր վիզն անցկացրեց պարանի ողակը: Մյուս որը Պուգաչովը առաջ շարժվեց և գնաց Տատիշչևայի վրա:

Այս բերդի պետը գնդապետ Յելագինն եր: Կայազորը շատացել եր Բիլովի զորախմբով, վորը այդ բերդում իր ապահովությունն եր փնտուել: Սեպտեմբերի 27-ին Պուգաչովը յերեվաց բերդը շրջապատող բարձրունքների վրա: Բոլոր բնակիչները տեսան, թե նա ինչպես այնտեղ շարեց իր թնդանոթները և ինքն ուղղեց դրանք դեպի բերդ: Խոռվարաբները ձիերը մոտ քշեցին պարիսպներին, հորդորելով կայազորին—ջլսել բոյարներին¹⁾ և կամավոր կերպով անձնատուր լինել: Նրանց պատասխանեցին կրակոցներով: Զիավորները հետ քաշվեցին, Անոգուտ հրաձգությունը շարունակվեց կեսորից մինչև յերեկո, այդ ժամանակ բերդի մոտ գտնվող խոտի գեղերը բռնկվեցին, վոր վառել եյին պաշարողները: Հրդեհն արագությամբ հասավ փայտա ամրություններին: Զինվորները նետվեցին կրակը հանդցնելու: Պու-

գաչովն ոգտվելով իրարանցումից հարձակվեց մյուս կողմից: Բերդական կազակներն անձնատուր յեղան նրան: Վիրավորված Յելագինը և ինքը Բիլովը կատաղի դիմադրություն ցույց տվին: Վերջապես խոռվարաբները ներս խոռվարաբները ներս խոռվարաբների միջով: Պետերը բռնվեցին: Բիլովի գլուխ կտրեցին: Զադ Յելագինի կաշին քերթեցին: ճարպը հանեցին չարագործները և քսեցին իրենց վոտքերին: Նրա կոնջը թրատեցին: Նրանց աղջիկը՝ նախորյակին այրիացած Խարլովան՝ բերվեց Պուգաչովի մոտ, վոր կարգադրել եր մահապատժի յենթարկել իր ծնողներին: Պուգաչովն ապշած մնաց նրա գեղեցկությունից և գժբախտին պահեց իր մոտ վորպես հարձ, ի սեր նրա խնայելով վերջինիս լոթնամյա յեղորը: Մայոր Վելովսկու կինը, վոր փախել եր Ռասսիակայալից, նույնպես գտնվում եր Տատիշչեվայա բերդում: Նրան խեղղեցին: Բոլոր սպաներին կախեցին: Մի քանի զինվորների ու բաշկիրների դուրս բերին դաշտը և կարտեչով սպանեցին: Մյուսների մազերը խոռվարաբների և միացրին խոռվարաբներին: Յերեսուն թնդանոթ ընկավ հաղթող ձեռը:

Պուգաչովի հաջողությունների լուրերը մեկը մյուսի յետևից համառում եյին Որենբուրգդ: Բելովսկին հազիվ կարողացավ տեղեկացնել իւեցկի փոքրիկ քաղաքի առման մասին, յերբ Խարլովը լուր տվեց Ռասսիակայալի զրավման մասին: Դրանից անմիշակես հետո Բիլովը Տատիշչեվայա հաղորդեց նիմնե՛Ռուբենու առման մասին, մայոր Կրուգեն Զերնորեշենսկից հայտնեց Տատիշչեվոյի տակ տեղի ունեցող հրաձգության մասին: Վերջապես (սեպտեմբերի 28-ին) յերեք հարյուր թաթարներ, վորոնց բոնի ուժով հավաքել և ուղարկել եյին Տատիշչեվո, ճանապարհոց վերադանան, հետները տեղեկություն բերելով Բիլովի և Յելագինի վիճակի մասին: Հրդեհի արագությունից վախեցած Ռեյնսդորֆը խորհուրդ գումարեց Որենբուրգի գլխավոր աստիճանավորներից և նրանք հաստատեցեն հետևյալ միջոցառումները.

1) Մակմարա գետի վրայի բոլոր կամուրջները քանդել և փայտը թողնել ջրի հոսանքով:

1) Եօյրան—խոշոր աղնվական էին Ռուսաստանում. Ծ. թ.

2) Որենքուրդում պահվող լեհ լունֆեգերատների¹⁾ զինքը խւել և խստագույշն հսկողության տակ նրանց ուղարկել Տրոից կայա բներդը:

3) Զենք ունեցող տարաստիճանավորներին տեղեր նշանակել քաղաք պաշտպանելու համար, նրանց զնելով՝ ոբերպարհութիւնը գեներալ մայոր Վալենցուելանի տրամադրության տակ. մյուսները պետք է պատրաստ լինին հրդեհի դեպքում և գտնվեն մաքսավին դիրեկտոր Ոբուխովի իշխանության տակ:

4) Սեյխալան թաթարներին քաղաք բերել և նրանց զեկավարությունը հանձնարարել կոլեժունի խորհրդական Տիմաշովին:

5) Հըետանին հանձնել իսկականացն ստատսկի խորհրդական Ստարով՝ Միլյուկովի տնօրինությանը, վորը յերբեմն ծառայել եր հրետապորի մեջ:

Բացի գըանից Նեյնսովորպը մտածելով այլեւ Որենը բուրգի
ապահովության մասին, հրամայեց որեր-ալարեաթին կարգի բերել
քաղաքի ամրությունները և դնել պաշտպանողական վիճակի
մեջ; Իսկ Պուգաչովից դեռևս չգրավված փոքրիկ բերդերի կայ-
ություններին հրամավեց Որենը բուրգ գտ, նախապես թողնելով կամ
զուրը գցելով ծանրություններն ու վասովը:

Տառիշեն վլոյից սեպտեմբերի 29-ին, Պուգաչովը գնաց Զերնորեցենսկի քրա: Սուլն բերդի մեջ մնացել ելին մի քառակի ծեր զինվորներ՝ կապիտան Նեշայելի զլխավորությամբ, վորը բանել եք Որենբուրգում թագնված պարետի՝ մայոր Կրուզեցի տեղը: Առանց դիմադրության նրանք անձնատուր յեղան: Պուգաչովը կախեց կապիտանին, նրա սպասավոր ճորտ աղջկա գանգատի հիման վրա:

Պուգաչովը, թողնելով Որենքուրդն աջ կողմում, գնաց Սակմարսկ փոքրիկ քաղաքի վրա, վորի բնակիչներն անհամբեր սպասում եյին նրան։ Հոկտեմբերի 1-ին թաթարական Ղարզալե կոչված գյուղից նա այստեղ գնաց մի քանի կաղակ-Ղարզալե կոչված գյուղից նա այստեղ գնաց մի քանի կաղակ-

«Տերզում, ստանիցային մի խրձիթի մոտ գործեր ելին փոված և դրվածքը մի սեղան՝ աղ ու հացով, Տերտերը Պուդաչովի սպասում եր խաչով ու սրբոց պատկերներով։ Յերբ նա

1) Կոնֆեգերատաներ - շլայսիսայի (մանր պահնվականության) կամ նրա մէջ մասի զինված միլությունների (կոնֆեգերացիաների) անդամները հին և նեաստանությունները հիմնական նպատակն եր աղնվականություն իրավունքների ու արտանությունների պաշտպանությունը:

Այստեղ խոսքը լինաստանի անկախության ջատագով կոնֆեդերատների մասին է։ Ծ.

բերդ մտավ, սկսեցին զանգերը տալ. հավաքված մարդիկ գըշ-խարկները հանեցին և յերբ ինքնակոչը իջնում եր ձիուց իր յեր-կու կաղակների ոգնությամբ, վորոնք բռնել էին նրա թևատակե-րից, այն ժամանակ բոլորն ընկան յերեսն ի վայրը: Նա համբուրեց խաչը, համբուրեց աղն ու հացը և նստելով պատրաստ գրված ա-թոռին, առաց. վեր կացեմ, զափակներս: Հետո բոլորը համբուրեցին նրա ձեռը: Պուգաչովը հարց ու փորձ արեց քաղաքի կաղակ-ների մասին: Նրան պատասխանեցին, վոր վոմանք ծառալության մեջ են, մյուսներին իրենց ատաման Դանիլ Դոնսկոյի հետ տա-րել են Որենբուրգ և վոր միայն քսան մարդ և թողնված փոս-տային սայլակները քշելու համար, սակայն նրանք ել կորել են: Նա դարձավ քահանացին և սպառնագին հրամայեց նրան գտնել նրանց, ասելով. դու Տերեւեր ես, յեղիր ուրեմն տաման. դու յեկ բոլոր բնակիչները ձեր զլուխներով ինձ պատասխանուու յեք երանց համար: — Հետո նա գնաց ատամանի հոր մոտ, վորի տանը ճաշեր պատրաստված նրա համար: Թե վոր են վորդին այսեղ իիներ, առաց նա ծերունուն, ապա ձեր նաօք կլիներ տգնիվ ու պատվարժան. բայց ու աղ ու հացը մոռալվեց: Ել ինչ ատաման ե նա, վոր իր տեղը բողել փախել ե: — Ճաշից հետո, հարրած, նա այն եւ հրա-մայեց, վոր տանտիբոջը մահապատժի յենթարկեն, բայց նրա հետ յեկող կաղակները թախանձեցին խնայել. ծերունուն միայն շղթայեցին և գիշերը նստեցրին ստանիցայի Խրճիթի մեջ հսկո-ղության տակ: Մյուս որը յերեան բերված կաղակներին ներ-կայացրին Պուգաչովին: Նա գուրգուրանքով վարվեց նրանց հետ և միացրեց իր զորախմբին: Կաղակները հարցըրին նրան. վոր-քան հրամայի հետները մթերք վերցնելու: Վեցյեմ, պատաս-խանեց նա, մի փոքրիկ կտար հաց. դուք ինձ միայն մինչեվ Որեն-բուրգ կուղեկցեք: — Սույն այդ ժամանակ Որենբուրգի նահան-գապեաի ուղարկած բաշկերները շրջապատեցին քաղաքը: Պու-գաչովը գուրս յեկալ նրանց գեմ և առանց կովի բոլորին առավ իր զորքի մեջ: Սակամարի ափին նա կախեց վեց մարդ:

Սակմարա փոքրիկ քաղաքից յերեսուն վերտափ վրա գըտ-
նվում էր Պեհշիստենսկայա բերդը: Նրա կայազորի ամենալավ
մասը Բիլովը վերցրել եր Տատիշչեվայի վրա շարժվելու ժամա-
նակ: Սպաները և կայազորը դիմավորեցին հաղթողին: Ինքնա-
կոչն ըստ իր սովորության, զինվորներին իր զորքի մեջ ըն-
դունեց և առաջին անգամ խայտառակ վողորմածություն ցույց
տվեց սպաներին:

Պուգաչովը զորանում եր. յերկու շաբաթ անցավ այն որից,

յերբ նա հայտնվեց Յափկյան փոքրիկ քաղաքի մոտ մի բուռ
խոռվարեներով և արդեն ուներ մինչև յերեք հազար փոքրիկ
հետեակ ու այրուծի և քսանից ավելի թնդանոթներ։ Նա յոթ
բերդ եր գրավել կամ հանձնվել ելին նրան։ Ժամ առ ժամ ա-
նասելի կերպով շատանուած եր նրա զորքը։ Նա վճռեց ոգտվել
բախտից, և հոկտեմբերի Յ-ին, գիշերով Սակմարսկ փոքրիկ
քաղաքի մոտ անցավ կամուրջը, վորն անվնաս եր մնացել՝
հակառակ Ռենսդորֆի կարգադրության, և ձգվեց դեպի Որեն-
բուրգ։

Յերրորդ գլուխ

Կտավարության ձեռք առած սիջոցները։—Որենբուրգի դրությունը։
Ավազակ Խլոպուշան։—Պուգաչովն Որենբուրգի մոտ։—Բերդա ավանը։—Պու-
գաչովի համախոհները։—Գեներալ-մայոր Կառլ։—Նրա անհաջողությունները։—
Գնդապետ Զելնիչովի մահը։—Կառլ լքում և իր զորքը։—Բիբիկովը։

Դեպքերն Որենբուրգուա վատ ընթացք ելին ստանում։
Ժամ առ ժամ սպասում ելին յափկյան զորքի ընդհանուր խոռ-
վությանը։ Բաշկիրները՝ բորբոքված իրենց ավագներից (վո-
րոնց Պուգաչովը պարզեցել եր բուխարացիներից խլված ուղտե-
րըն ու ապրանքները) սկսեցին հարձակումներ զործել ուսւա-
կան գյուղերի վրա և ստվար խմբերով միանալ խոռվարաների
զորքերին։ Զինասպաս կալմիկները փախչում ելին առաջապահ
պոստերից։ Մորդվաները, չուվաշները, չերեմիսները գաղարեցին
յենթարկվել ուսւ իշխանությանը։ Տերունական գյուղացիները
բացահայտ կերպով ցուց ելին տալիս իրենց համախոհությունը
ինքնակոչին և շուտով վոչ միան Որենբուրգի, այլ և նրան
սահմանակից նահանգները վտանգավոր տատանման մեջ ըն-
կան։

Նահանգապետները՝ Ղազանի — Փոն-Բրայնտը, Սիրիրի—
Զիչերինը և Աստրախանի — Կրեչետնիկովը՝ Ռենսդորֆից ան-
միջապես հետո պետական ուազմական կոլեգիային տեղեկացրին
յափկյան անցքերի մասին։ Թագուհին անհանգստությամբ ուշք
դարձրեց առաջացած աղետի վրա։ Այն ժամանակվա հանգա-
մանքները սաստիկ նպաստում ելին անկարգություններին։
Զորքերն ամեն կողմից քաշվել ելին դեպի Տաճկաստան ¹⁾ և

1) Խոռքը հերթական ուսւածական պատերազմի մասին ե, վոր ոկրո-
վել եր դեռևս 1768 թ. և ավարտվեց 1774-ին Քյուչուկ-Կայնարջի հաշտությամբ,

ալեկոծվող Լեհաստան¹⁾: Խիստ միջոցառումները, վոր ձեռք եյին առնված ամբողջ Ռուսաստանում մինչ այդ ժամանակ ճարակող ժանտախտի դադարեցման համար, խաժամուժ ժողովրդի մեջ ընդհանուր դժգոհություն եյին առաջացրել: Ռեկուռտաների հավաքումը սաստկացրեց դժվարությունները: Մի քանի վաշտերի և եսկադրոնների հրամայված եր Մոսկվայից, Պետերբուրգից, Նովգորոդից և Բախմուտից շտապ կերպով շրժվել գեպի Դաշտան: Դրանց հրամանատարությունը հանձնվեց գեներալ-մայոր Կառին, վորը Լեհաստանում աչքի յեր ընկել իշխանության խիստ առաջադրանքները անշեղ կատարելու համար: Նա գտնվում եր Պետերբուրգում, ուե կրուտներ ընդունելու գործով: Նրան հրամայված եր իր բրիգադը հանձնել գեներալ-մայոր Նաշչոկինին և շտապել գեպի վտանգ սպառնացող աեղերը: Նրան միացրին գեներալ-մայորը Թրեյմանին, վոր մի անդամ արդեն խաղաղեցրել եր յափյան զորքը և լավ զիտեր նոր անկարգությունների թատերաբեմը: Շրջակա նահանգների պետերին հրամայված եր իրենց կողմից անհրաժեշտ կարգադրություններն անել: Հոկտեմբերի 15-ին մանիֆեստով ժողովրդին հայտարարված եր ինքնակոչի յերեան գալու մասին, հորդորելով նրանով հրապուրվածներին որ առաջ ձեռք քաշել հանցավոր մոլորությունից:

Դառնանք գեպի Որենբուրգ:

Սույն քաղաքում գտնվում եր մինչև յերեք հազար զինվոր և մինչև յոթանասուն հրանոթ: Այսպիսի միջոցներով կարելի յեր և պետք եր վոչնչացնել խոռվարաններին: Դժբախտաբար, ռազմական պետերի մեջ չկար մեկը, վոր իմանար իր զործը: Հենց սկզբից վախենալով, նրանք ժամանակ տվին Պուգաչովին զորանալու և իրենց զրկեցին հարձակողական շարժումներից: Որենբուրգն աղետալի պաշարում ունեցավ, վորի հետաքրքրական նկարագրությունը ավել է ինքը Ռենսոդորպը:

Մի քանի որ Պուգաչովի յերեան գալը անհայտ մնաց Որեն-

զորով Ռուսաստանը ստացավ մի շարք քաղաքներ Սև ծովի հյուսիսային ափերին (Ազով, Կերճ և այլն), ինչպես և զդալի ռազմատուդանք: Ծ. թ

1) 1768-76 թ. թ. Լեհաստանում տեղի ունեցան ցլյախտայի (մանր աղնը-վականության) մի մասին կոնֆերերատների ապաստամբական անհաջող շարժումները, ուղղված մի կողմից իր իսկ լեհական թագավորի, մյուս կողմից Ռուսաստանի վոտնաձությունների դեմ: Հետեւնքը յեղալ Լեհաստանի մեծ մասի բաժանումը Ռուսաստանի, Պրուսիայի և Ավստրիայի միջև: Ծ. թ.

քուրպի բնակիչներին, սակայն բերդերը գրավելու լուրը շուտով տարածվեց քաղաքում, իսկ Բիլովի շուտափուլքի առաջնադաշտում հաստատեց այս ճիշտ լուրերը: Որենբուրգում հուզմունք յերեաց: Կազակները սպառնալիքներ տալով տրտնջում եյին, սարսափահար բնակիչները խոսում եյին քաղաքը հանձնելու մասին: Բոնվեց խլբաման դրդիչը՝ պաշտոնաթող մի սերժանտ, գաղտնի ուղարկված Պուգաչովի կողմից: Հարցաքննության ժամանակ նա հայտնեց, վոր դիտավորությունը ուներ սրախողխող անել նահանգապետին: Որենբուրգի մերձակա գյուղերում սկսեցին խոռվարաններ յերևալ: Ռենսոդորպը հրապարակեց Պուգաչովի մասին տրված հայտարարությունը, ուր պարզում եր նրա իսկական կոչումը և նախկին հանցանքները: Դա գրված եր մթամած ու շփոթ վոճով: Նրանում ասված եր, վոր շարագործի մասին յափյան կողմերից լուրեր են հասնում, վոր նա այլ դասից ե, քանի վոր կա... բայց վոր նա իսկապես Դոնի կազակ Յեմելյան Պուգաչովն ե, իր նախկին հանցանքների համար մտրակով պատժված և յերեսին նշաններ են դրված: Սույն ցուցմունքն անսրդարացի յեր: Ռենսոդորպը հավատացել ե սուտ լուրերին և խոռվարանները հետո ցնծության մեջ եյին, նրան բամբասանքի մեջ նախատելով:

Թվում եր, Ռենսոդորպի ձեռք առած բոլոր միջոցները դառնում եյին ի վնաս նրա: Որենբուրգի բանտում այդ ժամանակ շղթայակապ պահավում եր մի չարագործ, վոր հայտնի յեր Խլոպուշա անունով: Քսան տարի նա ավաղակություն եր արել այն տեղերում, յերեք անգամ աքսորվել եր Սիբիր և յերեք անգամին ել միջոց եր գտել վախչելու: Ռենսոդորպի խելքին փչեց ոգտագործել բանիմաց տաժանակրին՝ նրա միջոցով Պուգաչովի հրոսակախումբը հորդորիչ մանիֆեստներ ուղարկելով: Խլոպուշան յերդիկ ճշտությամբ կատարել նրա հանձնարարությունները: Նա ազատվեց բանտից, ներկայացավ իրեն Պուգաչովին և անձամբ նրա ձեռը տվեց նահանգապետից ստացած բոլոր թղթերը: «Դիտեմ, ախաղերս, թե այդտեղ ինչ է գործած»— ասաց անգրագետ Պուգաչովը և նրան նվիրեց կես մանեթ դրամ և դրանից քիչ ժամանակ առաջ կախված մի կիրգիզի շորերը: Լավ ճանաչելով այն յերկիրը, ուր նա այդպես յերկար սարսափի եր տարածել իր ասպատակություններով, Խլոպուշան դարձավ նրան անհրաժեշտ մի մարդ: Պուգաչովը նրան գնդապետի կոչումը տվեց և հանձնարարեց թալանել և հուզել գործարանները: Խլո-

պուշան արդարացրեց նրա վստահությունը: Նա գնաց Սակմարա գետով, խոռվելով շրջակա գյուղերը. հայտնվեց Բուգովանսակի և Ստերլիտամացկի նավակայաններում և ուրաբան գործարաններում ու այնտեղից Պուգաչովին ուղարկեց թնդանոթներուումքեր և վառող, իր հրոսակախումբը շատացնելով գրանցված գյուղացիներով և բաշկիրներով՝ իր ավազակությունների ընկերներով:

Հոկտեմբերի 5-ին Պուգաչովն իր ուժերով բանակ գրեց կազակական մարզագետիների վրա, Որենբուրգից հինգ վերստ հեռու: Նա իսկույն և թափ առաջ շարժվեց ու թնդանոթային զարկերի տակ մի մարտկոց դրեց յեկեղեցու գավթում, հենց արվարձանի մոտ, իսկ մյուսը՝ քաղաքից դուրս գտնվող նահանգապետական տաճանը: Նա նահանջեց՝ սաստիկ հրաձգությամբ հետ մղված: Նույն որն և թափ նահանգապետի հրամանով արվարձանայրվեց: Կրակից փրկվեց միայն մի խրճիթ և Գյորգիեվսկայակոչված յեկեղեցին: Բնակիչներին տեղափոխեցին քաղաքը և բոլոր վնասի համար նրանց հատուցում խոստացվեց: Սկսեցին մաքրել քաղաքը շրջապատող խրամատը և հողապատնեշը պատել գերանակալներով:

Գիշերն ամբողջ քաղաքի շրջակայքը բոցավառվեցին ձմեռավա համար մթերած խոստադեղերը: Նահանգապետը չկարողացավ ժամանակին դրանք քաղաք կրել: Հրդեհիչների դեմ (արդեն մյուս որն առավոտյան) դուրս յեկավ մալոր նառումովը, վորը հենց նոր եր յեկել Յակովյան քաղաքից: Նա իր հետ ուներ հազար հինգ հարյուր մարդ ձիավոր ու հետեակ: Թնդանոթներով գիմավորված՝ նա փոխ-հրաձգություն ունեցավ և նահանջեց առանց վորեւ հաջողության: Նրա զինվորներն ահարեկված ելին, իսկ կազակներին նա չեր վստահում:

Ուեյնսդորպը նորից խորհուրդ գումարեց իր ռազմական և քաղաքացիական աստիճանավորներից և նրանցից գրավոր կարծիք պահանջեց. արդյոք նորից դուրս գալ ընդդեմ չարագործի, թե քաղաքի ամրությունների պաշտպանության ներքո նոր զորքերի սպասել: Այս խորհրդին իսկական ստատուկի սովետանիկ Ստարով-Միլյուկովը մենակ հայտնեց մի կարծիք, վոր պատիվ երերում զինվորականին. դուրս գալ խոռվարաների դեմ: Մյուսները վախենում ելին նոր անհաջողությամբ քաղաքի ոնակիչներին վատանգավոր հուսալքման մեջ գցել և միայն մտածում

Ային պաշտպանվել: Վերջին կարծիքի հետ համաձայնվեց և Ռեյնսդորպը:

Հոկտեմբերի 8-ին խոռվարաները դուրս յեկան քաղաքից յերեք վերստ հեռու գտնվող Մենովոյ դարձը թալաներու Խռովարաների դեմ ուղարկած զորախումբը ցրեց նրանց, տեղն ու տեղը սպանելով յերկու հարյուր մարդ և գերի բռնելով մինչև հարյուր վաթսուն հոգի: Ուեյնսդորպը, կամենալով ողափել այս դեպքից, վոր փոքր ինչ քաջալերել եր իր զորքը, ուզում եր հաջորդ որը դուրս գալ Պուգաչովի դեմ, սակայն բոլոր զորապետերը միաբերան հայտնեցին նրան, վոր զորքի վրա վոշ մի կերպ չի կարելի վստահել. հուսալքման և վարանման մեջ ընկած զինվորներն անսիրտ ելին կովում, իսկ կազակները հենց կովի գաշտում կարող ելին միանալ խոռվարաների հետ և նրանց դավաճանության հետևանքը կարող եր կործանարար լինել Որենսդուրդի համար: Ուեյնսդորպը չգիտեր ինչ անել: Այնուամենայնիվ նա կարողացավ համոզել ու ամաչեցնել իր ստորագըրաներին և հոկտեմբերի 12-ին նառումովը քաղաքից նորից դուրս բերեց իր անհուսավի զորքը:

Կոիվն սկսվեց: Պուգաչովի հետանին թվով գերազանց եր քաղաքից դուրս բերված թնդանոթներից: Որենբուրգի կազակները, անսովոր լինելով, վախենում ելին ոռումբերից և սեղմում քաղաքին՝ պատնեշի վրա դրված թնդանոթների պաշտպանության տակ քաշվելով: Նառումովի զորախումբն ամեն կողմից շրջապատված եր բազմաթիվ անկանոն խմբերով: Նա իր զորքը կառուել դասավորեց և սկսեց նահանջել, հրաձգություն պահապանելով թշնամու հետ: Կոիվը տեսեց չորս ժամ: Նառումովը կորցրեց հարյուր տասնյոթ մարդ սպանված, վիրավոր, կովի գաշտից փախած:

Որ չեր անցնում առանց փոխ-հրաձգությունների: Խռովարաները ձիավոր խմբերով շրջում ելին քաղաքի պարսպի մոտերքը և հարձակվում խարապանների վրա: Պուգաչովը մի քանի անգամ իր բոլոր ուժերով մոտեցավ Որենբուրգին: Սակայն նա դիտավորություն չուներ հարձակմամբ վերցնելու այն: «Մարդկանի կորցնի»—ասում եր նա Սակմարսկի կազակներին, — «այլ քաղաքը սովից կկոտորեմ», Քանիցս նա միջոցներ գտավ իր գրդովեցուցիչ թղթերը բնակիչներին հասցնելու: Քաղաքում

1) Կարրե(Քր.)—քառանկունի ձեռք ճակատած զորք: Ծ. թ.

բանեցին մի քանի չարագործների, ուղարկված ինքնակոչի կողմից. նրանց մոտ գտան վառող և պատրույգ:

Շուտով Որենը գումար զգացվեց խոտի պակասություն: Զորքից և բնակիչներից խլվեցին լզար և աշխատանքի անընդունակ ձիերը և ուղարկվեցին մասմբ իլեցկայա Զաշշիտայի և Վերխո-Յափուկի բերդը, մասմբ Ուփայի գավառը: Սակայն, քաղաքից մի քանի վերստի վրա խոռոշությամբ բռնված գյուղացիներն ու թաթարները ձիերը բռնեցին, իսկ յերաժակը քշող կազակներին ուղարկեցին Պուգաչովի մոտ:

Աշնանային ցուրտը սովորականից շուտ վրա հասալ: Հոկտեմբերի 14-ից արդեն սկսվեցին սառնամանիքները. 16-ին ձյուն յեկավ: 18-ին Պուգաչովը կրակ տալով իր բանակատեղը, բռնոր ծանրություններով հետ գնաց Յափուկի գեպի Սակմարա և տեղավորվեց Բերդա ավանի մոտ, Սակմարայի ամառային ճամբի վրա, Որենը ուղարկեց յոթ վերստ հեռու: Այդտեղից նրա հեծելադետերը չելին գաղարում քաղաքը անհանգստացնել, հարձակվել խարապանների վրա և կալազորը պահել մշտական յերկուղի մեջ:

Նոյեմբերի 2-ին Պուգաչովը բոլոր ուժերով նորից մոտեցավ Որենը ուղարկեցին և քաղաքի շուրջն ամեն կողմից մարտկոցներ դնելով, սաստիկ կրակ տեղաց: Քաղաքի պարսպից նրան պատասխանեցին նույն կերպ: Այդ ժամանակ նրա հետևակալորից հազար մարդ գետի կողմից թափնվելով արվարձանի ներքնահարձերում համարյա պարսպի և գերանականների մոտ, կրակում ելին հրացաններից և սայդակներից¹): Ինքը Պուգաչովն երանաց, Դաշտային զորախմբի հրացանաձիգները նրանց դուրս քցեցին արվարձանից: Քիչ մնաց վոր Պուգաչովը գերի ընկներ: Յերեկոյան հրաձությունը հանդարավեց, սակայն խոռվարաններն ամբողջ գիշերը հրաձությամբ ելին պատասխանում մայր յեկեղեցու ժամացույցի գանդերին—ամեն ժամ մի կրակոց անելով:

Մյուս որը հրաձությունը նորոգվեց չնայած ցըտին ու բուրուանին, Խոռվարանները խարույկ վառեցին յեկեղեցում, ալբեցին հրդեհված արվարձանից մնացած խրճիթը և հերթով տաքանում ելին, Պուգաչովը թնդանոթը զրեց յեկեղեցու շեմքի վրա, իսկ մյուսը հրամայեց բարձրացնել զանդերին:

1) Սալդակ կոմ սաադակ (թաթար. լ.)—կապարճ, սակա՝ նետ-աղեղ: Ծ. թ.

Քաղաքից մի վերստի վրա գտնվում եր բարձր մի նշավակը վոր հրետանացին վարժությունների ժամանակ ծառայում եր իրեւ նպատականշան: Խոռվարաններն այնտեղ հաստատեցին իրենց գլխավոր մարտկոցը: Հրաձությունն յերկուստեք զարունակվեց ամբողջ գիշերով: Գիշերով Պուգաչովը նահանջեց աննշան կորուստներ կրելով և վնաս չհասցնելով պաշարվածներին: Առավոտան կաղակների պահպանության տակ քաղաքից կալանավորներ ուղարկվեցին նշավակը և մյուս ամրությունները կործանելու և խրճիթը քանդելու համար: Յեկեղեցում, ուր խոռվարաններն իրենց վիրավորներն ելին բերում, սալիատակի վրա տեղ-տեղ յերեռում եր լճացած արյուն: Սրբապատակերներից պոկված ելին շրջանակները, սեղանի ծածկոցները ծվեն-ծվեն ելին արել: (Յեկեղեցին ապականված եր մինչև իսկ մարդկանց ու ձիերի արտաթորություններով):

Ցուրտը սաստկանում եր: Նոյեմբերի 6-ին Պուգաչովը յաիկյան կաղակների հետ իր նոր բանակատեղից անցավ գեպի ավան: Բաշկիրները, կալմիկները և գործարանային գյուղացիք մնացին նախկին տեղում՝ իրենց կիրիտկաների մեջ և գետնափոր տներում: Հեծալադետերը, հարձակումներն ու հրաձությունը չելին գաղարում: Որորի վրա Պուգաչովի ուժերն ավելանում ելին: Նրա զորքը արդեն բաղկացած եր քսան և հինգ հազար հոգուց: Կորիզը յափույն կաղակներն ելին և բերդերում գերի բռնած գյուղացիները, սակայն նրանց շուրջն անհաշիվ բաղմությամբ խոնվում ելին թաթարներ, բաշկիրներ, կալմիկներ, լունտարար գյուղացիները, փախստական տաժանակիրներ և ամեն տեսակ շրջմոլիկներ: Այս բոլոր սրիկաները մի կերպ զինված ելին—մարդ նկազով, վարդ ատրճանակով, վարդ սպայական սուսերով: Վոմանց բաժանել ելին սվիններ, հազված յերկար ձողերի ծայրերին, մյուսները կրում ելին գավազաններ: Մեծ մասը վոչ մի զենք չուներ. Զորքը բաժանված եր գնդերի, լուրացանչյուրը կազմված հինգ հարյուր հոգուց: Միայն յափույն կաղակներն ելին ոռնիկ ստանում, մնացածները բավականանում ելին թալանով: Վաճառվում եր պետական ողին: Զիեր և խառ ձեռք ելին բերում բաշկիրներից: Փախուստի համար հայտարարված եր մահապատիժ: Տասնապետն իր գլխով պատասխանատու եր իր փախստականի համար: Հաստատված ելին մասնավոր հեծելադետեր և պահակներ: Պուգաչովը խստությամբ հետեւում եր նրանց ճշտակատարությանը, ինքը ձիով շրջելով

Նայում եր նրանց, հաճախ և գիշերով։ Վարժությունները (մանավանդ հրետանալին) տեղի եյին ունենում համարյա ամեն որ։ Ժամասացությունը կատարում եյին ամեն որ։ Մաղթան-քի ժամանակ հիշատակում եյին թագավոր կայսր Պյոտր Ֆյոդորովիչն։ Պուգաչովը ինքը աղանդավոր լինելով յերբեք չեր գնում յեկեղեցի։ Յերբ նա ձին նստած անցնում եր բազարով կամ Բերդայի փողոցներով, ապա միշտ պղնձե դրամ եր շպըրտում ժողովրդին։ Դատու դատաստան կտրում եր իր խրճիթ առջև բազկաթոռի վրա նստած։ Նրա կողքը կանգնած եյին լինում յերկու կաղակներ, մեկը գուրզը ձեռին, մյուսը արծաթե կացինը։ Նրան մոտեցողները խոնարհվում եյին մինչև գետին և յերեսնին խաչակնքելով համբուրում ձեռքը։ Բերդա ավանը սպանությունների և անառակությունների վորչ եր։ Բանակատեղը լի եր սպաների կանանցով ու աղջիկներով, վորոնց տվել եյին ավազակներին՝ անսարգելու։ Մահապատիմները տեղի եյին ունենում ամեն որ։ Բերդայի մոտ փոսերը լիքն եյին գնդակահարված, խեղդված, քառահատված նահատակներով։ Ավազակների հրոսակախմբերը դիմում եյին ամեն կողմ, հարբեցողություն անելով գյուղերում, թալանելով պետական գանձատունը և աղնվականների ունեցած-չունեցածը, սակայն ձեռք չտալով գյուղացիական սեփականությանը։ Համարձակները ձիերը քշում եյին մինչև Որենբուրգի գերանակալները, վոմանք գլխարկները նիզակի ծայրին հազցնելով գոռում եյին։ «Պարոն կազակներ, ժամանակ ե, վոր խելքի գամ յել ծառայեք բազավոր Պյոտր Ֆյոդորովիչին»։ Մյուսները պահանջում եյին, վոր իրենց տրվի Մարտյուկա Բորոդինը (զուրական մի ավագ, վորոն Որենբուրգ եր նեկել Յահկյան քաղաքից՝ Նայումովի զորախմբի հետ միասին) և կազակներին իրենց մոտ հյուր եյին կանչում ասելով։ «Մեր տիրոջ մոր զինին բոլ ե։ Քաղաքից նրանց գեմ զուրս եյին գալիս ձիավոր մարդիկ և սկսվում եյին հրաձգությունները, յերեմն բավական տաք։ Հաճախ և ինքը Պուգաչովն եր հայտնվում հենց այդտեղ, իր խիզախությամբ պարծենալով։ Մի անգամ նա ձին քեց՝ հարբած, գըլ-խարկը կորցրած և թամբի վրա յերերվելով,—ու քիչ մնաց գերի ընկներ։ Կազակները փրկեցին նրան և հետները քաշեցին տարան՝ ձգելով նրա ձիու սանձը։

Պուգաչովն ինքնիշխան չեր։ Յահկյան կազակները՝ բունտի պարագլուխները ուղղություն եյին տալիս յեկորի գործերին,

վորն այլ արժանիք չուներ, քան յեթե մի քանի ռազմական գիտելիքներ և արտասովոր հանդինություն։ Առանց նրանց համաձայնության նա վոչինչ չեր ձեռնարկում, մինչդեռ նրանք հաճախ գործում եյին առանց նրա գիտության, իսկ յերբեմն և հակառակ նրա կամքին։ Դրանք արտաքուստ պատիվ եյին ցույց տալիս նրան ժողովրդի ներկայությարմ, նրա հետեւց գնում եյին գլխաբաց և ծունկի գալիս, սակայն յերես առ յերես նրա հետ վարդում եկին ինչպես ընկերոջ և միասին հարբեցողություն եյին անում, նրա ներկայությամբ գղակները գլխներին և սոսկ շապիկով նստած ու բուրլակական¹⁾ յերգեր յերգելով։ Պուգաչովը դժոն եր նրանց խնամատարությունից։ Տեղու նեղ ե, ասել եր նա Դենիս Պյանովին, նրա կրտսեր վորդու հարսանիքին քեզ անելիս։ Զհանդուրժելով կողմնակի վորմե ազդեցություն իրենց ստեղծած ցարի նկատմամբ, նրանք չեյին ուզում, վոր ինքնակոչը այլ սիրելիններ ու հավատարմատարներ ունենաւ։ Պուգաչովն իր բունտի սկզբում ճոտը վորպես գրագէր եր վերցը բել սերժանտ Կարմիցկուն, ներելով նրան հենց կախաղանի տակ։ Կարմիցկին շուտով դարձավ նրա սիրելին։ Տատիշչեվան վերցնելիս յահկյան կազակները խեղդամահ արին նրան և վզից մի քար կապած գցեցին գետը։ Պուգաչովը հետաքրքրվեց նրա մասին։ Նա գնաց, պատասխանեցին նրան, իր մոր մա՞թիկի հօսանելով ցած։ Պուգաչովը լուռ թափահարեց ձեռքը։ Զահել Խարլովան դժբախտություն ունեցավ ինքնակոչին իր հետ կապելու։ Վերջինս նրան պահում եր իր բանակատեղում, Որենբուրգի մոտ։ Միայն նա իրավունք ուներ ամեն ժամանակ նրա կիբիտկան մանելու։ Խարլովայի խնդրով ինքնակոչը հրաման ուղարկեց Ողերնայա—թաղելու բերդը վերցնելիս իր կախած մարդկանց մարմինները։ Նա հարուցեց խանդու չարագործների կասկածը և Պուգաչովը, զիջելով նրանց պահանջին, իր հարձը հանձնեց նրանց։ Խարլովան և նրա յոթնամյա յեղբայրը գնդակահարվեցին։ Վիլավոր վիճակում նրանք սողալով մոտեցան և գրկեցին միմյանց։ Թփերի մեջ նետված նրանց մարմիններն յերկար ժամանակ մնացին նույն վիճակում։

Գլխավոր խոռվարարների թվում աշքի յեր ընկնում Զա-

1) Բուրլակներ—այսպես ելին կոչվում վորդա գետի վրա և նրա նավակյաններում աշխատող բանկարները, վորոնք ընդհանուր մի պարանից կամ վոկոլց լծված, ափով, հոսանքն ի վեր քաջում եյին բեռնատար նավերը։ Ծ. թ.

ըուբինը (նույն ինքը և Զիկան), վոր բունտի սկզբից Պուգաչովի գործակիցն ու խնամակալն եր: Նա փելդմարշալ եր կոչվում է առաջինն եր ինքնակոչից հետո: Ովչիննիկովը, Շիդայեվը, Լիսովը և Զումակովը կրում եյին այն աղնվատոհմ իշխանների անունները, վորոնք այն ժամանակ շրջապատել եյին Յեկատերինայի գահը. Զիկան կոչվում եր կոմս Զերնիշեվ, Շիդայեվը՝ կոմս Նորոնցով, Ովչիննիկովը՝ կոմս Պանին, Զումակովը՝ կոմս Որլով: Թնդանոթաձիգ պաշտոնաթող կապրալ Բելոբորոդովը վայելում եր ինքնակոչի լիակատար վստահությունը: Նա Պաղուսովի հետ միասին վարում եր անգրագետ Պուգաչովի գրավոր գործերը և բունտարարների հրոսակախմբերում մտցրեց խիստ կարգ ու հնազանդություն: Պերֆիլեվը, վոր բունտի սկզբում՝ Պետերուրուրումն եր գտնվում յաիկան զորքի գործերով, կառավարությանը խոստացավ կազակներին հնազանդեցնել և իրեն Պուգաչովին հանձնել արդարադատության ձեռքը. սակայն Բերդա գալով դարձավ ամենակատաղի բունտարարներից մեկը և իր բախտը կապեց ինքնակոչի բախտի հետ: Մարակով ծեծ կերած, դահճի ձեռքով խարանված և մինչև կրծիկները պատոված քթածակերով ավազակ Խլոպուշան Պուգաչովի սիրելիներից մեկն եր: Ամաչելով իր այլանդակություններից, նա ցանց եր կրում իր գեմքին կամ ծածկում եր թեքով, վորպես թե պաշտպանվում եւ սառնամանիքից: Ահա թե ինչպիսի մարդիկ եյին ցնցում պետությունը:

Մինչ այս, մինչ այն Կառը հասավ Որենքուրգի նահանգի սահմանը: Ղազանի նահանգապետը դեռևս մինչև նրա գալը կարողացավ հավաքել մի քանի հարյուր կայազորային զինազատ և աքսորաբնակ զինվորներ և նրանց տեղավորել մի մասը Կիչուեսկի Փելզանցի¹⁾ մոտ, մի այլ մասը՝ Զերեմշան գետի յերկանքով, Երշուեկից մինչև Ստավրոպոլ տանող ճանապարհի վրա: Վոլգայի վրա գտնվում եյին յերեսուն շաբաքյին զինվորներ մի սպացի հրամանատարության տակ՝ ավազակներին բռնելու համար: Նրանց հրամայված եր հետևել բունտարարների շարժումներին: Բրանտը գրեց Մոսկվա, գեներալ-անշեֆ իշխան Վոլկոնսկուն, նրանից զորք պահանջելով: Սակայն Մոսկվայի կայազորն ամբողջվին կարգված եր ուղղումներին²⁾: Իրենց նշանակած

1) Յ ե լ դ շ ա ն ց (գերմ. առզմ) — պաշտային փոքրիկ ամրոց, ուղղուտ: Ծ. թ.

2) Ուղղումներ — սուրակոչիկներ: Ծ. թ.

տեղերը տանելու համար, իսկ Մոսկվայում գտնվող Տոմսկի գունդը պահակներ եր պահում այն փակուղիների վրա, վորոնք հիմնված եյին 1771 թվին ճարակող ժանտախտի ժամանակ: Իշխան Վոլկոնսկին կարող եր ուղարկել միայն յերեք հարյուր շարքայիններ մի թնդանոթով և նրանց իսկույն եեթ սայլերով ուղարկեց Ղազան:

Կառը հրամայեց Սիմբիրսկի պարետ գնդապետ Զերնիշովին, վորը Սամարայի վրայով դեպի Որենքուրգ եր գնում, վորքան կարելի յե շուտով գրավել Ժատիշչելվան: Նա մտադիր եր, հենց վոր ուղղումների ընդունելության համար կալուգայում գտնվող գեներալ-մայոր Ֆրեյմանը դա, նրան ուղարկի Զերնիշովին ուղղության: Կառը չեր կասկածում, վոր հաջողություն կունենա: «Միայն յերկուղ ունեմ, — գրում եր նա կոմս Զ. Գ. Զերնիշովին, — վոր սույն ավազակներն իմանալով զորախմբերի մոտենալու մասին, նրանց մոտ չթողնելով իրենց, փախուստի դիմեն նույն տեղերով, վորտեղից հայանվել են: Նա դժվարությունները նախատեսնում եր միայն Պուգաչովին հետապնդելու մեջ ձմռան և քիչ ձիավորներ ունենալու պատճառով:

Նույնը սկզբին չսպասելով վոչ հրետանուն, վոչ Սիմբիրսկից իրեն ուղարկված հարյուր յոթանասուն գրենադերներին, վոչ ել Ուֆայից նրան ուղղված զինված բազկիրներին և մեշերյակներին¹⁾, նա սկսեց առաջ խաղալ: Ճանապարհին, Որենքուրգից հարյուր վերստի վրա նա իմացավ, վոր Պուգաչովի ուղարկած աքսորական ավազակ Խլոպուշան թնդանոթներ ձուլելով Ովզանո-Պետրովսկի գործարանում և հուզելով գրանցված գյուղացիներին²⁾ ու շրջակա բաշկիրներին, վերադառն

1) Մ ե շ ե ր յ ա կ ն ե ր — Հին Ռուսում ապօղ մի փոքրիկ ազգություն եր, վոր բնակություն եր հաստատել Ռյազանի, Տամբովի, Սիմբիրսկի ու Պենզայի նահանգներում, մասամբ և նախկին Ղազանի թագավորության մեջ: Մեշերյակները յենթակա եյին մի կողմից թաթարների, մյուս կողմից բաշկիրների ու սանավանդ ուղևների ուժեղ ազգեցությանը: Մինչ հեղափոխական Ռուսաստանում նրանց հաւաքել են թաթարացած ֆիններ, ապա նաև գերազանցագես մոնղոլա-թյուրքական գերազ ուժված մի ժողովուրդ: ԽՍՀ Միության սահմաններում հիմա այս անունով չկա ժողովուրդ — նույն փայքերում մնացել են սոսկ (մի փոքրիկ խմբագորուս) թաթարներ, վորոնք համար գում են մեշերյակների հետեւղորդները: Ծ. թ.

2) Լեռնադորժարանալին կամ ինսնային արդյունաբերության գործարաններին կցված (գրանցված) գյուղացիները կազմում եյին պետական գյուղացիների մի մասը, սակայն այն տարբերությամբ, վոր իրենց հարկերը դրամով չեցին վճարում, այլ պարտավոր եյին պետական կամ մասնավոր լեռնագործարաններում աշխատանքով հատուցել այդ հարկերը կամ նրանց մի մասը: Ծ. թ.

Նուև և Որենբուրգի մոտ: Կառը փութաց կտրել նրա ճանապարհը և նոյեմբերի 7-ին՝ սեկունդ-մայոր Շիշկինին չորս հարյուր շարքայինների և յերկու թնդանոթների հետ ուղարկեց Յուզեկու գյուղը, իսկ ինչք գեներալ ֆրեյմանի և պրեմյեր-մայոր Փ. Վարնստենի հետ, վորը հենց նոր եր հասել Կալուգայից, դուրս տեղակալ Սարմանաւայից: Հենց Յուզեկոյի տակ Շիշկինի դեմ դուրս յեկան վեց հարյուր խոռվարաներ: Նրա հետ գտնվող թաթարները և զինված գյուղացիք իսկույն անձնատուր յեղան, Շիշկինը սակայն մի քանի թնդանոթացին զարկերով ցըեց այս խուժանը: Նա գրավեց գյուղը, ուր Կառը և ֆրեյմանը հասան գրշերքա ժամ 4-ին: Զորքն այնպես եր հոգնած, վոր անհնար եր մինչև իսկ հեծելագետեր նշանակել: Գեներալները վճռեցին սպասել լուսանալուն, վորպեսզի հարձակվեն բունտարաների վրա և արշալույսին իրենց առջև տեսան միևնույն խուժանը: Խոռվարաներին հորդորիչ մանիֆեստ ուղարկեցին. Նրանք ընդունեցին այն, սակայն ձիերը հետ քշեցին հայոցյանքով, ասելով վոր իրենց մանիֆեստներն ավելի ճիշտ են և սկսեցի կրակել իրենց մոտ յեղած թնդանոթից: Նրանց նորից ցըեցին... այդ ժամանակ Կառն իր թիկունքում լսեց թնդանոթային չորս հեռավոր զարկեր: Նա վախեցավ և սկսեց շտապով նահանջել, կարծելով, թե իրեն կտրել են Ղազանից: Այդ միջոցին յերկու հազարից ավելի խոռվարաներ ամեն կողմից վրա տվին սրարշավ և կրակ բացին ինն թնդանոթներից: Ինչք Պուզաչովն եր առաջնորդում նրանց: Խոռվուշան կարողացավ միանալ նրան: Դաշտերում ցաք ու ցրիվ գալով թնդանոթային զարկի տարածության վրա, նրանք զերծ եյին ամեն տեսակի վտանգից: Կառի այլուձին հոգնած եր ու սակավաթիվ: Խոռվարաները, ունենալով լավ ձիեր, հետեւակազորի հարձակման ժամանակ հեռանում եյին, արագ կերպով իրենց թնդանոթները մի սարից մյուսը տեղափոխելով և այսպիսով տասնեյթ վերստ ուղեկցում եյին նահանջող Կառին: Ամբողջ ութ ժամնա պաշտպանվում եր, կրակ տեղալով իր հինգ թնդանոթներից, ձգեց իր գումակը և կորցրեց (յեթե հավատանք նրա զեկուցագրին) վոչ ավելի քան հարյուր քսան ժամը սպանված, վիրավոր և փախած: Ուփայից սպասվող բաշկիրները շկային. Քիչ հեռու, իշխան Ուրակովի հրամանատառության տակ գտնվում է իր հինգ վորով մեջ եր ուղարկել Սիմբիրսկից, ուր նրանք գտնվում եյին ուեկրուտներին իրենց տեղերը ուղեկցելու գործով: Նա չգիտեր ինչ աներ, նահանջեր գեպի Պերեվոլոցկայա, թե շտապեր Որենսուրդ, ուր նախորյակին նա զեկուցագրի եր ուղարկել իր մոտենալու մասին: Սույն ժամանակ նրան ներկայացան հինգ կազակներ և մի զինվոր, վորոնք ինչպես հավատացնում եյին, փախել եյին Պուզաչովի կայանից: Նրանց մեջ եր գտնվում կազակական հարյուրապետ և պատգամավոր Պաղութովը: Նա Զերնիշովին հավատացրեց, վոր ինքը ջանադիր ե դեպի կառավարությունը, վորպես ապացույց ներկայացնելով իր պատգամավոր բաշկան շքանշանը և խորհուրդ տվեց անհապաղ գնալ Որենսուրդ, առաջարկելով իր ծառայությունը՝ նրան անվտանգ տեղերով անցկացնելու: Զերնիշովը հավատաց նրան ու նույն ժամին և առանց թմբկահարության դուրս յեկավ Զերնորեշենսկից:

Բուտսներ, բարձրածայն տրտնջում եյին և պատրաստ եյին անձնատուր լինելու, կոփվներին չմասնակցած ջահել սպաները շեյին կարողանում սիրո տալ նրանց: Սիմբիրսկից, պորուչիկ կարտաշովի հրամանատարությամբ սայլակներով ուղարկած գրենադերներն այնպիսի անհոգությամբ եյին առաջ շաբթվում, վոր մինչև իսկ նրանց հրացանները չելին լցված և յուրաքանչյուրը քնած եր իր սայլակի վրա: Նրանք անձնատուր յեղան առաջին չորս թնդանոթային զարկերից հետո, վոր Կառը առավոտյան դեմ լսել եր Յուզեկոյի գյուղից:

Կառը հանկարծ կորցրեց ինքնավստահությունը: Իր կրած կորուստների մասին տեղեկացնելով հանդերձ, նա առաջարկեց ուղարկան կոլեգիային, վոր Պուզաչովին ընկճելու համար պետք են վոչ թե թույլ ուժեր, այլ ամբողջ գնդեր, հուսալի ալյուծի և ուժեղ հրետանի: Նա անհապաղ հրաման ուղարկեց գնդապետ Զերնիշովին՝ դուրս չգալ Պերեվոլոցկայա բերդից և աշխատել ամբանալ այդտեղ, հետագա կարգադրությունների սպասելով: Սակայն Զերնիշովի ուղարկած սուրհանդակը այլևս չկարողացավ հասնել նրան:

Խոյեմբերի 11-ին Զերնիշովը դուրս յեկավ Պերեվոլոցկայա բերդից և 13-ին գեկերով հասավ Զերնորեշենսկայա: Այստեղ Սակամարսկի ատամանի բերած իլեցկայա յերկու կազակներից նա տեղեկություն ստացավ Կառի պարտության և հարյուր յոթանասուն գրենադերների գերի ընկնելու մասին: Վերջին ցուցմունքի իսկության մեջ Զերնիշովը չեր կարող կասկածել գրենադերներին նա ինքն եր ուղարկել Սիմբիրսկից, ուր նրանք գտնվում եյին ուեկրուտներին իրենց տեղերը ուղեկցելու գործով: Նա չգիտեր ինչ աներ, նահանջեր գեպի Պերեվոլոցկայա, թե շտապեր Որենսուրդ, ուր նախորյակին նա զեկուցագրի եր ուղարկել իր մոտենալու մասին: Սույն ժամանակ նրան ներկայացան հինգ կազակներ և մի զինվոր, վորոնք ինչպես հավատացնում եյին, փախել եյին Պուզաչովի կայանից: Նրանց մեջ եր գտնվում կազակական հարյուրապետ և պատգամավոր Պաղութովը: Նա Զերնիշովին հավատացրեց, վոր ինքը ջանադիր ե դեպի կառավարությունը, վորպես ապացույց ներկայացնելով իր պատգամավոր բաշկան շքանշանը և խորհուրդ տվեց անհապաղ գնալ Որենսուրդ, առաջարկելով իր ծառայությունը՝ նրան անվտանգ տեղերով անցկացնելու: Զերնիշովը հավատաց նրան ու նույն ժամին և առանց թմբկահարության դուրս յեկավ Զերնորեշենսկից:

Պաղուըովը նրան տանում եր լեռներով, հավատացնելով, վոր Պուգաչովի առաջավոր պահակները հեռու յեն և վոր յեթե լուսաբացին իրենք տեսել են նրան, ապա վտանգն արդեն անցած կլինի և նա կկարողանա անարգել մտնել Որենբուրգ։ Առավոտյան Զերնիշովը հասավ Սակմարա և Մայակ կոչված բնասահմանավարի մոտ. Որենբուրգից հինգ վերստի վրա սկսեց անցնել գետի սառուցյով. Նրա հետ կար հազար հինգ հարյուր դին վոր և կազակներ, հինգ հարյուր կալմիկներ և տասներկու թընդանոթ։ Կապիտան Ռժեվսկին առաջինն անցավ հրետանու և թեթև զորքի հետ. նա խոկույն եեթ իր հետ վերցնելով լերեք կազակներ, ուղկորվեց գեպի Որենբուրգ և ներկայացավ նահանգապետին, Զերնիշովի գալու լուրը հաղորդելով։ Հենց այդ ժամանակ Որենբուրգում լսեցին թնդանոթաձգություն, վորը և քառորդ ժամից լոեց... քիչ ժամանակ հետո Ռենսդորպը տեղեկություն ստացավ, վոր Զերնիշովի ամբողջ զորախումբը գերի յե բոնված և տարվում և Պուգաչովի բանակատեղը։

Զերնիշովը խարվեց Պաղուըովից, վոր նրան ուղիղ Պուգաչովի սոս բերեց։ Խոռվարաբները հանկարծ հարձակվեցին նրա վրա, գրավեցին հրետանին. Կազակները և կալմիկները դավաճանեցին։ Ցրտից, սովոր և գիշերային չվերթից ուժասպառ լեղած հետևակազորը չկարողացավ դիմադրել։ Ամեն ինչ գրավված եր։ Պուգաչովը կախեց Զերնիշովին, յերեսունվեց սպաների, մի պրապոշիկի կնոջ և կալմիկ գնդապետի, վորը հավատարիմ մնաց իր դժբախտ զորապետին։

Միենույն ժամանակ բրիգադիր Կորֆը Որենբուրգ մտավ լերկու հազար չորս հարյուր մարդուց բաղկացած զորքով և քսան թնդանոթներով, Պուգաչովը հարձակվեց և նրա վրա, սակայն քաղաքի կազակները հետ մղեցին նրան։

Թվում եր, թե Որենբուրգի իշխանությունը սարսափից խելքը կորցրել ե։ Նոյեմբերի 14-ին Ռենսդորպը, նախորյակին վոչ մի ոգնություն ցույց չտալով դժբախտ Զերնիշովի զորախմբին, վորոշեց մի զորեղ արտելք կատարել Քաղաքում յեղած բոլոր զորքը (հաշված և նոր զորախումբը) որեր՝ պարետի առաջնորդությամբ դուրս բերվեց դաշտ։ Բունտարաբները, հավատարիմ իրենց սխտեմին, կովում եյին հեռվից և ցաք ու ցրիլ յեկած, անդադար կրակ տեղալով իրենց բազմաթիվ հրանոթներից։ Քաղաքի հյուծված այրուձին հաջողության հույս անգամ չեր կարող ունենալ Վալենշտերնը ստիպված եր կառուե-

կաղմել և նահանջել կորցնելով յերկու մարդ։ Նույն որն եեթ մայոր Վարնստենը, վորին կառը դեպի նովո-Մոսկովյան ճահապարհն եր ուղարկել, հանդիպեց Պուգաչովի մի ուժեղ զորախմբի և շտապով նահանջեց, կորցնելով մինչև յերկու հարյուր սպանված մարդ։

Զերնիշովի գերի ընկնելու լուրն առնելով, կառը բոլորովին հուսահատվեց և այլս մտածում եր վոչ թե անարդ բունտարուների դեմ հաղթություն տանելու մասին, այլ՝ իր սեփական ապահովության։ Այս բոլորի մասին նա հայտնեց ուզմական կոլեգիային, ինքնակամ կերպով հրաժարվեց իշխանությունից՝ հիվանդության պատճառաբանությամբ՝ մի քանի խելոք խորհուրդներ տվեց Պուգաչովի դեմ գործելակերպի վերաբերյալ և իր զորքը թողնելով Ֆրեյմանի հոգացողությանը, մեկնեց Մոսկվա, ուր նրա հայտնվելը ընդհանուր արտունչ առաջացրեց։ Թագուհին մի խիստ հրովարտակով հրամայեց արձակել նրան ծառայությունից։ Այդ ժամանակից նա ապրում եր մի գյուղում, ուր և մեռավ կայսր Ալեքսանդրի թագավորության սկզբում։

Թագուհին անհրաժեշտություն եր անսնում զորեղ միջոցներ ձեռք առնել աճող չարիքը դեմ։ Նա մի հուսալի զորապետ եր վնարում և ընտրեց գեներալ-անշեֆ Բիբիկովին։ Ալեքսանդր Իվանիկովը պատկանում եր Յեկատերինյան ժամանակների ամենանշանակություն ամենանշանական զորքի անձանց թվին, մի ժամանակաշրջան, վոր այնքան հարուստ եր ականավոր մարդկանցով։ Դեռևս իր յերիտասարդ տարիներում, նա արդեն կարողացել եր աչքի ընկնել պատերազմի և քաղաքացիականության սապարիդում։ Նա պատվով ծառայեց յոթնամյա պատերազմի ժամանակ և իր վրա գրաձեց Ֆրիդրիխ Մեծի ուշադրությունը։ Նրան կարևոր հանձնարարություններ եյին արվում։ 1763 թվին նա ուղարկվեց Ղազան՝ բունտարար գործարանային գյուղացիներին խաղաղեցնելու համար։ Հաստատակամությամբ և բարեմիտ հեղությամբ նա շուտով վերականգնեց կարգը։ 1766 թվին, յերբ կազմվում եր նոր որենսդորության հանձնաժողովը, ընտրություններին նա նախագահում եր Կոստրոմայում։ Նա ինքն ընտրվեց դեպուտատ և հետո նշանակվեց ամբողջ ժողովարանի առաջնորդ։ 1771 թվին նա նշանակվեց գեներալ-ապրուչիկ Վեյմարնի փոխարեն վորպես գլխավոր զորահրամանատար Լեհաստանում, ուր կարձմիջոցում կարողացավ կարգավորել վոչ միայն բացթող արված

գործերը, այլև ձեռք բերել հաղթվածների սերն ու վստահությունը:

Մեր նկարագրած ժամանակաշրջանում նա դժնվում եր Պետերբուրգում: Նվաճված լեհաստանի գլխավոր իշխանությունը հանձնելով գեներալ-պորուչիկ Ռոմանիուսին, նա պատրաստվում էր Տաճկաստան մեկնել՝ կոմս Ռումյանցելի մոտ ծառայելու: Թագուհին, վորը մինչ այդ միշտ բարյացակամ եր Բիբիկովին, սառն ընդունեց նրան: Մի գուցե նա դժգոհ եր այն անհամեստ խոսքերից, վոր Բիբիկովն ասել եր սրտնեղությունից հարկադրված, քանի վոր գործի մեջ ջանադիր և հոգով թագուհուն: Նվիրված լինելով՝ նա փնտինթան և համարձակ եր իր դատումների մեջ: Սակայն Յեկատերինան կարողանում եր զսպել իր կանխարջիքները: Պալատական պարահանդիսի ժամանակ իր նախկին սիրալիր ժպիտով նա մոտեցավ նրան և հետը վողորմածաբար խոսելով հայտնեց նրա նոր նշանակումը: Բիբիկովը պատասխանեց, վոր նա իրեն նվիրաբերել և հայրենիքի ծառայության և այդ ասելով մեջ բերեց ժողովրդական յերգի բառերը: Դրանք հարմարացնելով իր վիճակին:

Սարաֆան իմ, թանկագին իմ սարաֆան,

Ամեն տեղ դու յես պետք գալիս, սարաֆան.

Իսկ թե պետք չես՝ նստարանի տակ ես ընկած, սարաֆան:

Նա առանց առարկության հանձն առավ մեծ դժվարությունների հետ կապված պաշտոնը և դեկտեմբերի 9-ին գուրսյեկավ Պետերբուրգից:

Մոսկվա հասնելով Բիբիկովը հին մայրաքաղաքը տեսավ սարսափի և հուսալքման մեջ: Բնակիչները, վոր նոր եր ինչ տեսել ելին բունտն ու ժանտախտը, դողում ելին նոր աղետի սպասելով: Քազմաթիվ աղնվականներ Մոսկվա ելին փախել այն նահանգներից, վոր արգեն քար ու քանդ եր արել Պուգաչովը կամ վորոնց հուզում եր սպառնում: Դրանց հետ բերված ճորտերը քաղաքի հրապարակների վրա լուրեր ելին տարածում աղատության և տերերին վոչնչացնելու մասին: Մոսկվայի մեծ թիվ խաժամութը, հարբելով և փողոցներով թրե գալով, ակնհայտնի անհամբերությամբ սպասում եր Պուգաչովին: Բնակիչները խաճդավառությամբ ընդունեցին Բիբիկովին, վոր աղացուցում եր, թե նրանք ինչ վտանգ ելին սպասում իրենց համար: Նա թողեց Մոսկվան, փութալով արդարացնել նրա հույսերը:

Չորրորդ գլուխ

Խոռվարանների գործողությունները: Մայոր Զայեվը, իլինսկայա բերդի գրավումը: Կամեցկովի մահը: Որենբուրգի դրությունը: Յափիկանի փոքրիկ քաղաքի պաշարումը: Կոկվ Բերդաւի մոտ: Բիբիկովը Զաղանումը: Յեկատերինան 2-րդը՝ Ղաղանի կալվածատիրուհի: Յեկորպայի կարծիքը: Վոլտեր: Հրովարտակ Պուգաչովի տան և ընտանիքի մասին:

Կառի և Ֆրեյմանի ջարդվելը, Զերնիշովի ջախճախումն ու վալեննշտերնի և Կորֆի անհաջող արտելքները զորացրին հանգնությունն ու ինքնապաստանությունը խոռվարանների մեջ: Նրանք ամեն կողմ ընկան, քարուքանդ անելով գյուղերն ու քաղաքները: Հուզելով ժողովուրդը և վոչ մի տեղ չհանդիպեցին դիմադրության: Տորնովը վեց հարյուր մարդկանց հետ բունտ արեց և թալանեց ամբողջ նագալբացկի մարզը: Զիկան նույն միջոցին տաս հազարանոց զորախմբով մոտենում եր Ուժագին և պաշարեց այն նոյեմբերի վերջին: Քաղաքը չուներ Որենբուրգի պես ամրություններ և սակայն պարետ Մյասուդովը և այնտեղ ապաստարան փնտրող աղնվականները վճռեցին պաշտպանվել: Զիկան, չհամարձակվելով ուժին հարձակումներ անելու, կանգ առավ Զեսոնկովկա գյուղում, Ուժագից տաս վերստի վրա, բունտ գցեց շըջակա գյուղերում, մեծ մասամբ բաշկիրական և քաղաքը կարեց ամեն տեսակ հաղորդակացությունից: Ուլյանովը, Դավիդովը և Բելոբորոդովը գործում ելին Ուժագի և Կաղանի միջև: Այդ ժամանակ եր, վոր Պուգաչովը Խոստական հինգ հարցուր հոգով և վեց թնդանոթով ուղարկեց իլինսկայա և Վերխնե-Ողերնայա բերդերը գրավելու, վորոնք ընկած ելին Որենբուրգից արևելք: Այս կողմից պաշտպանության համար Միբիրի նահանգապետ Զիչերինը նշանակել եր գեներալ-պորուչիկ Դեկալոնդին և գեներալ-մայոր Ստա-

Նիսլավսկուն: Առաջինը պաշտպանում եր Սիրիքի սահմանները, վերջինը գտնվում եր Որսկ բերդի մեջ, անվճականորեն գործելով, ամենաչնչին վտանգի դեպքում արիությունը կորցնելով և զանազան պատրվակներով հրաժարվել իր պարտքը կատարելուց:

Խլոպուշան վերցրեց իլինսկայան, հրոսման միջոցին սրախողող անելով պարետին՝ պորուչիկ Լոպատինին, սակայն խնայեց սպասներին և չքանդեց մինչև իսկ բերդը: Նա շարժվեց դեպի Վերինե-Ռոգերնայա: Այս բերդի պարետը, յենթագնդապետ Դեմարինը վանեց նրա հարձակումը: Տեղեկանալով այդ ժամին, Պուգաչովն ինքն շտապեց Խլոպուշային ոգնության և նոյեմբերի 26-ի առավոտյան միանալով նրա հետ, նույն ժամին և եթ հարձակվեց բերդի վրա: Ամբողջ որը չեր դադարում հրածգությունը: Խլոպաշարները մի քանի անգամ ձիերից իջնելով նրակներով վրա տվին, սակայն միշտ ելհետ ելին մղվում: Յերեկոյան Պուգաչովն ահանջեց դեպի բաշկիրական մի գյուղ՝ Վերինե-Ռոգերնայա բերդից տասներկու վերստի վրա: Այդտեղ նա իմացավ, վոր սիրիբան գծից իլինսկայա բերդն են դալիս յերեք վաշտ, ուղարկված գեներալ-մայոր Ստանիսլավսկու կողմից: Նա գնաց նրանց ճանապարհը կտրելու:

Սակայն մայոր Զակը՝ սույն զորախմբի պետը, կարողացավ գրավել իլինսկայան (նոյեմբերի 27-ին): Խլոպուշայի թողած բերդը նա չայրեց: Բնակիչներին այսաեղից դուրս չըերեց: Նրանց մեջ գտնվում եյին մի քանի կոնֆերատաներ: Պատերը և մի քանի խրճիթներ վնասված ելին: Բոլոր զորքը գերի յերբոնված—բացի մի սերժանտից և վիրավոր սպայից: Ամբարը բացված եր, Մի քանի չետվերտալյուր և պաքսիմատ թափված ելին բարպահի մոտ մի թնդանոթ եր ընկած: Զակը շտապ կերպով մի քանի կարգադրություն արեց, իր զորախմբի մեջ յեղած թնդանոթները տեղափորեց յերեք բաստիոններում (չորրորդի համար թնդանոթ չկար), նույնակես և պահակներ ու հեծելադետներ նշանակեց և սկսեց սպասել թշնամուն:

Միւս որը մթնշաղին Պուգաչովը հայտնվեց բերդի առջև: Խլոպաշարները մոտենում ելին և բերդի մոտ ձիերը դես ու դեն քշելով կանչում պահակներին: «մի կրակեք, գուրս յեկեք. այստեղ և թագավորը»: Թնդանոթից կրակեցին նրանց վրա: Ուումբը մի ձի սպանեց: Խլոպաշարները չքացան և մի ժամ անց հայտնվեցին լեռան այն կողմից, իր իսկ Պուգաչովի առաջնոր-

դությամբ ձիերը ցանուցիր քշելով: Նրանց հետ մղեցին թընդանոթներով: Զինվորները և գերի լեհերը (մանավանդ այս վերջինները) թախանձագին խնդրում ելին արտյելքի անցնել, սակայն Զակը չհամաձայնեց, յերկուղելով նրանց կողմից լենելիք հնարավոր դավաճանությունից: «Մնացեք այստեղ պաշտպանվեցեք»—ասաց նա—«իսկ յես արտյելքի դուրս գալու իրավունք չունեմ գեներալից»:

29-ին Պուգաչովը նորից մոտեցավ, սահնակների վրա յերկու թնդանոթ ունենալով և բոլոր ժամանակ դրանց առջև մի քանի սայլ խոտ պահելով: Նա հարձակվեց այն բաստիոննի¹⁾ վրա, ուր չկար թնդանոթ: Զակը շտապեց յերկու հատ դնել այստեղ, սակայն առաջ քան կարողացան դրանք տեղափորել, խոռվարաները ուումբերով ջարդեցին փայտյա բաստիոնը, ձիերից իջած հարձակվեցին և ամբողջութիւմը քանդեցին այն ու իրենց սովորական աղաղակներով խոռվացին բերդը: Զինվորները շարքալույթ յեղան և փախան: Զակը, համարյա բուլոր սպաները և յերկու հարյուր շարքալիներ սպանվեցին: Մլուսներին քշեցին մերձակա թաթարական գյուղը: Բերված զինվորներին կանգնեցրին լիք թնդանոթի առջև: Պուգաչովը՝ կազակական կարմիր շորերով՝ ձին նստած մոտեցավ Խլոպուշայի ուղեկցությամբ: Նրա յերեալուն պես զինվորներին չոքեցրին, ինքնակոչն ասաց նրանց: «Ներում ե ձեզ ատված յեկ յես՝ ձեր բազավար Պյուսր III կայսր: Վոսքի կանգնեցեք»: Հետո հրամայեց շել թնդանոթը և կրակել գեպի տափաստան: Նրան ներկայացրին կապիտան Կամեցկովին և պըռպորչիկ Վորոնովին: Պատմությունը պետք ե պահպանի սույն համեստ անունները: «Ինչո՞ւ դուք դուրս յեկամ իմ դեմ՝ ձեր բազավարի դեմ», —հարցրեց հաղթողը: «Դու մեր թագավոր չես»—պատասխանեցին գերիները. «Մեր մլուսատանում նստած են թագուհի Յեկատերինա Ալեքսեևնան և թագավոր գահաժառանդ Պավել Պետրովիչը. իսկ դու գող ես և ինքնակոչ»: Նրանց տեղն ու տեղը կախեցին:— Հետո մոտ բերին կապիտան թագարինին: Պուգաչովը նրան այլ չետո մոտ բերին կապիտան թագարինին: Պուգաչովը նրան այլ չասաց վոչ մի խոռը և այն ե՝ հրամայեց վոր կախին: Սակայն գերի ընկած զինվորները սկսեցին խնդրել նրա համար: Ենթադրելով ինքնակոչը, ապա յես բարի յե յեղել ձեզ նետ, ասաց ինքնակոչը, ապա յես

1) Բերդի, ամբողջի բուլոր: Ծ. թ.

ներում եմ նրան: Յեկ հրամայեց, վոր նրա, նույնպես և զինվորների մազերը խուղեն կազակների ձեռվ, իսկ վիրավորներին տանեն բերդ: Զորախմբի մեջ յեղած կազակներին խոռվարարներն ընդունեցին ինչպես ընկերների: Այն հարցին, թե ինչու անմիջապես չեն միացել պաշարողներին, նրանք պատասխանեցին, վոր զինվորներից եյին վախենում:

Իլինսկայա բերդից Պուգաչովը նորից շրջվեց դեպի Վերխնի-Ռոգերնայա: Նա անպայման ուղղում եր գրավել այն, մանավանդ վոր այնտեղ եր գտնվում ըրիգադիր Կորֆի կինը: Նա սպառնում եր կախել նրան, չարացած նրա մարդու վրա, վորն ուղղում եր կեղծ բանակցություններով խարել իրեն:

Նոյեմբերի 30-ին նա նորից շրջապատեց բերդը և ամբողջ որը կրակում եր թնդանոթներից, փորձելով հարձակվել մերթայս, մերթ այն կողմից, Յուրայիններին սրտապնդելու համար Դեմարինն ամբողջ որը կանգնած եր պատճեշի վրա, ինքը լըցնելով թնդանոթը, Պուգաչովը նահանջեց և ուղում եր գնալ Ստանիսլովսկու դեմ, սակայն ձեռք ձերկուվ որենքուրդյան փոստառաքումը, միտքը փոխեց և վերադարձալ բերդա ավան:

Նրա բացակայության ժամանակ Ռեյնսդորֆը ուղում եր արտյելք անել և 30-ին գիշերով, զորքը փորձեց դուրս գալ քաղաքից, սակայն կերի պակասությունից ուժասպառ ձիերն ընկնում և սատկում եյին հրետանու ծանրության տակ, իսկ միքանի կազակներ փախան: Վալենշտերնը հարկադրված եր վերադառնալ:

Որենքուրդում սկսեց զգացվել ուտեսափ պաշարների պակասություն: Ռեյնսդորֆը գրանք պահանջեց Դեկալոնգից և Ստանիսլավսկուց: Պատրվակներ բերելով յերկուսն ել հրաժարվեցին: Նա ամեն ժամ նոր զորքի յեր սպասում և այդ մասին վոչ մի տեղեկություն չեր ստանում, կտրված լինելով ամեն կողմից, բացի Սիբիրից և Կիրգիզ-Կասյացկան տափաստաններից: Ռազմագերի վորսալու նպատակով յերեմն նա ուղարկում եր մինչև հազար մարդ, և սակայն շատ անգամ առանց հաջողության: Նրա լսելքին վչեց Տիմաշովի խորհրդով թակարդներ դնել պատճեշի մոտերքը և, ինչպես գայլերին են բռնում, վորսալ խոռվարաններին, վորոնք գիշերը ձիով շրջում եյին քաղաքից վոչ հեռու: Իրենք պաշարվածները ծիծաղում եյին նրա ուղամական խորամանկության վրա, թեպետ և նրանց յերեսին ծիծաղ չեր գալիս, իսկ Պուգաչովն իր նամակներից մեկում խայթիչ

խոսքերով նախատում եր նահանգապետին՝ նրա անհաջող հնարքի համար և ծաղրաբար խորհուրդ տալիս անձնատուր լինել ինքնակոյին:

Յահկյան քաղաքը՝ բունափ սույն առաջին բույնը, սարսափած Սիմոնովի գորքից, յերկար ժամանակ մնացել եր հնագանդության մեջ: Վերջապես հաճախակի կապը բունարարների հետ և Որենքուրդը վերցնելու սուտ լուրերը խրախուսեցին Պուգաչովի համախօններին: Կազակները, վորոնց Սիմոնովը քաղաքից կարգում եր պահակներ դնելու և Բերդա ավանից գաղտնաբար ուղարկված խոռվարաններին վորսալու համար, սկսեցին բացորազ կերպով անհնաղանդություն ցույց տալ, բաց թողնել բռնված բունարարներին, կապոտել իշխանությանն հավատարիմ ավագներին և փախչելով անցնել ինքնակոչի բանակը: Լուր տարածվեց խոռվարանների ջոկատի մոտենալու մասին: Դեկտեմբերի 29-ի լույս 30-ի գիշերը ավագ Մոստովչչի կովը դուրս յեկավ նրա դեմ: Մի քանի ժամից նրա հետ յեղած կազակներից յերեքը սրարշավ վերադարձան բերդ և հայտնեցին, վոր քաղաքից յոթ վերսալի վրա Մոստովչչի կովին շրջապատել և գերի և բռնել բունարարների մի հոծ բազմություն: Քաղաքում մեծ իրարանցում ընկավ: Սիմոնովը վախեցավ: Բարեբախտաբար բերդում գտնվում եր կապիտան Կոլիովը, վճռական ու գողջախոն մի մարդ: Անկարգության առաջին բոպեյին նա իր ձեռն առավ կալագորի իշխանությունը և հարկավոր կարգադրություններ արավ: Դեկտեմբերի 31-ին խոռվարարների մի ջոկատ Տոկաչովի առաջնորդությամբ մտավ քաղաք: Բնակիչները խանգամառ կապառությամբ ընդունեցին նրան և տեղն ու տեղը զինվելով ինչ վոր ձեռքներն ընկավ, միացան նրան, բոլոր նրբափողցներից հարձակվեցին բերդի վրա, տեղ բռնեցին բարձր խըճիթներում և սկսեցին կրակել պատուհաններից: Կրակոցները, առառավ և ականատեսներից մեկը, տեղում եյին այնպես, կարծես առավ միացին ի տես կանգնածները, այլ և նրանք, վորոնք մի բոպեյով գլուխները վեր եյին բարձրացնում ցանկապատերի մի բոպեյով գլուխները, վորոնք անվատանդ եյին բերդից տասյետեցից: Խոռվարանները, իրենց սաժենի վրա և մանավանդ գույերեցիկները (վորսորդները) իրենց գնդակներով խոռվարանները, մինչև իսկ այն ձեղքերին, վորոնք միջից կրակում եյին մինչև իսկ այն ձեղքերին, վորոնք գնդակներով խոռվարանները, պաշարվածները: Սիմոնովն ու նորիլովը միջից կրակում եյին պաշարվածները: Սակայն ուռմբերն ընկառագում եյին այլել մերձակա տները: Սակայն ուռմբերն ընկառագում եյին այլել մերձակա տները:

նում եյին ձյան մեջ և հանգչում, կամ յեթե բռնկվում ել եյին՝ իսկուն հանգչում եյին ջրով: Վոչ մի խրճիթ չայրվեց: Վերջապես յերեք շարքային զինվորներ պատրաստակամություն հայտնեցին ամենամու տունը վառելու, վոր և հաջողվեց նրանց: Հրեն արագությամբ տարածվեց: Խոռվարարները դուրս վաղեցին: Բերդից սկսեցին թնդանոթներից կրակել նրանց վրա: Նրանք հեռացան, հետները տանելով սպանվածներին ու վիրափորներին: Սրտապնդված կալաղորը յերեկոյան դեմ արտյելք արեց և կարողացով այրել ելի մի քանի տուն:

Բերդում կային մինչև հազար բերդական զինվոր և հնագանդվածներ, բավականաչափ վառող, սակայն ուտեստի քիչ պաշարներ: Խոռվարարները պաշարեցին բերդը, գերաններով լցրին հրդեհից ամայացած հրապարակը և դեպի այն տանող փողոցներն ու նրբափողները, շենքերը հետեւց բարձրացրին մինչև տանելոց մարտկոցներ, հրածության լենթակա խրճիթներում կրկնակի պատեր շարեցին և արանքը հող լցնելով, սկսեցին ականներ փորել: Պաշարվածներն աշխատում ելին միայն հեռացնել թշնամուն, հրապարակը մաքրելով և ամրացված խրճիթների վրա հարձակումներ գործելով: Սույն վտանգավոր արտյելքները կատարվում եյին ամեն որ, յերբեմն որը յերկու անգամ և միշտ հաջողությամբ. զինվորները գաղաղած եյին, իսկ հնագանդվածները չեյին կարող գթություն ակնկալել խոռվարաներից:

Որենքուրդի վեճակը գնալով սարսափելի յեր դառնում: Բնակիչների ձեռից առան ալյուրը և ձալարն ու սկսեցին մնադի ամենորյա բաշխում կատարել նրանց մեջ: Չիերին վաղուց արդեն խոփով եյին կերակրում: Նրանց մեծ մասը սատկեց և գործածվեց վորպես կերակուր: Սովը սաստկանում եր: Մի պարկ ալյուրը (այն ել ամենագաղտնի կերպով) ծախվում եր քսանեհինք ուռըլով: Ծիչկովի (ակաղեմիկի, վորը այդ ժամանակ Որենը ուրդում եր գտնվում) առաջարկությամբ սկսեցին տապակել յեզների և ձիերի կաշիները և դրանք մանր կարտելով, խառնել հացի մեջ: Հիվանդություններ առաջ յեկան: Տրտունջը գնալով բարձրածայն եր դառնում: Խոռվարան յերկյուղ կար:

Սույն ծայրահեղության մեջ Ռեյնսդորֆը վճռեց մի անգամ ել փորձել զենքի հաջողությունը և հունվարի 13-ին Որենը գում գտնված բոլոր զորքը քաղաքից դուրս յեկավ յերեք զորքասյուներով, Վալենշտերնի, Կորֆի և Նաումովի առաջնորդու-

թյամբ: Սական ձմեռային առավոտվա մթությունը, ձյան խորությունը և ձիերի ուժապառությունը խոչընդու հանդիսացան զորքերի միահամուռ գործակցությանը: Նառմովին առաջինը հասավ նշանակված տեղը: Խոռվարաները տեսան նրան և ժամանակ ունեցան իրենց կարգագրություններն անելու: Վալենշտերնը, վոր պետք և գրավեր Բերդակից Ղարդալե տանող ճանապարհի մոտի բարձրունքները, կանչվեց: Կորֆին դիմավորեցին թնդանոթային ուժեղ կրակով. խոռվարաների հեծելախմբերը սկսեցին անցնել զույգ զորասյուների թիկունքը: Պահեստում թողած կազակները նրանց լքեցին-փախան և սրարշակ հասնելով Վալենշտերնի զորասյանը, ընդհանուր խառնաշխություն առաջացրին: Վերջինս ընկավ յերեք կրակի մեջ. նրա զինվորները փախան: Վալենշտերնը նահանջեց. Կորֆը հետեւց նրան. Նաումովը, վորն սկզբում բավական հաջող եր գործում, սարսափելով, թե կտրված կմնա, ընկավ նրանց յետելց: Մինչև Որենը գործող ամբողջ զորքը փախչում եր անկարգ վիճակում, կորցնելով մոտ չորսհարյուր մարդ սպանված և վիրափոր ու ավազակների ձեռքում թողնելով տանեհինդ թնդանոթ: Այս անհաջողությունից հետո Ռեյնսդորֆն այլև չեր համարձակվում գործել հարձակողաբար, այլ պարիսպների և թնդանոթների պաշտպանության տակ սկսեց սպասել իր վրկությանը:

Բիբիկովը Ղազան հասավ գեկտեմբերի 25-ին: Քաղաքում նա չգտավ վոչ նահանգապակետին, վոչ ել գլւսավոր չինովնիկներին: Ազնվականների և վաճառականների մեծ մասը փախել եր ավելի ապահով նահանգներ: Բրանտը Կողմողեմյանսկում եր: Բիբիկովի գալը կենդանացրեց հուսալքված քաղաքը. հեռացած բնակիչները սկսեցին վերադառնալ. 1774 թվի հունվարի 1-ին մաղթանքից և քարոզից հետ, վոր ասաց Ղազանի Բենիամին յեպիսկոպոսը, Բիբիկովն իր մոտ հավաքեց ազնվականության ներկայացուցիչներին ու մի խելոք և ուժեղ ճառ արտասանեց, վորի մեջ պատկերացրեց ներկա աղետը և կառավարության հոգացողությունը դա վերացնելու համար, դիմեց գելի այն դասը, վորին խոռվությունը կառավարության հետ միասին կործանման եր դատապարտել. Ենանդուն աջակցություն պահանջեց հայրենիքին և հավատարմություն՝ գահին: Սույն ճառը խորը տպավորություն թողեց: Ժողովը տեղն ու տեղը վորոշեց իր հաշվին կազմել և զինել մի հեծելազորք, ամեն մի յերկու հարլուր շնչից մի ուկրուտ տալով: Գեներալ-մայոր Ղարինովով՝

Բիբիկովի ազգականը ընտրվեց այդ լեզիոնի պես: Սիմբիրսկան, Սվիաժսկի և Պենզայի ազնվականությունը հետեւց այս որինակին, կազմվեցին նորից յերկու հեծյալ զորախմբեր և հանձնվեցին մայոր Գլադկովի և Զեմեսովի ու կապիտան Մատյունինի հրամանատարությանը: Ղաղանի մագիստրատը¹⁾ նույնպես իր հաշվին զինեց մի եսկադրոն հռւարներ:

Թագուհին՝ իր միապետի որհնությունը, վողորմածությունը և հովանավորությունը հայտնեց Ղաղանի ազնվականությանը և Բիբիկովին ուղղած մի հատուկ նամակում իրեն Ղաղանի կալվածատիրուհի անվանելով, պատրաստակամություն հայտնեց մասնակցել ընդհանուր ջանքերով ձեռնարկող միջոցներին: Ազնվականների առաջնորդ Մակարովը թագուհուն պատասխանեց մի ճառով, վոր շարադրել եր այն ժամանակ գլխավոր հրամանատարի մոտ գտնվող գլարդիայի յենթապարուչիկ Դերժավինը.

Բիբիկովը, ջանալով սիրա տալ իրեն շրջապատող բնակիչներին և ստորագրյալներին, հանգիստ և ուրախ եր յերեսում, սակայն անհանգստությունը, սրտնեղությունը և անհամբերությունը տանջում եյին նրան: Կոմս Զերնիշեվին, փոն-Վիզինին և իր ազգականներին գրած նամակներում նա վառ գույներով ենկարագրում իր վիճակի գժվարությունը: Դեկտեմբերի 30-ին նա գրում ե իր կնոջը. «Տեղեկանալով բոլոր հանգամանքների մասին, այստեղ գործերը յես գտա ամենախայտառակ վիճակում, այնպես զոր, յեթե կամենայի ել նկարագրել՝ չեմ կարող, հանկարծ ինձ տեսա շատ ավելի վատթար պարագաներում և հոգսի մեջ, քան վոր սկզբում ունելի լեհաստանում: Գրում եմ որ ու զիշեր, գրիչը ձեռքից բաց չթողնելով, անում եմ այն ամենը, ինչ հնարավոր ե և աստծուց ոգնություն եմ հայցում: Գործը միայն նա կարող ե ուղղել իր վողորմածությամբ: Իրոք, բավական ուշ շարժվեցինք: Իմ զորքերը սկսեցին տեղ համանել յերեկ. մի գումարտակ գրենադերները և յերկու եսկադրոն հռւարները, վորոնց յես հրամայել եյի բերել փոստային սայլակներով, յեկան: Սակայն վարակը հանգյնելու համար այս բուլը շատ քիչ ե, իսկ չարիքն այնպիսին ե, վոր նման է

1) Մագիստրատ—շարական Ռուսաստանում այսպես եյրն կոչվում քաղաքային ընտրովի դատաստանա-վարչական և հարկային հիմնարկությունները: Ծ. թ.

(հիշում ես) Պետերբուրգի հրդեհին՝ ինչպես հանկարծ բոլոր տեղերից սկսեց վառվել և ինչպես դժվար եր հասնել ամենութեք: Հույսու առ աստված, բոլորի հետ պետք ե անեմ այն, ինչ միայն կկարողանամ անել: Խեղճ ծերունի նահանգապետ Բրանտը այնպես և տանջված, վոր հազիվ ման և գալիս: Թափված արյան և բազմաթիվ անմեղ մարդկանց կործանման համար աստծուն պատասխան կտա նա, ով այնպես արագ փչացրեց այստեղի գործերը և մերկացրեց զորքերից: Այսուհանդեմ յես առողջ եմ, միայն վոչ ուտել եմ ուզում, վոչ խմել, իսկ քաղցրավենիքներ մտքովս անգամ չեն անցնում: Մեծ ե չարիքը, անասելի սոսկալի: Իմ վողորմած հորից ծնողական աղոթքներ եմ խնդրում, իսկ արդարակաց¹⁾ Յեպրաքսիային հաճախ եմ հիշում: Ո՞վ, վատ ե»:

Իսկապես, գրությունը սոսկալի էեր: Այդ յերկրում ցըկած բաշկերների, կալմիկների և այլ ժողովրդների ընդհանուր հուզումը ամեն կողմից կտրել եր հազորդակցությունը: Զորքը սակավաթիվ եր և անհուսալի: Պետերը թողնում ու փախչում եյին իրենց տեղերից, յեթե հանկարծ հեռվից նկատվում եր սալդակը ձեռին մի բաշկիր, կամ մահակով զինված գործարանային մի գյուղացի: Չմեռը սաստկացրեց գժվարությունները: Տափատանները ծածկված եյին խոր ձյունով: Անհնար եր առաջ շարժվել վոչ միայն առանց հացի, այլ և առանց փայտի: Գյուղերն ամայի եյին, գլխավոր քաղաքները պաշարված, մյուսները գրաված բունտարարների հրոսակներով, գործարանները թալանված եյին և այրված, խաժամուժ ժողովրդը ամեն որ հուզման մեջ եր և չարագործություններ եր անում: Պետության բոլոր ծայրերից ուղարկված զորքերը դանդաղ եյին շարժվում: Վոչնչով չարգելափակված չարիքը տարածվում եր՝ արագ ու լայն: Իլեցկ քաղաքից մինչև Գուրև բունտ եյին անում Յահիկան կազակները: Ղազանի, Նիֆեկորդսկի և Աստրախանի նահանգները լի եյին ավազակների հրոսակախմբերով: Խոսովության բոցը կարող եր ընկնել մինչև իսկ Սիբիր: Պերմում մկավել եյին անհանգստությունները: Յեկատերինբուրգը վտանգի մեջ եր: Կիրգիզ-կայսակներն, ոգտվելով զորքերի բացա-

1) Միանձնուհի Յեպրաքսիա Կիրիլովնա—Ալեքսանդր Իլիչ (Բիբիկովի) աստմերը, վորը գաստիարակել եր իրեն: Ըստանիքում նրան համարում եյին վորպես արդարակաց կին: Ծանօթ: հեղինակի:

կայությունից, սկսեցին անցնել բայ սահմանով, թալանել խոտորները, քշել անասունները, գերի բռնել բնակիչներին։ Տաճկաստանի կողմից հրահրված՝ շարժվեցին Անդրկուրանյան ժողովուրդները, մինչև իսկ յելոպական կառավարություններից միքանիսը մտածում եյին ոգտվել դժվար կացությունից, վորի և այդ ժամանակ գտնվում եր Ռուսաստանը,

Այս սոսկալի խառնաշփության սկզբնապատճառ դարձած մարդը ընդհանուր ուշադրություն եր գրավում։ Յելրոպացում Պուգաչովին ընդունում եյին վորպես տաճկական քաղաքականության գործիք։ Վոլտերը, իշխող կարծիքների այն ժամանակա ներկայացուցիչը, գրում եր Յեկատերինացին։ C'est apparemment le chevalier de Tott, qui a fait jouer cette farce, mais nous ne sommes plus au temps de Demetrios et telle pièce de théâtre qui réussissait il y a deux cents ans est siéfflée aujourd' hui.¹⁾

Թագուհին, զայրացած յելոպական բամբասանքների վրա, Վոլտերին պատասխանեց վորոշ անհամբերությամբ։ Monsieur, les gazettes seules font beaucoup de bruit du brigand Pougatschef, lequel n'est en relation directe avec Mr. Tott. je fais autant de cas des canons fondus par l'un, que des entreprises de l'autre. Mr. Pougatschef et Mr. Tott ont cependant cela de commun, que le premier file tous les jours sa corde de chanvre et que le second s'expose à chaque instant au cordon de soie.²⁾

Չնայած դեպի ավաղակն ունեցած իր արհամարհնքին, թագուհին ձեռքից չեր թողնում վոչ մի միջոց՝ շլացած խաժամո. Ժժողովրդին խելքի բերելու. Ամենուր հորդորիչ մանիֆեստներ ուղարկվեցին. տաս հազար ըուբլի յեր խոստացված ինքնակո-

1) Հաս Իբրութին, կավալեր դե Տոտան և սարքել այդ Փարսը, սակայն մենք այլևս չենք ապրում Դիմիտրիի ժամանակները և պիեսը, վոր հաջողություն ուներ սրանից յերկու հարյուր տարի առաջ, հիմա սուլոցներով և ընդունում հասարակության կողմից։

2) Պարոն, մրայն լրագրներն են շատ աղմուկ բարձրացնում Պուգաչով ավաղակի մասին, վորը դե-Տոտարի հետ չունի վոչ անմիջական, վոչ ել կողմնակի առնչություն։ Ես սույնքան նշանակություն եմ տալիս մեկի թնդանությունին, վորքան մյուսի ձեռնարկություններին։ Սակայն պ. դե Պուգաչովը և պ. դե Տոտարը այն ընդհանուրն ունեն, վոր առաջինն ամեն որ կանեփից վորում եր պարանը, իսկ յերկորդը յուրաքանչուր բոպե մոտենում ե մետաքսե թելիս։ Մ. թ.

չին բռնելու հտմար։ Առանձնապես յերկյուղ ունեցին Յակիկ։ Դոնի հետ սպասվելիք հարաբերություններից։ Ատաման Յեֆրեմովին հանեցին և նրա տեղ ընտրվեց Սեմյոն Սոլլինը։ Հրամանն ուղարկվեց Զերկասկ—այրել Պուգաչովի առնենու ու տեղը, իսկ նրա ընաանիքը առանց վորեվին վիրափորանի ուղարկել Ղազան՝ ինքնակոչին բռնելու գեղքում նրա դեմքը մերկացնելու համար։ Դոնի իշխանությունը ճշտիվ կատարեց բարձրագույն հրամանի խոսքերը։ Պուգաչովի առնենու, վոր գտնվում եր Զիմովելյակայա ստանիցայում, զրանից մի տարի առաջ ծախել եր ծայրահեղ չքավորության դուռն հասած նրա կինը և արդեն քանդված ու տարված եր ուրիշի բակը։ Տանը կրեցին իր նախկին տեղը և հոգևորականության ու ամրող ստանիցայի ներկայությամբ այրեցին, Դահիճները մոխիրը քամուն տվին, բակը փորեցին և ցանկապատեցին, հավիտյան ամայի թողնելով այն, վորպես անիծյալ մի տեղ։ Տեղական իշխանությունը Զիմովելյակայի բոլոր կազակների անունից թույլտվություն խնդրեց նրանց ստանիցան ուրիշ՝ թեկուզ յիվ պակաս տահավետ տեղում հաստատելու, Թագուհին չհամաձայնվեց ջանադրության այսքան վնասաբեր ապացուցին և սոսկ Զիմովելյակայա ստանիցան վերանվանեց Պատյոմկինսկայա, խոռվարարների մասին յեղած մոայլ հիշողությունները սքողելով նորի՝ արդեն իսկիրեն և հայրենիքին սիրելի անձնավորության¹⁾ փառքով։ Պուգաչովի կինը, վորդին և յերկու աղջիկները (բոլոր յերեքն ել փոքրանասակ) ուղարկվեցին Ղազան, ուր ճամբքեց նաև նրա հարազատ յեղբայրը, վորն իբրև կազակ ծառայում եր յերկորդ բանակում։ Մինչ այն, մինչ այն հավաքվեց հետեյալ մանրա-

1) Պոյոյմկին Գ. Ա. (1739—1791)—Յեկատերինա Ա-ի ամենաազեցիկ շնորհարաններից մեկը, ծագումով մանը կալվածատեր աղնվական։ Մասնակցել ե Պյոոը Ա-ի գալենկեցությանը հոգուա Յեկատերինա Ա-ի, վարել մի շարք պետական և ռազմական մեծ պաշտոններ, մասնակցել ե Յեկատերինա Ա-ի մղված պատերազմներին, ֆելդմարշալի աստրան ստացել և այլն։ Գ. մի ժամանակ յեղել ե Ռուսաստանի վարչիչը Վորպես մորտատիրական ազնվականության գիկտատուրալի ամենաականավոր ներկայացուցիչը, Գ. առանձնապետանություն վաստակեց 1772—74 թ. թ. ոյուղացիական հեղափող ապստամբությունների մրջոցին և զրանք գաղանաբար ճնշվելուց հետո։ Յ-րդ ուուտամկը պատերազմին (1768—1774) Պոյոյմկինը իւլեց Դրիմը և միացը Բուռսատանին։ Ծ. թ.

մասն տեղեկությունները այն չարագործի մասին, վոր ցնցում
եր պետությունը:

Յեմելյան Պուգաչովը, ծառայող կազակ Զիմովեյսկայա
ստանիցայից, շատ տարիներ առաջ մահացած իվան Միխայլովի
վորդին եր: Նա քառասուն տարեկան եր, միջահասակ, թխադեմ
ու լղար. մուգ խարտյաշ մազեր ուներ, սև մորուք՝ վոչ մեծ և
ծայրը սուր: Վերին ատամը դուրս եր ընկել դեռևս մանուկ
հասակում, բռնցքամարտի ժամանակ: Զախ քունքի վրա մի
սպիտակ բիծ ուներ, իսկ զույգ ծծերի վրա՝ նշաններ, վորոնք
մնացել եյին սև տկարություն կոչված հիվանդությունից: Գրել-
կարդալ չգիտեր և մկրտվել եր աղանդավորական ծիսով: Տաս
տարի առաջ նա ամուսնացել եր Սոֆիա Նեղուժինայի հետ,
վորդ ուներ հինգ յերեխաներ: 1770 թվին նա ծառայության
մեջ եր յեղել յերկրորդ քանակում, մասնակցել եր Բենդերի
գրավմանը և մի տարի հետո արձակվել ե ծառայությունից ու
վերադարձել Դոն՝ հիվանդության պատճառով: Աղաքինվելու
համար նա գնացել ե Զերկասկ: Նրա հալունիք վերադառնալուց
հետո Զիմովեյսկայի ատամանը ստանիցայի ժողովին հարցրել
եր նրան, թե վհրատեղից ե ճարել շագանակագույն ձին, վորը
նստած տուն ե յեկել: Պուգաչովը պատասխանել եր, թե դա
գնել ե Տագանրոդում, սակայն կազակները լավ իմանալով նրա
անառակ կցանքը, չեն հավատացել և նրան ուղարկել են գրա-
վոր վկայագիր բերելու: Պուգաչովը գնում ե, Այնինչ տեղեկա-
նում են, վոր նա Տագանրոդի մոտ բնակվող վորոշ կազակների
համոզելիս ե յեղել փախչել դեպի Կուբանի այն կողմերը: Վո-
րոշված եր Պուգաչովին հանձնել կառավարության ձեռը: Վե-
րադառնալով գելտեմբեր ամսին, նա թագնվում ե իր խուսո-
րում, ուր և բռնվում ե, սակայն կարողանում ե փախչել. յերեք
ամիս թափառում ե հայտնի չե ուր: Վերջապես, մեծ պասին,
մի անգամ յերեկոյան ծածուկ գալիս ե իր տունը և բաղխում
պատուհանը: Կինը ներս ե առնում նրան և այդ մասին իմաց
տալիս կազակներին: Պուգաչովը նորից ե բռնվում և պահակի
հսկողությամբ ուղարկվում հետախույզին՝ ավագանի Մակարո-
վին՝ Նիժնի—Զիբրսկ ստանիցա, իսկ այնտեղից Զերկասկ: Ճա-
նապարհից նա կրկին փախչում ե և այդ ժամանակից այլևս
չի հայտնվել Դոնում:

1772 թվի վերջին պալատական գործերի կանցելյարիա
բերված Պուգաչովի տված ցուցմունքներից առդեն իսկ հայտնի

յեր, վոր իր փախուստից հետո նա թագնվելիս ե յեղել լեհական
սահմանի այն կողմը, Վետկա կոչված աղանդավորական ավա-
նում: Հետո անցագիր ե վերցրել Դոբրյանսկի առաջապահ պոս-
տից, ասելով, վոր լեհաստանցի ե և մի կերպ անցել ե դեպի
Յահիկ, վողորմությամբ ապրելով:—Սույն բոլոր տեղեկություն-
ները հրապարակվեցին, այն ինչ կառավարությունն արգելեց-
ժողովրդին խոսել Պուգաչովի մասին, վորի անունը հուզում եր
խաժամուժ ամբոխին: Վոստիկանական սույն ժամանակավոր
միջոցը որենքի ուժ ուներ մինչև հանգուցյալ թագավոր կայսր
Ալեքսանդրի գահ բարձրանալը, յերբ թուլատրվեց գրել ու
տպել Պուգաչովի մասին: Մինչև որս ել այն ժամանակա
խաժամուժության զառամշալ վկաները դժկամությամբ են
պատասխանում հետաքրքրվողների հարցերին¹⁾:

1) Ուրբայան կազակները սեծ մասամբ աղանդավորներ (մանավանդ ծերերը) մինչև հիմա ել կապված են Պուգաչովի հիշատակին: Մեղք ե ասել, թե սենք գանդատպում ենք նրանից, ասում եր ինձ-մի 80-ամյա կազակունիք. նա մեղ չարիք չի պատճառել:—Հապա մի պատմիք ինձ, ասում եյի, յես Դիմիտրի Պյանովին, —թե ինչպես Պուգաչովը յեղել ե քո հարսանեալրը:

— Նա քեզ համար ե Պուգաչովի՝ զայրացած պատասխանեց ինձ ծերը, իսկ ինձ համար նա մեծ թագավոր Պյոտր Ֆեոդորովիչն եր:—Յերբ յես հիշում եյի նրա անասնական գաժանության մասին, ծերերը արդարացնում եյին նրան ասելով: «կամքը նըանը չեր, մեր հարբեցողներն եյին պատում նրա մտքերը Ծանոթ, հեղինակի»

Հինգերորդ գլուխ

Բիբիկովի կարգագրությունները:—Առաջին հաշողությունները:—Սամարայի և Զայխնակայի գրավում:—Դերժավին:—Միխալսոն:—Յափիյան քաղաքի պաշարման շարունակությունը:—Պուգաչովի հարսանիքը:—Ելեցկայա Զաշչիտայի կործանումը:—Լիսովի մահը:—Ճակատամարտ Տատիչչելյայի մոտ:—Պուգաչովի փախուստը:—Խլոպուշայի մահապահիմը:—Որենբուրգի ազատումը:—Պուգաչովը ջարդվում է յերկրորդ անգամ:—Կորվ Զենոնկովկայի մոտ:—Ռուֆայի և Յափիյան քաղաքի ազատումը:—Բիբիկովի մահը:

Վերջապես ամեն կողմից Պուգաչովի դեմ ուղարկված զորքերը սկսեցին մոտենալ իրենց նշանակված տեղին: Բիբիկովը նրանց ուղղեց գեպի Որենբուրգ: Գեներալ-մայոր իշխան Գոլիցինը իր կորպուսով պետք ե փակեր Մոսկվայի ճանապարհը, գործելով Կազանից մինչև Որենբուրգ: Գեներալ-մայոր Մանսուրովին հանձնված եր աջ թեր՝ Սամարայի գիծը պաշտպանելու համար, գեպի ուր իր զորախմբով հետևեց մայոր Մուլֆելը և յենթագնդապետ Գրինցովը: Գեներալ մայոր Լարիոնովը ուղարկված եր դեպի Ռուֆա և Յեկատերինբուրգ: Դեկալոնդը պաշտպանում եր Միբիրը և պետք ե մայոր Գագրինին դաշտային մի զորախմբով ուղարկեր Կունդուրը պաշտպանելու: Մալիկովա յեր ուղարկված գվարդիայի պարուչիկ Դերժավինը՝ Վոլգան Պենզայի և Սարատովի կողմից պաշտպանելու համար: Հաջողությունն արդարացրեց այս կարգագրությունները: Բիբիկովը սկզբում կատածում եր իր զորքի վոգու արիության վրա: Գնդերից մեկում (Վլադիմիրսկի գնդում) հայտնվեցին Պուգաչովի կողմնակիցներ: Գնդի անցնելիք քաղաքների պետերին հրամայված եր շորերը փոխած չինովնիկներ ուղարկել կարակները: Այսպիսով խոսվարաները յերևան բերվեցին և բռնվեցին, չետադայում Բիբիկովը դոհ եր գնդերից: «Գոր-

ծերս՝ գոհություն աստծու՝ (գրում եր նա փետրվարին) ժամ առ ժամ լավ են գնում. զորքերը մոտենում են չարագործների քնին: Վոր ինձնից գոհ են (Պետրուրդում), դա յես տեսնում եմ բոլոր նամակներից, միայն թե սագին հարցնեյին—վոտներդ չեն մրսում արդյոք»:

Մայոր Մուլֆելը մի դաշտային զորախմբով դեկտեմբերի 29-ին մոտեցավ Սամարային, վոր Կախորյակին գրավել եր բունտարների մի հրոսակ և հանդիպելով նրանց, ջարդեց ու քշեց մինչև քաղաք: Այստեղ նրանք քաղաքի թնդանոթների պաշտպանության տակ փորձեցին դիմադրել: Սակայն դրագուն-ները¹⁾ թրերով հարձակվեցին և քաղաք մտան, փախչողներին կոտորելով և ձիերի սմբակների տակ տրորելով: Հենց այդ ժամանակ Սամարայից յերկու վերստի վրա յերևացին Ստավրոպոլիսն կամիկները, վորոնք գալիս ելին բունտարներին ոգնության: Նրանք փախան, տեսնելով իրենց դեմ ուղարկած հեծելազորը: Քաղաքը մաքրվեց: Վեց թնդանոթ և յերկու հարյուր գերի ընկան հաղթողի ձեռը: Մուլֆելից հետո Սամարա մտան յենթագնդապետ Գրինցովը և գեներալ-մայոր Մանսուրովը: Վերջինս անհապաղ մի զորախումբ ուղարկեց Ստավրոպոլիսությամբ՝ կամիկներին խաղաղեցնելու համար. սակայն նրանք ցրիվ յեկան փախան և զորախումբը նրանց չտեսած վերադապետ Սամարա:

Գնդապետ Բիբիկովը, վորը չորս գրենադերյան վաշտերով և հուսարների մի եսկադրոնով Ղաղանից ուղարկված եր Բուգուլմայում առանց վորկ գործողության կանգնած գեներալ-մայոր Ֆրեյմանին ոգնության, շարժվեց դեպի Զայխնսկ, վորի յոթանասունամյա պարետը՝ կապիտան Մերտվեցովը, պատվով եր ընդունել ավագակների հրոսակին, տալով նրանց քաղաքի իշխանությունը: Բունտարարներն ամրացան, ինչպես կարող ենին. դեռևս քաղաքից հինգ վերստի վրա, Բիբիկովը լսեց նրանց թնդանոթաձգությունը: Նրա վերանակալիները ջարդվեցին, մարտկոցները դրավվեցին, արվարձանները առան. բոլորը փախան: Քսաննեհինգ բունտարար գյուղեր հնազանդության յեկան: Որական մինչև չորս հազար զղջացող գյուղացիներ ելին ներկայանում Բիբիկովին, նրանց տոմսեր ելին տալիս և բաց թողնում իրենց աները:

1) Գրագուններ—այլուձիի մի տեսակը, յերբ հեծյալներն էջնում ելին ձիերից՝ մարտն ընդունելու համար: Ծ. թ.

Դերժավինն իր ձեռքի տակ ունենալով յերեք փուղելերայան վաշտեր¹), հնագանդության բերեց իրգիզի ավերին գտնվող աղանդավորական գյուղերը և Յախիկի ու Վոլգայի միջև թափառական վաչկատուն ցեղերի հորդաները: Մի անգամ տեղեկանալով, վոր մի գյուղում բազմաթիվ ժողովուրդ եւ հավաքված՝ Պուգաչովի մոտ ծառայության գնալու դիտավորությամբ, յերկու կազակներ հետն առած նա յեկալ ժողովատեղ և ժողովրդից բացատրություն պահանջեց: Դրգուհներից յերկուսը դուրս յեկան ամբոխից, հայտնելով նրան իրենց դիտավորությունը և սկսեցին մոտենալ նախատինքներով ու սպառնալիքներով: Ժողովուրդն արդեն պատրաստ եր մոլեգնելու: Սակայն Դերժավինը խստությամբ գոռաց նրանց վրա և իր կազակներին հրամայեց կախել զույգ գրգորիչներին: Նրա հրամանն իսկուն և թ կատարվեց և հավաքվածները ցաք ու ցրիվ փախան:

Գեներալ-մայոր Լարիոնովը, ազնվականական լեզիոնի պետը, վոր ուղարկված եր Ուժան աղատելու, չարդարացրեց ընդհանուր հույսերը: «Իմ մեղաց համար (դրում եր Բիբիկովը) վզիս կապվեց յեղայրն իմ Ա. Է., վորն ոկզրում ինքը պատրաստակամություն հայտնեց հրամանատարություն անել առանձին դետաշմենտ...²), իսկ հիմա տեղից շարժել չեմ կարողանում»: Լարիոնովը մնում եր Բակալիում առանց վորեւ գործողության: Նրա անընդունակությունը գլխավոր հրամանատարին հարկադրեց նրա տեղ՝ ուղարկել յերեմն իր ներկայությամբ վիրավորված և կոնֆեղերատների դեմ մղվող պատերազմում արդեն իսկ աչքի թնկած սպա, այդ ժամանակ յենթագնդապետ Միխելսոնին:

Իշխան Գոլիցինն ընդունեց Ֆրեյմանի զորքերի հրամանատարությունը: Հունվարի 22-ին նա անցավ Կամա գետը: Փետրվարի 6-ին նրան միացավ գնդապետ Բիբիկովը. 10-ին Մանսուրովը: Զորքը շարժվեց դեպ Որենբուրգ:

Պուգաչովը գիտեր զորքի մոտենալը և այդ մասին քիչ եր հոգում: Նա իր հույսը դրել եր շարքայինների դավաճանության

1) Ֆուլելերն եր հետևակազոր, վոր զինված եր կայծաքարի սարքունեցող հրացաններով: Ֆ. զորքամասերը առաջին անգամ յերեցին XVII դ. 2-րդ կերպին:

2) Դեմագենտ առաջակա այս կամ այն կարելու ու շատապատճենը: Մ. թ.

և զորապետների անհոգության վրա:—Ի՞նչերը կընկնեն մեր ձեռը, —պատասխանում եր նա իր համախոհներին, յերբ նրանք հաստատապես կոչ են անում նրան դուրս գալ մոտեցող զորախմբերի գեմ: Իսկ պարտության դեպքում նա մտադիր եր փախչել, իր սրիկաներին թողնելով բախտի քմահաճույքին: Այդ նպատակի համար նա մեծ խնամքով պահում եր յերեսուն ձի, վոր նա ընտրել եր ձիաբազի ժամանակ: Բաշկիրները կասկածի տակ եին առնում նրա դիտավորությունը և տրանջում: «Դու մեղ դրդեցիր բունտ անել —ասում եյին նրանք, —և ուզում ես մեղ թողնել, իսկ հետո մեղ կխաղաղեցնեն, ինչպես խաղաղեցրել են մեր հայրերին»: (1740 թվի մահապատճները դեռ ևս թարմ եյին նրանց հիշողության մեջ¹): Իսկ յահկան կազակներն անհաջողության գեպքում մտադիր եյին Պուգաչովին հանձնել կառավարության ձեռը և դրանով իրենց համար ներումն վաստակել, Նրանք պահպանում եյին նրան ինչպես պատանդի: Բիբիկովը հասկանում եր նրանց և Պուգաչովին, յերբ փոն-վիպինին գրում եր հետեւյալ նշանակալից տողերը. «Պուգաչովը վոչ այլ ինչ ե, քան յեթե մի խրտվիլակ, վոր խաղալիք ե դարձել գողերի՝ լահկան կազակների ձեռին. կարելու Պուգաչովը չե, կարերն ընդհանուր վրդովմունքն ե»:

Պուգաչովն Որենբուրգի մոտից գնաց դեպի Յահկան փոքրիկ քաղաքը: Նրա գալը կենդանացրեց խոռվարաների գործունեյությունը: Հունվարի 20-ին նա ինքը դեկավարեց հիշատակության արժանի հարձակումը: Գիշերը պայմանացրեց Ստարիցալի (Յահկին նախկին հունի) մոտ հաստատված մարտկոցի տակի պատճեղի մի մասը: Խոռվարաները ծխի և փոշու տակ դեպի բերդ նետվեցին, գրավեցին խրամատը և սանդուխներ դնելով, փորձեցին բարձրանալ պատճեղի վրա: սակայն չարաչար յետ մղվեցին: Բոլոր բնակիչները, մինչև իսկ կանայք ու յերեխներն ոգնում եյին նրանց: Պուգաչովը նիզակը ձեռին կանգնած եր խրամատի մեջ, սկզբում աշխատելով սիրալիբությամբ զըր-

1) Բաշկիրների ապստամբական-շարժումը տևեց 1735 թ. մինչև 1741 թ. Բաշկիրներ IX դարից բնակություն եյին հաստատել մերձ-ուրալյան յերկրամասում և դիմացելով ոռուսական գաղութացմանը, մի շարք ապստամբություններ բարձրացրին, վորոնք միշտ ել ճնշվում երին ամենադաժան թղանակներով: Մասնագործությունը ճնշելու միջոցին հրամարակ յեղափառ գոյուղ, մոտ 30 հազար բաշկիրներ մահապատճի յենթարկեցին և կամ բռնությամբ ստրուկներ դարձան: Սարսափ տարածելու սպատակով ուսու կառավարությունը կարել ավեց շարժման գործին մասնակցների (301 հոգու) քթերն ու ականջները: Մ. թ.

գոել հարձակվողների յեռանդը, վերջապես ինքն իր ձեռով ծակուելով փախչողներին: Հարձակումը տևեց ինն ժամ անընդհատ անդադար վորոտացող թնդանոթաձգության ու հարցանաձգության տակ: Վերջապես յենթագնդապետ Տոլստովալովը հիսուն կամավորների հետ արտագրոն արեց, խրամատը մաքրեց և քշեց բունտարարներին, սպանելով մինչև չորս հարյուր մարդ և կորցնելով տարնեհինգից վոչ ավել: Պուգաչովն ատամներն եր կրծտացնում: Նա յերդվեց կախել վոչ միայն Սիմոնովին և Կոլիովին, այլ և վերջինիս ամբողջ ընտանիքը, վորայդ ժամանակ գտնվում եր Որենբուրգուր: Այսպիսով մահվան եր դատապարտված և չորսամյա մի մանուկ՝ հետագալում փառապանձ կոիլովը:

Պուգաչովը Յաիկյան քաղաքում տեսավ մի ջահել կազակուհի՝ Ուստինյա Կուզնեցովային և սիրահարվեց նրան: Նա խնդրեց աղջկա ձեռը. հայրն ու մայրն ապշեցին և պատասխանեցին նրան. «Վողորմի՛ր մեզ, տեր թագավոր, մեր աղջիկն իշխանուհի չե, թագուհի չե, նա ի՞նչպես կարող ե քեզ կին լինել: Համ ել՝ դու ի՞նչպես պիտի ամուսնանաս, յերբ մեր վողորմած մայր թագուհին դեռ կենդանի յե»: Պուգաչովը սակայն փետըրվարի սկզբին ամուսնացավ Ուստինյայի հետ, նրան թագուհի անվանեց, նրա համար շտատս-դամաներ և ֆրեյլիններ նշանակեց յաիկյան կազակուհիներից և ուզում եր, վոր մաղթանքի ժամանակ Պյոտր Ֆեոդորովիչից հետո հիշեն թագուհի Ուստինյա Պետրովնային: Տերտերները համաձայնեցին, ասելով թե այդ բանի համար թույլտվություն չեն ստացել սինողից: Նրանց հրաժարվելը վշտացրեց Պուգաչովին, բայց նա չափեց իր պահանջը: Նրա կինը մնաց Յաիկյան փոքրիկ քաղաքում և ինքը ամեն շաբաթ գնում եր նրա մոտ: Պուգաչովի ներկայությունը միշտ նշանակալից եր գառնում բերդի վրա կատարվող նորանոր հարձակումներով: Պաշարվածներն իրենց կողմից չեյին կորցնում արիությունը: Հրացանաձգությունը չեր դադարում, արտիելիքներն անպակաս եյին:

Քետրվարի 19-ին գիշերը քաղաքից բերդ վազեց մի փոքրիկ տղա և հայտնեց, վոր նախընթաց որվանից զանգակատան տակը ական և տարված, ուր դրված ե քրան փութ վառոդ, և վոր Պուգաչովը կարգադրել ե նույն որն սեթ հարձակվել բերդի վրա: Այդ տեղեկությունն անհավանական թվաց: Սիմոնովը յենթագրում եր, վոր տղան դիտմամբ և ուղարկված սոսկ ահ

ու սարսափ տարածելու համար: Պաշարվածները հակաական փորեցին և չլսեցին հողային աշխատանքի վոչ մի ձախն. քսան փութ վառոդով գժվար եր պայթեցնել վեց հարկանի բարձր զանգակատունը: Սակայն, քանի վոր նրա տակ, ներքնահարկում, պահավում եր վառոդի ամբողջ պաշարը (վորի մասին կարող եյին իմանալ և խոռվարաները), ուստի և շտապեցին դա հեռացնել ալբանութից, քանդեցին աղլուսե հատակը և ոկսեցին հակաական տանել: Կայազորը պատրաստվեց. պայթիունի և հաբճակման եյին սպասում: Զանցավ յերկու ժամ, յերբ հանկարծ ականը գործի գրվեց. զանգակատունը հանդարտ յերերվեց: Ներքեկի սենյակը քարուքանդ յեղավ և վերին վեց հարկերն իջան, ճիւկելով զանգակատան մոտ կանգնած մի քանի մարդկանց: Քարերն առանց ցրվելու թափեցին կուտակ-կուտակ: Իսկ ամենավերին հարկում թնդանոթի հետ յեղած վեց մարդկեկ այնտեղից կենդանի վայրը ընկան, իսկ նրանցից մեկը, վոր ալդ ժամանակ քնած եր, ցած իջավ վոչ միայն առանց վորեե վնասի, այլ մինչև իսկ առանց արթնանալու:

Զանգակատունը նոր եր թափել, յերբ բերդից արդեն սկսեցին վորոտալ թնդանոթները. հրացանները ձեռին պատրաստ կանգնած կայազորը իսկույն սեթ բռնեց զանգակատան փլատակները և այնտեղ մի մարտկոց դրեց, Խոռվարաները, վորոնք չեյին սպասում այսպիսի գիմավորում, կանգ առան վարանման մեջ. մի քանի ըռպեյից նրանք բարձրացրին իրենց սովորական աղաղակները, սակայն վոչ վոք առաջ չեր զնում: Իզուր ղեկավարները կանչում եյին. դեպի քանդվածը, ուն, առաջ, քաջ ատամանները: Հաբճակում չեղավ. աղաղակները շարունակվեցին մինչև արշալուս և բռնտարարները ցրվեցին, արտնջալով Պուգաչովից, վորն իրենց խոստացել եր, թե զանգակատան պայտյունի հետ բերդի վրա քարե կարկուտ կտեղա և կճմի ամբողջ կայազորը:

Մյուս որը Պուգաչովն Որենբուրգի մոտից լուկը ստացավ իշխան Գոլիցինի մոտենալու մասին և շտապով մեկնեց Բերդա, հետը վերցրեց հինգ հարյուր ձիավոր և մինչև հազար հինգ հարյուր սայլեր: Սույն լուրը հասավ և պաշարվածներին: Նրանք անձնատուր յեղան ուրախության, կարծելով թե յերկու շաբաթից իրենց ողնությունն կհասնի: Սակայն նրանց փրկության բոպեն դեռ հեռու յեր:

Պուգաչովի հաճախակի բացակայությունների ժամանակ

Շիգալեվը, Պաղուրովը և Խլոպուշան ղեկավարում եյին Որեն-
բուրգի պաշարումը։ Ոգտվելով նրա բացակայությունից Խլո-
պուշայի խելքին փչեց գրավել իլեցկայա-Զաշշիտան (ուր քա-
րաղի հանքեր կային), և փետրվարի վերջին իր հետ վերցնելով
չորս հարյուր մարդ, հարձակվեց նրա վրա։ Զաշշիտան գրավեց
այնտեղի աքսորական գործավորների ողնությամբ, վորոնց
մեջ եր գտնվում և Խլոպուշայի ընտանիքը։ Արքունական գույքը
թալանվեց, սպաներին կոտորեցին, բացի մեկից, վորին խնայե-
ցին գործավորների խնդրանքով։ կալանավորներին միացրին
խռովարանների հրոսակախմբին։ Բերդա վերադառնալով՝ Պու-
գաչովը գժգոհեց խիզախ տաժանակրի ինքնագլուխ գործի հա-
մար և նախատեց նրան Զաշշիտայի ավերման առիթով։ Վոր-
պես թե վնաս և յեղել պետական գանձարկղին։ Պուգաչովը
տաս հազար ընտիր զորքերով դուրս յեկավ իշխան Գոլիցինի-
դեմ, Որենբուրգի պատերի տակ թողնելով Շիգային յերկու հա-
զար մարդկանցով։ Նախորյակին նա հրամայեց ծածուկ կերպով
խեղդամահ անել իր հավատարիմ համախոհներից մեկին՝ Դմիտ-
րի Լիսովին։ Դրանից մի քանի որ առաջ նրանք միասին Բերդա-
եյին գնում Հարդալեյից և, հարբած լինելով ճանապարհին կը ը-
վեցին։ Լիսովը հետեւից ձին քշեց հասավ Պուգաչովին և հար-
վածեց նրան նիզակով։ Պուգաչովը ձիուց ընկավ, սակայն զրա-
հը, վոր նա միշտ կը ու շորերի տակից, փրկեց նրա կլանքը։
Ընկերները նրանց հաշտեցրին և Պուգաչովը դեռևս Լիսովի մա-
հից մի քանի ժամ առաջ խմում եր նրա հետ։

Պուգաչովն առավ Տոցկայա և Սարոչինսկայա բերդերը, և
իր սովորական հանդինությամբ գիշերով, սաստիկ բքի ժամա-
նակ հարձակվեց Գոլիցինսի առաջավոր զորախմբերի վրա, սա-
կայն իստ մզգեց մայոր Պուշկինի և մայոր Յելագինի կողմից։
Այս կովի մեջ սպանվեց քաջ Յելագինը։ Հենց սույն ժամանակ
Մանսուրովը միացավ իշխան Գոլիցինսի հետ։ Պուգաչովը նահան-
չեց գեպի նովոսերգիեվսկի, չկարողանալով այրել իր թողած-
բերդերը։ Գոլիցինը իր պաշարները չորս հարյուր մարդկանց և
ութ թնդանոթների պաշտպանության տակ Սարոչինսկայա-
բերդում թողնելով, յերկու որից հետո շարունակեց իր ճանա-
պարհ։ Պուգաչովը շարժվեց գեպի Իլեցկ քաղաք, և հանկարծ-
շրջվելով գեպի Տատիշչեվա, այստեղ կանգ առավ ու սկսեց ամ-
րանալ։ Գոլիցինն ուղղում էր իլեցկ քաղաքն ուղարկել իւնթա-

գնդապետ Բեղըյագային յերեք եսկադրոն հեծելազորով, հետն
ել հետևակազոր և թնդանոթներ, իսկ ինքը գնաց ուղիղ Պե-
քելուցկայա (ուր և Բեղըյագան վերաբարձավ). այնտեղից, գու-
մակը թողնելով յենթագնդապետ Դրինյովի հրամանատարության
տակ գտնվող մի բատալիոնի պաշտպանության ներքո, մարտի
22-ին մոտեցավ Տատիչչեվային:

Բերդը, վոր անցյալ տարի առել և այրել եր Պուգաչովը,
նա արդեն կարգի յեր բերել: Այրված փայտե ամրությունները
նա փոխարինել եր ձնե ամրություններով: Պուգաչովի կարգա-
դրությունները զարմացրին իշխան Գոլիցինին, վոր նրանից
չեր սպասում ուղմական արվեստի այդպիսի գիտելիքներ:
Գոլիցինն սկզբում յերեք հարյուր մարդ ուղարկեց թշնամուն
հետազոտելու համար: Խոռվարարները թագնվելով, նրանց թո-
ղին մոտենալու մինչև բերդի տակը և հանկարծ ուժգին ար-
տադրոհի լեան, սակայն նրանց կասեցրին առաջին զորախըմ-
քին ոգնության ուղարկած յերկու եսկարդոնները: Գնդապետ
Բիբիկովն իսկույն և ուղարկեց յեգերներին, վորոնք դահուկ-
ներ կապած խոր ձյան վրայով վազելով գրավեցին բոլոր նպաս-
տավոր բարձունքները: Գոլիցինն իր զորքը բաժանեց լերկու-
զորասկուների, սկսեց մոտենալ և կըակ բացեց, վորին բերդից
պատասխանեցին նույնքան ուժեղ: Թնդանոթաձգությունը շա-
բունակվեց յերեք ժամ: Գոլիցինը տեսավ, վոր միայն թնդա-
նոթներով հաղթելը անհնար և և հրամայեց գեներալ Ֆրեյմա-
նին ձախ զորասյունն առած գնալ հարձակման: Պուգաչովը նրա
գեմ հանեց յոթ թնդանոթ: Ֆրեյմանը խլեց դրանք և նետվեց
սառած պատճեշի վրա: Խոռվարարները պաշտպանվում եյին
կատաղի կերպով, սակայն ստիպված եյին տեղի տալ կանոնա-
վոր զեմքի ուժին—և փախան ամեն կողմ: Հեծելազորը, վոր
մինչև այդ անգործության մեջ եր, հետապնդեց նրանց բոլոր
ճանապարհներով: Արյունհեղությունը սոսկալի յեր: Միայն
բերդում ընկան մինչև հազար յերեք հարյուր խոռվարարներ:
Տատիշեկոյի շուրջը՝ քսան վերստ տարածության վրա թափված
ելին նրանց դիակները: Գոլիցինը կորցրեց մինչև չորս հա-
րյուր մարդ սպանված ու վիրավոր, այդ թվում և ավելի քան
քսան սպաներ: Հաղթությունը վճռական եր: Յերեսունավեց
թնդանոթ ու ավելի քան յերեք հազար գերիներ ընկան հաղթո-
ղի ձեռը: Պուգաչովը վաթսուն կազակների հետ ձեղքեց թշնա-
մու զորքը և չորս հոգով սրարշավ հասավ Բերդա ավանը լուր

տալով իր պարտության մասին, Բունտարարներն սկսեցին դուրս գալ հերդայից վորը ձիով, վոր սահնակով: Սայլերի վրա բարձեցին թալանած գույքը: Կանալով և յերեխաները վոտքով եին գնում: Պուգաչովը հրամայեց կոտրել իր խրճիթի մոտ ընկած ողու տակառները՝ յերկուող կրելով հարբեցությունից ու խառնաշփոթությունից: Ողին արտավիժեց փողոց: Նույն միջոցին Շիգայելով տեսնելով, վոր ամեն ինչ կորած ե, մտածեց ներումն վաստակել իր համար, և Պուգաչովին ու Խլոպուշային բռնելով, իր կողմից մարդ ուղարկեց Որենբուրգի նահանգապետին, առաջարկելով նրան՝ հանձնել Պուգաչովին և խնդրելով՝ իրեն ազդանշան տալ թնդանոթային յերկու կրակոցով: Հարյուրաբետ լոգինովը, վորն ուղեկցել եր Պուգաչովին փախատան ժամանակ, սույն տեղեկությամբ ներկայացավ Ռեյնսդորֆին: Խեղճը Ռեյնսդորֆը չհամարձակեց հավատալ իր բախտին և ամբողջ յերկու ժամ չկարողացավ վճռել՝ տալ պահանջված աղդանշանը: Մինչ այդ Պուգաչովը և Խլոպուշան ազատվեցին Բերդայում գտնվող աքսորականների ձեռով: Պուգաչովը փախավ տասը թնդանոթով, թալանած ավարով և մսացած յերկու հազար սրիկանների հետ: Խլոպուշան սրարշավ Հարդալե յեկավ, դիտավորություն ունենալով փրկելու իր կողմն ու վորդուն: Թաթարները կապեցին նրան և այդ մասին մարդ ուղարկեցին նահանգապետին հայտնելու: Յերեկի տաժանակիրը Որենբուրգ բերվեց, ուր և վերջապես կտրեցին նրա գլուխը 1774 թվի հունիսին:

Որենբուրգի բնակիչները լսելով իրենց ազատման մասին, խառնիսուուն խմբերով դուրս նետվեցին քաղաքից, ընկան Ռեյնսդորֆի՝ Բերդա ավանն ուղարկած վեցհարյուր հետևակ մարդկանց հետեկից և գրավեցին կենսամթերքները: Բերդայում գտնվեց տասնութ թնդանոթ, տասնութ տակառ պղնձագրամ և մեծ քանակությամբ հացահատիկ: Որենբուրդում փութացին աստծուն գոհություն հայտնել անսպասելի փրկության համար: Որենում եյին Գոլիցինին: Ռեյնսդորֆը գրեց նրան՝ շնորհավոր հաղթությունը և անվանելով Որենբուրգի փրկիչը: Ամեն աեղերից սկսեցին պարեն կրել քաղաք: Լիություն ընկավ. վեցամալա աղետալի պաշարումը մոռացվեց մի ուրախ վայրկյանում: Մարտի 26-ին Գոլիցին յեկավ Որենբուրգ: բնակիչները նրան ընդունեցին աննկարագրելի խանդավառությամբ: Բիբիկովն անհամբերությամբ սպասում եր այս բեկմանը:

Ուազմական գործողություններն արագացնելու համար նա դուրս յեկավ Ղազանից և Բուգուլմայում առավ Պուգաչովի կատարյալ պարտության լուրը: Նա անսաելի ուրախացավ, «Ասես մի ջաղացաքար ընկավ սրտիս վրայից (գրում եր նա մարտի 26-ին իր կնոջը): Այսոր իմ զորքերը կմտնեն Որենբուրգ, անհապաղ և յես կշտապեմ այնտեղ հասնելու, վորպեսզի ել ավելի ճարպկությամբ շարժեմ իմ զորքերը. իսկ քանի սպիտակ մագեր ավելացան մորուքիս մեջ, դա աստված գիտե, իսկ գլխիս ճաղատությունն ավելի մեծացավ, սակայն յես սառնամանիքին դուրս եմ գալիս առանց կեղծամիր»:

Այնինչ Պուգաչովը մի կողմ թողնելով իր յետեր ուղարկված հեծելագետերին, 24-ի առավոտան հասավ Սեյխտավսկայա ավանը, այրեց այն և գնաց Սակմարսկ քաղաքի վրա, ճամբին նոր սրիկախմբեր հավաքելով: Հավանորեն նա յենթազրում եր, վոր Գոլիցինը Տատիշչեվայից իր բոլոր ուժերով շարժված կլինի դեպի Յակիցան փոքրիկ քաղաքը, ինչու և հանկարծ գնաց գրավելու Բերդա ավանը, հույս ունենալով անսպասելի կերպով առնել Որենբուրգը: Այդորինակ հանգնության մասին Գոլիցինը տեղեկանալով գնդապետ Խորվատից, վորը Պուգաչովին հետապնդում եր սկսած Տատիշչեվայից, իր գորքն ուժեղացրեց Որենբուրգում գտնվող հետևակախմբերով և կազակներով. վերջիններիս համար հատկացնելով իր սպաների ձիերը, անմիջապես գնաց ինքնակոչի դեմ և նրան հանդիպեց Ղարղալեյում: Պուգաչովը, տեսնելով իր սխալը, սկսեց նահանջել, վարպետությամբ ոգտվելով տեղադրությունից: Մի նեղ ճանապարհի վրա գնդապետ Բիբիկովի և Արշենեսկու դեմ նա հանեց յոթ թնդանոթ և նրանց պաշտպանության տակ արագ կերպով շարժվեց դեպի Սակմարա գետը: Բայց այդ միջոցին Բիբիկովին ոգնության յեկան թնդանոթներ. սարը գրավելով՝ նա դրեց իր մարտկոցը. Խորվատը վերջին կերձի մեջ հարձակվելով խորվարաների վրա, թնդանոթները իւլեց և փախուստի մատնելով, ութը վերստ հետապնդեց նրանց խառնիճաղանձ խմբերը և հետները միասին մտավ Սակմարսկ քաղաքը: Պուգաչովը կորցրեց իր վերջին թնդանոթները, չորս հարյուր սպանված և յերեք հազար հինգ հարյուր գերի ընկած մարդ: Վերջիններիս թվում ելին գտնվում և նրա գլխավոր համախորհները՝ Շիգայելը, Պիչիտալինը, Պագուրովը և մյուսները: Պուգաչովը չորս գործարանային գյուղացիների ետ փախավ դեպի Պրեչիստենսկայա և այստեղից՝

ուրալլան գործարանները։ Հոգնած այրուճին չկարողացավ հասնել նրան։ Այս վճռական հաղթությունից հետո Գոլիցինը վերադարձավ Որենբուրգ, ուղարկելով Ֆրեկմանին—Բաշկիրիան խաղաղեցնելու համար, Արշենևսկուն—Նովո՛՛Մուսկովսկայա ճանապարհ մաքրելու, իսկ Մանսուրովին—դեպի Իլեցկ քաղաք, վորպեսզի այն մասը մաքրելուց հետո նա գնա Սիմոնովին ազատելու։

իր կողմից վոչ պակաս հաջողությամբ եր գործում և Մի-
խելսոնը. Մարտի 18-ին ընդունելով իր զորախմբի հրամանա-
տարությունը, նա խկույն և բարձր շարժվեց դեպի Ուժա. Նրա
դեմ, ճանապարհը փակելու համար Զիկան ուղարկեց յերկու հա-
զար մարդ չորս թնդանոթներով, վորոնք և նրան սպասում
եին ժողովով գյուղում. Միխելսոնը նրանց իր թիկունքում
թողնելով, ուղիղ գնաց Չեսնոկովկայի վրա, ուր կանգնած եր
Զիկան տաս հազար խոռվարաններով և ճանապարհին ցրելով մի
քանի մանր զորախմբեր, 25-ի լուսաբացին յեկավ Տրեբիկովո
գյուղը (Չեսնոկովկայից հինգ վերստի վրա). Այստեղ նրա դեմ
դուրս յեկավ բունտարարների մի ամբոխ յերկու թնդանոթնե-
րով: Մայոր Խարինը ջարդեց նրանց և ցրեց, յեզերները խլե-
ցին թնդանոթները և Միխելսոնն առաջ շարժվեց: Նրա գումակն
ընթանում եր հարյուր մարդու և մի թնդանոթի պաշտպանու-
թյան տակ: Հարձակման դեմքում ևս նրանք ելին պաշտպանում
Միխելսոնի թիկունքը, 26-ին, լուսադեմին Զուբովկա գյուղի
մոտ նա հանդիպեց խոռվարաններին: Նրանց մի մասը՝ դահու-
կավորներ և ծիավորներ՝ դուրս վազեց գյուղից և ճանապարհի
յերկու կողմը փռվելով, աշխատում եր շրջապատել նրան: Յե-
րեք հազար մարդ, տաս թնդանոթներով ուղիղ նրա վրա եյին
գալիս: Նույն միջոցին կրակ տեղացին գյուղում դրած մարտկո-
ցից: Կոիվը տեսեց չորս ժամ: Բունտարարները կովում եյին
քաջաբար: Վերջապես Միխելսոնը տեսնելով նրանց ոգնության
յեկող այրուձին, իր բոլոր ուժերն ուղղեց գլխավոր խառնիձա-
ղանձ բազմության դեմ և իր հեծելազորին, վորը կռվի սկզբում
իբրև հետևակ եր գործում, հրամայեց նստել ձիերը և խփել
թրերով: Առաջավոր խմբերը փախան, թողնելով իրենց թնդա-
նոթները: Խարինը նրանց թրատելով՝ հետները միասին մտավ
Չեսնոկովկա: Այսինչ դեպի Զուբովկա նրանց ոգնության յեկող
այրուձին հետ մղվեց և փախավ նույնպես դեպի Չեսնոկովկա,
ուր նրա դեմ դուրս յեկավ Խարինը և բոլորին գերի վերցրեց:

Դահուկավորները, վորոնք արդեն անցել ելին Միխելսոնի թիկունքը և նրան կտրել գումակից, նույն այդ ժամանակ ջարդվեցին գրենադերների յերկու վաշտերի կողմից: Նրանք ցըսվելով փախան անտառները, Գերի ընկան յերեք հազար բունտարացներ: Գործարանային և եկոնոմիկային¹⁾ գյուղացիներին բաց թողին իրենց գյուղերը, Վերցվեցին քսանհինգ թնդանոթ և մեծ քանակությամբ պաշարեղեն: Միխելսոնը կախեց յերկու գլխավոր բունտարացների: բաշկիրական ավագին և Զեսնոկովկան գյուղից ընտրվածին: Ուժան աղատվեց: Միխելսոնը վոչ մի տեղ կանգ չառնելով, գնաց Տաբինսկի վրա, ուր, Զեսնոկովկայի ճակատամարտից հետո սրարշավ հասել ելին Ուլյանովը և Զեկան: Այստեղ կազակները նրանց բռնեցին և ավին հաղթողի ձեռը, վորը նրանց շղթայակապ ուղարկեց Ուժա: Դրանից հետո Միխելսոնը հեծելագետներ կարգեց բոլոր ուղղությամբ և կարողացավ վերականգնել անդորրությունը բունտարար գյուղերի մեծ մասում:

Իլեցկ քաղաքը և Ողերնայա ու Ռասսիանայա բերդերը
Պուգաչովի առաջին հաջողությունների այս վկաները, արդեն
թողել եյին խոռվարաբները։ Երանց պետերը՝ Չուլոշնիկովը և
Ղզլրաշինը փախել ելին գեպի Յափկան փոքրիկ քաղաքը։ Տա-
տիշշեվացի տակ ինքնակոչի կրած պարտության լուրը նույն
որն եեթ հասավ նրանց։ Խորվատի հուսարների կողմից հետա-
պնդվող փախչողները սրաբշավ անցան բերդի միջով, աղաղա-
կելով։ «Գլւնների ճարը տեսեք, տղերք, ամեն ինչ կորած ե»։
Նրանք շտապով կապեցին իրենց վերքերը և փութացին գեպի
Յափկան քաղաք։ Շուտով վրա հասավ գարնանացին ձնհալքը։
Գետերը բացվեցին և Տատիշշեվացի տակ սպանվածների մարմին-
ները լողացին բերդերի մոտով։ Սպանվածների կանաքը և
մայրերը կանգնած եյին գետափին, ջանալով նրանց մեջ ձա-
նաչել իրենց ամուսիններին ու վորդիներին։

Ողերնոլում մի պառավ կազմկուհի ամեն որ թափառում եր Յայիկի ափերին և ձեռնափայտով դեպի ափն եր քաշում լու զացող դիակները և ինքն իրեն խոսում... «Վորդյակ, դու յես, դու յես իմ Ստեղպուշկա. Սառը ջուրը չե վոր քո սև գանգուր-ներն ե լվանում»։ և տեսնելով ոտար դեմք, մեղմիկ քշում եր դիակը։

“Մասսուրովը ապօբիլի ե-ին և շ-ին գրավեց թողքած բար-դերը և իլեցկ քաղաքը, վերջինիս մեջ տանելով տասնչորս թըն-

դանոթ: Իշխան, վարարած Բիկովկայով վտանգավոր գետանցի ժամանակ նրա վրա հարձակվեցին Ովչիննիկովը, Պերֆիլիկը և Դեգոյարովը: Խոռվարաբները ջարդվեցին, ցրվեցին: Բեղրյագան և Բորոդինը հետապնդեցին նրանց, սակայն ձնհալքի հետևանքով ձանապարհների անանցանելիությունը փրկեց առաջնորդներին: Մանսուրովն անհապաղ գնաց Յահկյան փոքրիկ քաղաքի վրա:

Բերդը պաշարված եր գեռես տարվա սկզբից։ Պուգաչովի բացակայությունը չեր հանգցնում խոռվարարների յեռանդը Դարբնոցներում լինդեր և բահեր ելին շինվում, մարտկոցներ ելին բարձրանում։ Խոռվարարները յեռանդուն շարունակում ելին իրենց հողալին աշխատանքները, մերթ պատուելով Զեչորի ափը և գրանով վոչչացնելով քաղաքի մի մասի հաղորդակցությունը մյուսի հետ, մերթ խրամատներ փորելով, վորպեղի արշեկեն արտագրուները, Նրանք մտադիր ելին ականներ անցկացնել Ստարիցայի զառիթափով, ամբողջ բերդի շուրջը, մայր տաճարի տակը, մարտկոցի տակ և կամենդանտսկի կոչված շենքերի տակ։ Պաշարվածները գտնվում ելին մշտական վտանգի մեջ և իրենց կողմից հարկադրված ելին ամեն կողմից հակասականներ տանել, դժվարությամբ փորելով մի ամբողջ արշին սառած գետինը. բերդն արգելափակում ելին նոր պատով և պայթեցված զանգակատան ազլուսներով լի պարկերով։

Մարտի 9-ին, լուսաբացին լերկու հարյուր հիսուն շարքակին գինվորներ դուրս յելան ըերգից. արտագրոհի նպատակն եր պաշարվածներին սաստիկ անհանգստացնող նոր մարտկոցի վոչնչացումը։ Զինվորները հասան մինչև կապանները, սակայն հանդիպեցին ուժեղ կրակի։ Նրանք խառնվեցին միմյանց, Խոռվարները նրանց բռնոտեցին կապանների և խրճիթների միջև ընկած նեղ անցքերում։ Նրանք ուզում եյին ալրել այդ խըլքիթները. ծակոտում ելին վիրավորներին ու ընկնողներին և կացիններով կտրում նրանց գլուխները։ Զինվորները փախան։ Նրանցից սպանված եր մոտ յերեսուն մարդ և վիրավորված՝ մինչև ութուն։ Կայազորը լերբեք ալգախի կորուստով չեր վերադաշնել արտյելքից։ Հաջողվից այրել մի մարտկոց, այն ել գլխավորը և մի քանի խրճիթներ։ Դերի բռնված յերեք բռնտարարների ցուցմունքները սաստկացըրին պաշարվածների վհատությունը. նրանք հայտնեցին ըերդի տակ տարված ականների և Պուգաչովի շուտափուրյթ գլուխ մասին։ Սարսափահար Սիմոնովը

հրամայեց ամեն ուղղութիւամբ նոր աշխատանքներ կատարել-նրա տան շուրջը գետինն անընդհատ փորձում եյին գայլիկոն-ներով. սկսեցին նոր խրամատ փորել. դժվարին աշխատանքից ուժասպառ մարդիկ համարյա չեյին քնում. գիշերները կայսզորի կեսը միշտ կանգնած եր հրացանները ձերին պատրաստ. մյուս կեսին թույլատրված եր միայն նստած նիրհել: Լազարեթը լըց-վեց հիվանդներով. ուտեստապաշար մնացել եր վոչ ավել, քան տաս որվա համար. Սկսեցին զինվորներին որական տալ քառորդ փունտ այլուր, այսինքն՝ սովորական չափի մի տասերորդ մասը: Արդեն չկար վոչ ձավար, վոչ ել աղ: Ընկերովի մի կաթ-սա ջուր յեռացնելով և այն ալյուրով սպիտակացնելով, լուրա-քանչյուրն իր գավաթն եր խմում, վորը և կազմում եր նրանց որական սնունդը: Կանայք այլև չկարողացան դիմանալ սովին. Նրանք սկսեցին խնդրել, վոր իրենց թույլ տան բերդից դուրս գալու, վոր և թույլատրվեց նրանց. մի քանի թույլ և հիվանդ գինվորներ դուրս լեկան նրանց լեռներից, սակայն բունտարար-ները ընդունեցին նրանց, իսկ կանանց մի գիշեր պահակների հակողության տակ պահելով, նորից բերդ քշեցին, պահանջելով ազատել իրենց համախոհներին, խոստանալով դրա փոխարեն ընդունել և կերակրել դուրս ուղարկվածներին: Սիմոնովը չհա-մաձայնեց դրան, յերկյուղելով ավելացնել թշնամիների թիվը: Ժամ առ ժամ սովը սոսկալի յեր դառնում: Այլևս չկար կըսով տրվող ձիու միսը: Սկսեցին ուտել շներին ու կատուներին: Պա-շարման սկզբում, դրանից յերեք ամիս առաջ, սառցի վրա սպան-ված ձիեր ելին թողնված. հիշեցին այդ ձիերին և մարդիկ ագա-հությամբ սկսեցին կրծել շների թողած վոսկորները: Վերջապես սպառվեց և սույն պաշարը: Սկսեցին սնվելու նոր միջոցներ գտնել: Գտան մի տեսակ կավ, վորը գերազանցորեն փափուկ եր և առանց ավազախառնուրդի: Փորձեցին յեփել այն և նրանից կազմելով մի ինչ-վոր շփոթ, սկսեցին գործածել վորպես կերակուր: Զինվորները բոլորովին ուժասպառ յեղան: Վոմանք չեյին կա-րողանում քայլել: Հիվանդ մալրերի յերեխաները հյուծվում ե-լին և մեռնում: Կանայք մի քանի անգամ փորձեցին շարժել յին յին լիրենց թույլ տալ քաղաքում մնալու: Նրանց յետ ե-նին քըում՝ նախկին պահանջը դնելով: Ընդունեցին միայն կա-զակուհիներին: Սպասված ոգնությունը չեր դալիս: Պաշարված-ները իրենց հույսո հետաձգում եյին որեցոր, շաբաթից շարաթ:

Բունտարարները ձայն եյին տալիս կալազորին, թե կառավարութան զորքերը ջարդված են, թե Որենքուրգը, Ուժան ու Ղազանը արդեն գլուխ են իջեցրել ինքնակոչին, թե նա շուտով կդա Յահիլան քաղաք, և վոր այն ժամանակ այլևս նրանց չեն խնայի: Իսկ հնազանդություն հայտնելու դեպքում նրա անունից խոստանում եյին վոչ միայն ներումն, այլև պարզեներ: Նույնը նրանք աշխատում եյին ներշնչել այն թշվառ կանանց, վորոնք աղերսում ելին թույլ տալ բերդից քաղաք անցնելու: Պետերի համար անհնար եր հուսադրել պաշարվածներին, թե շուտով ոգնություն կհասնի, քանի վոր այդ մասին վոչվոք այլևս լսել անգամ չեր կարող առանց զայրույթի: այնպես դաժանացած ելին սրտերը յերկարատե ապարդյուն սպասումից: Աշխատում եյին կայազորը պահել հավատարմության և հնազանդության մեջ՝ կրկնելով, վոր խաչտառակ դավաճանությամբ վոչվոք չի փրկի կորսարից, վոր բունտարարները՝ դաշազած տեսական դիմադրությունից, չեն խնայի և յերգմնազանցներին: Աշխատում եյին դժբախտ մարդկանց հոգում հույս զարթեցնել առ ամենակարող և ամենատես աստված, ու սրտապնդված տառապյալները կրկնում ելին, վոր ավելի լավ ե հանձնվել նրա կամքին, քան թե ծառակել ավազակին և աղետալի պաշարման բոլոր ժամանակ բացի յերկու կամ յերեք հոգուց, բերդից փախստականներ չեղան:

Վրա հասավ չարչարանաց շաբաթը: Արդեն տասնհինգ որ եր, ինչ պաշարվածները միայն կավով եյին սնվում: Վոչվոք չեր ուզում սովամահ լինել: Վճռեցին բոլորով՝ մինչև վերջին մարդը (բացի միանգամայն ուժասպառներից) դիմել վերջին արտագրոնի: Հույս չունեյին հաղթելու (բունտարարներն այնպես եյին ամրացել, վոր այլևս վոչ մի կողմից հնարավոր չեր բերդից հարձակում գործել), միայն ուզում ելին մեռնել ուզմիկների ազնիվ մահով:

Յերեքարթի, արտագրոն նշանակած որը, մայր յեկեղեցու կտուրին կանգնած ժամապահները նկատեցին, վոր բունտարարները խառնաշփոթության մեջ վազվում են քաղաքում, իրար մնաս բարով անելով միանում են և խմբերով դուրս գալիս տափաստանը: Կազակուհիները ճանապարհ են դնում նրանց: Պաշարվածները գլւխ ընկան, վոր արտասովոր բան ե կատարվում և վերստին տոգորվեցին հույսերով: «Այդ բոլորը մեզ այնպես սիրտ տվեց» — ասում ե պաշարման վող սարսափն ապրած մի

ականատես մարդ — «վոր մենք կարծես մի կտոր հաց կերանք»: Քիչ-քիչ իրարանցումը հանդարտվեց. թվում եր թե ամեն ինչ սովորական կարգով ե ընթանում: Առաջվանից ավելի մեծ հուսալքում տիրեց պաշարվածներին: Նրանք լուռ նայում եյին դեպի տափաստանը, վորտեղից քիչ առաջ իրենց աղատարարներին ելին սպասում... Հանկարծ, յերեկոյան ժամը հինգին մոտ, հեռվում փոշի յերեղաց և նրանք տեսան անկարգ արշավող խառնիխուռ խմբերը, վորոնք մեկը մլուսի իտեկից հայտնվում ելին պուրակի ալն կողմից: Բունտարարները ձիերը քշեցին տարրերը բակեր՝ յուրաքանչյուրն այն բակը, վորի մոտ իր տունն եր գտնվում: Պաշարվածները հասկացան, վոր խոսվարաները ջարզված են և փախչում են. սակայն դեռևս չեյին համարձակվում ուրախանալ: յերկյուղ եյին կրում կատաղի հարձակումից: Քաղաքի բնակիչները յետ ու առաջ ելին վազում փողոցներով, ինչպես հրդեհի ժամանակ: Յերեկոյան դեմ տաճարի զանգերը տվին, մարդիկ բոլորվեցին մի տեղ, հետո խմբովին յեկան բերդի վրա: Պաշարվածները պատրաստվում եյին յետ մղել նրանց, սակայն տեսան, վոր նրանք կապուտած բերում են իրենց առաջնորդներին՝ կարգին և Տոլկաչով ատամաններին: Բունտարարները մոտենում եյին, բարձրաձայն ներումն հայցելով: Սիմոնովն ընդունեց նրանց, ինքն ել չհավատալով իր փլը-կությանը: Կայազորը վրա ընկալ բնակիչների բերած հացի մեծ կտորներին: «Մինչեղատիկ, գրում ե այս անցքերի ականատեսը, մնում եր չորս որ, սակայն մեզ համար սույն որն արդեն պայծառ տոն եր»: Նրանք, ովքեր թուլությունից և հիվանդությունից չեյին վեր կենում անկողնից, վայրկյանաբար ապաքինվեցին: Բերդում ամեն ինչ շարժման մեջ եր. աստծուն գոհություն եյին հայտնում, շնորհափորում միմյանց. ամբողջ գիշեր վոչվոք չըքնեց: Քաղաքի բնակիչները պաշարվածներին տեղեկություն եյին տալիս Որենքուրդի ազատման և Մանսուրովի շուտափույթ գալու մասին: Ապրիլի 17-ին ժամանեց Մանսուրովը: Բերդի դռները, վոր սկսած դեկտեմբերի 30-ից փակ եյին և յետեւ քարեր լցրած, բացվեցին: Մանսուրովը քաղաքի իշխանությունն իր ձեռքն առավ: Բունտաի հեղինակները՝ կարգինը, Տոլկաչովը և Գորշկովը ու ինքնակոչի ապրիլի կինը՝ Ուստինյա կուզնեցովան պահակների հսկողության տակ ուղարկվեցին Որենքուրդը: Այսպիսին եր հմտութ, խելոք զորապետի կարգադրությունների հաջողությունը: Սակայն Քիրիկովը չկարողացավ ավար-

տել իր սկսած գործը. աշխատանքներից, անհանգստությունից
և սրտնեղությունից խոշտանգված, քիչ հոգ տանելով իր՝ ար-
դեն իսկ խախտված առողջության մասին, նա Բուգուլմայում
հիվանդացավ ջերմախտով և զգալով մոտալուտ վախճանը, նո-
րից մի քանի կարգադրություններ արեց: Նա կնքեց իր բոլոր
գաղտնի թղթերը, հրամայելով դրանք հասցնել թագուհուն և
իշխանությունը հանձնեց գեներալ-պորուչիկ Շչերբատովին,
իրենից հետո ավագը նա էր: Լուրերից տեղեկանալով Ուֆայի ա-
զատման մասին, նա տակավին կարողացավ տեղեկություն տալ
թագուհուն և վախճանվեց ալրիլի 9-ին, առավոտյան ժամ 11-ին,
իր կյանքի քառասուն որսերորդ տարում: Նրա մարմինը մի
քանի որ մնաց կամայի ափին, վորն անցնելու հնարավորություն
չկար այդ ժամանակ: Դագան քաղաքը կամեցավ նրան թաղել
իր տաճարում և հուշարձան կառուցել իր աղատարարին, սակայն
նրա ընտանիքի պահանջով Բիբիկովի մարմինը տարվեց իր
գյուղը: Անդրեյելիան ժապավենը, սենատորի կոչումը և գվար-
դիայի գնդապետի կոչումը ստացվեցին, յերբ նա մեռել եր ար-
դեն: Մեռնելիս նա ասել ե. «Զեմ մեղքանում յերեխաներիս ու
կնոջս. թագուհին հոգ կտանի նրանց մասին. հայրենիքս եմ
մեղքանում»: Պտտվող լուրերը նրա մահը վերագրել են թույնի
ներգործությանը, վոր իբր թե տվել ե կոնֆեգերատներից մեկը:
Դերժավինը գովերդել ե նրա վախճանը: Յեկատերինան վողբա-
ցել ե նրան և նրա ընտանիքին շնորհել առատ ընծաներ: Պե-
տերբուրդն ու Մոսկվան սարսափով բռնվեցին: Շուտով և հա-
մայն Ռուսաստանն զգաց անդառնալի կորուստը:

Ա Ե Ս Ե Ր Ա Ր Կ Գ Լ Ո Ւ Խ

Պուգաչովի նոր հաջողությունները:—Բաշկիր Սալավաթը:—Սիրիրի բեր-
գերի առումը:—Ճակատամարտ Տրոիցկայա բերդի մոտ:—Պուգաչովի հաշանջը:—
Նրա առաջին հանդիպումը Միկուլսնի հետ:—Պուգաչովին հետապնդելը:—
Զորքերի անգործությունը:—Ռուայի առումը:—Պուգաչովը Դագանի մոտ:

Պուգաչովը, վորի դրությունը հուսահատական եր թվում,
հայտնիեց Ովկյանու Պետրովսկյան գործարաններում: Մայոր
Շեվիչի կողմից հետապնդվող Ովկյանիկովը և Պերֆիլել յերեք
հարյուր յահկյան կաղակների հետ սրարշավ կտրեցին անցան
Սակմարսկայա գիծը և կարողացան միանալ նրա հետ: Ստավ-
րապուլյան և որենքուրդյան կալմիկներն ուզում եյին հետեւ
նրանց և թվով վեց հարյուր կիրիտկաներով գիմեցին գեղի Սո-
րոչինսկայա բերդը: Այստեղ մթերապաշարի և խարի վրա վոր-
պես պահապան գտնվում եր պաշտոնաթող յենթագնդապետ
Մելկովիչը, խելոք ու վճռական մի մարդ: Նա ընդունեց կայա-
գորի հրամանատարությունը և հարձակվելով նրանց վրա, հար-
կադրեց վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը:

Պուգաչովն արագ կերպով անցնում եր մի տեղից մլուսը:
Խաժամուժն առաջվա պես հավաքվում եր նրա շուրջը: Հազիվ
ինչ խաղաղեցված բաշկիրները նորից հուզվեցին: Վերխո-Յակից-
կայա բերդի պարես գնդապետ Ստուպիշինը մտավ Բաշկիրիա,
հրամարակ դարձրեց մի քանի ամայի գյուղեր և գերի բռնելով
բռնտարարներից մեկին, կտրեց նրա ականջները, քիթը, աջ
ձեռի մատները և բաց թողեց, սպառնալով նույն կերպ վարվել
և մյուս բոլոր բռնտարարների հետ: Բաշկիրները չեյին հան-
գարտվում: Նրանց հին խռովարար Յուլալը, վորը թագնվել եր
1741 թվի մահապատիժների ժամանակ, հայտնվեց նրանց մեջ
իր Սալավաթ վորդու հետ միասին: Ամբողջ Բաշկիրիան ապրս-

տամբվեց և աղետը բորբոքվեց ավելի մեծ ուժով։ Ֆրեյմանը պետք եր հետապնդեր Պուգաչովին։ Միխելսոնը ճիգ եր թափում կտրել նրա ճանապարհը, սակայն ճնհալը փրկեց նրան։ Ճանապարհներն անանցանելի ելին, մարդիկ իրվում եյին անհատակ ցեխի մեջ. գետերը վարարել եյին, ծածկելով մի քանի վերստ տարածություն։ վտակները գետեր ելին դարձել ֆրեյմանը կանգ առավ Ստերլիտամացկում, Միխելսոնը. վորը գեռևս սառույցի վրայով անցել եր Վոլգան, իսկ Ուֆան՝ ութ նավակներով, շարունակում եր ճանապարհը, չսայած ամեն տեսակ խոչընդոտների և մայիսի 5-ին Միմսկի գործարանի մոտ վրա հասավ բաշ-կիրների մի ամբոխի, վորոնց առաջնորդում եր կատաղի Սա-լավաթը։ Միխելսոնը ցրեց նրանց, գործարանն ազատեց և մի որ հետո շարունակեց ճանապարհը։ Սալավաթը կանգ առավ գործարանից տասնութ վերստի վրա, սպասելով Բելորորդովին։ Նրանք միացան և յերկու հազար բունտարաներով և ութ թըն-դանոթներով դուրս յեկան Միխելսոնի դեմ։ Միխելսոնը նորից ջարդեց նրանց, թնդանոթները խլեց, տեղն ու տեղը կոսորեց մինչև յերեք հարյուր մարդ, մյուսներին ցրեց և շատպեց դեպի Ռէսկի գործարանը, հուսալով հասնել իրեն՝ Պուգաչովին։ սակայն շուտով տեղեկացավ, վոր ինքնակոչը գտնվում և արդեն Բելորեցի գործարաններում։

Ցուրդեն գետի այն կողմում Միխելսոնը նորից կարողացավ ջարդել խոռվարաների մի խառնիճաղանձ զորախումբ և նրանց հետապնդեց մինչև Սատկինսկի գործարանը։ Այդտեղ նա իմացավ, վոր Պուգաչովը հավաքելով մինչ վեց հազար բաշ-կիրներ և գյուղացիներ գնացել և Մագնիտնայա բերդի վրա։ Միխելսոնը վճռեց ավելի առաջ գնալ Ռէրալյան լեռներում, հույս ունենալով Յափի գագաթի մոտ միանալ ֆրեյմանին։

Պուգաչովը նախապես այրելով իր թալանած Բելորեցկյան գործարանները, արագ կերպով անցավ Ռէրալյան լեռները և մայիսի 5-ին մոտեցավ Մագնիտնայա բերդին, հետը չունենալով և վոչ մի թնդանոթ։ Կապիտան Տիխանովսկին քաջաբար պաշտպանվում եր։ Պուգաչովն ինքը կարտեշով վիրավորվեց ձեռքից և նահանջեց, զգալի կորուստ կրելով։ Թվում եր թե բերդը փրկված ե. սակայն այնտեղ գալաճանություն բացվեց. գիշերը պալթեցրին վառողով լի արկղները, Խովարանները հարձակվեցին, պատճեները քանդեցին և ներս խուժեցին։ Տիխանովսկուն

և նրա կողմը կախեցին. բերդը թալանվեց ու այրվեց։ Նույն որն ևեթ Պուգաչովի մոտ յեկավ Բելորորդովով չորս հազար բունտարար սրիկաներով։

Գեներալ-պորուչիկ Դեկալոնդը Զելյաբինսկից, վոր նոր եր ազատվել բունտարաների ձեռից, շարժվեց դեպի Վերխո-Յափշ-կի բերդը, հուսալով Պուգաչովին հասնել դեռևս Բելորեցկի գործարաններում, սակայն գիծ¹⁾ դուրս գալով, Վերխո-Յափշ-կի պարետից՝ գնդապետ Ստուպիշինից տեղեկություն ստացավ, վոր Պուգաչովը բերդերի գծով վերև և շարժվում, մի բերդից մյուսն անցնելով, ինչպես հայտնվելու առաջին ահարկու որեւրին։ Դեկալոնդը շապեց դեպի Վերխո-Յափշ-կի բերդը։ Այդտեղ նա իմացավ Մագնիտնայա բերդի առման մասին։ Նա շարժվեց դեպի կիզիլսկայա։ Բայց տասնհինգ վերստ անցնելուց հետո գիշեկ ընկած մի բաշ-կիրից իմացավ, վոր Պուգաչովը, տեղեկանալով գործի մոտեցման մասին, գնում և այլևս վոչ թե կիզիլսկայա, այլ Ռէրալյան լեռներով ուղիղ դեպի Ղարաղայսկ։ Դեկալոնդը յետ գնաց Ղարաղայսկին մոտենալով նա տեսավ սոսկ ծիացող ավերակներ. նախորյակին Պուգաչովը թողել եր այն, Դեկալոնդը հույս ուներ նրան հասնել Պետրոպավոդսկայա բերդում, սակայն այդտեղ չգտավ նրան։ Բերդը քանդված եր ու այրված, յեկեղեցին թալանված, բնակիչներին գերի եյին տարել։

Դեկալոնդը, գիծը թողնելով, ներքին ճանապարհով շարժվեց ուղիղ դեպի Ռէրալյան լեռներով ուղիղ դեպի Ղարաղայսկի միայն մի որվա պաշար. նա կարծում եր, վոր Պուգաչովին կը-հասնի գոյն Ստեղնալյա բերդում։ Բայց տեղեկանալով, վոր Ստեղնալյան նույնպես գրավված ե, ուղղվեց դեպի Տրոիցկայա։ Սենարսկ տանող ճանապարհին նա տեսավ բազմաթիվ մարդիկ՝ շրջակա ավերված բերդերից։ Սպաների կանայք և յերեխաները բոկտն, ցնցուիներ հագած լալիս եյին, չիմանալով ուր ապաստան փնտրեն։ Դեկալոնդը նրանց իր հովանավորության տակ առավ և հանձնեց սպաների խնամքին։ Մայիսի 21-ին, առավոտյան նա մոտեցավ Տրոիցկայա բերդին, արագ յերթով անցնելով վաթսուն վերստ և տեսավ Պուգաչովին, վորը բանակել

1) Գիծ կամ գծարին դիստանցիա — մի շարք բերդեր, վորոնք կառուղված ելին Վոլգա, Սամարա, Յափիկ, Սակմար և Ռէյու դետերի ափերին։ Ծ. թ.

Ար նախորյակին իր վերցրած բերդի պատերի տակ: Դեկալոնգն իսկույն հարձակվեց նրա վրա: Պուգաչովը տաս հազարից ավելի զորք ուներ և մինչև յերեսուն թնդանոթ: Կոփլը տեսեց ամբողջ չորս ժամ: Բոլոր ժամանակ Պուգաչովը պառկած եր իր վրանում, սաստիկ տանջվելով Մագնիտնայա բերդի մոտ ստացած վերքից: Ռազմական գործողությունները դեկավարում եր Բելորորդովովը վերջապես խոռվարաների շարքերը քայլավեցին: Պուգաչովը ձի նստեց և վիրավոր ձեռքը կապած ընկավ այս ու այն կողմ, աշխատելով վերականգնել կարգը, սակայն բոլորը ցըվեցին ու փախան: Պուգաչովը մի թնդանոթ առած շարժվեց Զելյարինսկի ճանապարհով: Հետապնդելն անհնարին եր: Այրուձին չափից գուրս ուժասպառ եր յեղել: Բանակում յերևան բերվեցին մինչև յերեք հազար մարդ ամեն կոչման, սեռի և հասակի, վորոնց գերի յեր բռնել ինքնակոչը և վորոնք դատապարտված եյին վոշընչացման: Բերդը փրկված եր հրդեհից ու թալանից: Սակայն պարետը՝ բրիգադիր Ֆեյեկարը սպանվել եր նախորյակին՝ հարձակման ժամանակ, իսկ նրա սպաները կախված եյին:

Պուգաչովը և Բելորորդովովն իմանալով, վոր զորքի հոգնածություն ու ձիերի ուժասպառությունը չի թույլատրում Դեկալոնգին իր հաղթությունից ոգտվելու, իրենց ցըված խառնիճաղանձ ուժերը կարգի բերին և սկսեցին կանոնավոր կերպով նահանջել ճանապարհին բերդեր առնելով և արագ կերպով ուժեղանալով: Գագրին և ժողորով մայորները, վորոնց Դեկալոնգը զորամասով ուղարկեց կոմի մյուս որը, հետապնդեցին նրանց, սակայն՝ չկարողացան հասնել:

Միխելսոնը նույն միջոցին գնում եր Ուրայան լեռներով, սակավածանոթ ճանապարհներ բռնած: Բաշկիրական գյուղերն ամայի եյին: Հնարավորություն չկար անհրաժեշտ պաշարեղեն ձեռք բերելու: Նրա զորախումը ամեն ժամ վտանգի մեջ եր: Բունտարարների բազմաթիվ հրոսակախմբեր պտտվում եյին նրա մոտերքում: Մայիսի 13-ին բաշկիրներն իրենց խոռվարար ավագի առաջնորդությամբ հարձակվեցին նրա վրա և կատաղիորեն կովեցին. մղված գեպի ճահիճը, նրանք անձնատուր չեյին լինում: Բոլորը, բացի մեկից, վորին զոռով հաջողվեց խնայել, սրակոտոր յեղան իրենց պետի հետ միասին: Միխելսոնը կորցրեց մի սպա և վաթսուն շարքային գինվորներ՝ սպանված ու վիրավոր:

Գերի ընկած բաշկիրը՝ գուրգուրված Միխելսոնի կողմից՝ հայտնեց նրան Մագնիտնայա բերդի առման և Դեկալոնգի շարժվելու մասին: Միխելսոնն այս տեղեկությունը համապատասխան գտնելով իր յենթադրությունների հետ, թողեց լեռներն ու գնաց գեպի Տրոիցկայա, հուսալով պատել սույն բերդը կամ հանդիպել Պուգաչովին՝ նրա նահանջի գեպքում: Շուտով նա լսեց Դեկալոնգի հաղթության մասին և գնաց Վառլամովով, դիտավորություն ունենալով Պուգաչովի ճանապարհը կտրելու: Իսկապես, մայիսի 22-ի առավոտյան Վառլամովյին մոտենալիս նա հանդիպեց Պուգաչովի առաջավոր զորախմբերին: Տեսնելով գեղեցիկ շարքերով կանգնած զորքը, Միխելսոնն սկզբում չեր կարող պատկերացնել, վոր դա նախորյակին ջարդված սրիկայախմբի մնացորդն ե և այն ընդունեց վորպես (ծաղրաբար ասում ե նա իր տեղեկագրի մեջ) գեներալ-պորուչիկ և կավալեր Դեկալոնգի կորպուսը. սակայն շուտով հավաստիացավ իրականությանը: Նա կանգ առավ, պահելով իր նպաստավոր գերքը անտառում, վորը պահպանում եր նրա թիկունքը: Պուգաչովը շարժվեց նրա դեմ և հանկարծ շրջեց գեպի Զերբակուլսկի բերդը: Միխելսոնը գնաց անտառի միջով և կտրեց նրա ճանապարհը: Պուգաչովն առաջին անգամ իր հանդեպ տեսավ նրան, ով պետք ե այնքան հարվածներ հասցներ իրեն և վերջ դներ իր արյունուու գործունեյությանը: Պուգաչովն իսկույն եեթ հարձակվեց նրա ձախ թեր վրա, քայլայեց այն և խեց յերկու թնդանոթ: Սակայն Միխելսոնը խոռվարաներին հարվածեց իր բոլոր այրուձիով, մի ակնթարթում ցրեց նրանց, յիտ խեց իր յերկու թնդանոթները, դրանց հետ և այն վերջինը, վոր մնացել եր Պուգաչովի ձեռին Տրոիցկայա բերդի մոտ կրած պարտությունից հետո, տեղն ու տեղը կոտորեց մինչև վեց հարյուր մարդ, գերի վերցրեց մինչև հինգ հարյուր և մնացածներին հալածեց մի քանի վերսու: Գիշերը դադարեցրեց հետապնդումը: Միխելսոնը գիշերեց մարտի դաշտում: Մյուս օրը իր հրամանի մեջ նա խիստ հանդիմանություն արակ այն վաշտին, վոր ձեռքից թողել եր իր թնդանոթները և խեց այդ զինվորների կոճակներն ու թևածալվածքները՝ մինչեւ վոր նրանք արժանան դրանց: Վաշտը չհապաղեց իր անպատվությունը վերացնելու:

23-ին Միխելսոնը գնաց Զերբակուլսկի բերդի վրա: Այս տեղ գտնվող կազակները բռնութ եյին անում: Միխելսոնը նրանց

յերդվել տվեց, միացնելով իր գորախմբին և հետագայում միշտ գոն եր նրանցից:

Ժողոբովը և Գագրինը գործում ելին դանդաղ և անվճռաշկան: Ժողոբովը Միխելսոնին տեղեկացնելով այն մասին, վոր Պուգաչովը հավաքել ե ցրված խառնիճաղանձ զորքի մնացորդը և նոր ուժեր ե կուտակում, հրաժարվեց գնալ նրա դեմ, գետերի վարարման և վատ ճանապարհների պատրվակով: Միխելսոնը գանգատվեց Դեկալոնգին, իսկ Դեկալոնգը, ինքը խոստանալով առաջ խաղալ, ինքնակոչի վերջին ուժերը վոչչացնելու համար, մնաց Զելյարում և մինչև իսկ իր մոտ կանչեց ժողոբովին ու Գագրինին:

Այսպիսով Պուգաչովին հետապնդելը մնաց միայն Միխելսոնին:

Նա գնաց գեղի Զլատոռուստինսկի գործարանը, լսելով, վոր այնտեղ գտնվում են մի քանի յափկան բունտարարներ: Սակայն նրանք փախան, իմանալով նրա մոտենալու մասին: Քանի գնաց՝ նրանց հետքը ցաք ու ցրիվ դարձավ և վերջապես բոլորովին կորավ:

Մայիսի 27-ին Միխելսոնը հասավ Սատկինսկի գործարանը: Սալավաթը նոր հրոսակախմբով չարագործություններ եր կատարում շրջականներում: Նա արդեն թալանել և այլել եր Միխելսկի գործարանը: Լսելով Միխելսոնի մասին, նա անցավ Այգետը և կանգ առավ լեռներում, ուր Պուգաչովը փրկվելով ֆագրինի և ժողովրում կողմանը հետապնդումից և արդեն հավաքելով մինչև լեռներ հազար ամեն տեսակ սրիկաներ, կարողացավ միանալ նրանց հետ:

Միխելսոնը Սատկինսկի գործարանում, վորը փրկվել եր իր արագ վրա հասնելուց, առաջին դադարն առավ Ռւֆայից դուրս գալուց հետո: Յերկու որ անց նա գնաց Պուգաչովի և Սալավաթի գեմ և հասավ Այլ ափը: Կամուրջները վերցված ելին: Խոռվարանները դիմացի ափում տեսնելով նրա զորախմբի սակավաթիվ լինելը, կարծում ելին թե ապահով վիճակում են:

Բայց 30-ին, առավոտան, Միխելսոնը հրամայեց հիսուն կազակների ձի նստած լողալով անցնել գետը, յուրաքանչյուրը հետը մի յեղեր (հրացանաձիդ) առնելով: Խոռվարանները փորձեցին հարձակվել, սակայն ցրվեցին հակառակ ափից արձակված թնդանոթային զարկերով: Յեղերներն ու կազակները մի կերպ դամացան, իսկ Միխելսոնը նույն միջոցին գետն անցավ մնացած

զորախմբով. վառողը կրեց ալրուձին, թնդանոթները ջուրն ընկղմեցին և գետի հատակով քարշ տվին թոկերով: Միխելսոնն արագ հարձակվեց թշնամու վրա, ջարուց, սրբեց և հալածեց քսան վերստից ավելի, սպանելով մինչև չորս հարյուր մարդ և շատերին գերի առնելով: Պուգաչովը, Բելորորդովը և վիրավորված Սալավաթը հաղիկ կարողացան ազատվել:

Երջակալքն ամայի յեր: Միխելսոնը չեր կարող իմանալ թշնամու դիտավորության մասին: Նա հույսը դրեց բախտի վրա և հունիսի 2-ին իր նշանակած կապիտան կարտաշևսկու զորամասը գիշերը շրջապատվեց Սալավաթի հրոսակով: Առավոտվագեմ Միխելսոնը ոգնության հասավ: Խոռվարանները ցրվեցին ու փախան: Միխելսոնը ծայրահեղ զգուշությամբ եր հետապնդում նրանց: Հետեւակազորը պաշտպանում եր նրա գումակը: Նա ինքը գնում եր փոքր ինչ առաջ ընկած, իր այրուձիի մի մասի հետ: Այս կարգադրությունները փրկեցին նրան: Խոռվարանների մի մեծ բազմություն անսպասելի կերպով շրջապատեց նրա գումակը և հարձակվեց հետեւակազորի վրա: Ինքը Պուգաչովն եր առաջնորդում նրանց, վեց որվա ընթացքում կարողանալով հավաքել մոտ հինգ հազար բունտարարներ: Միխելսոնը սրարշավ ոգնության գնաց: Նա Խարինին ուղարկեց իր ամբողջ ալրուձին միացնելու, իսկ ինքը հետեւակազորի հետ մնաց գումակի մոտ: Խոռվարանները ջարդվեցին և նորից փախան: Այդ միջոցին Միխելսոնը գերիներից տեղեկացավ, վոր Պուգաչովը դիտավորություն և ունեցել գնալ Ուփայի վրա: Նա շտապեց կտրել նրա ճանապարհը և հունիսի 5-ին վերստին հանդիպեց նրան: Կոխին անխուսափելի յեր: Միխելսոնն արագ կերպով հարձակվեց նրա վրա և կրկին ջարդեց ու քշեց:

Իր այս բոլոր հաջողություններով հանդերձ, Միխելսոնն անհրաժեշտ համարեց առժամանակ դադարեցնել իր հետապլնդումը: Նա արդեն չուներ վոչ պաշտառեղեն, վոչ ուռմբեր: Յուրաքանչյուր մարդ ուներ միայն յերկու փամփուշտ: Միխելսոնը գնաց Ուփայի վրա, վորպեսզի այնտեղ ձեռք բերի այն ամենը, ինչ պետք ե իրեն:

Մինչդեռ Միխելսոնն ամեն կողմ ընկած միշտ հաղթում եր խոռվարաններին, մնացած զորահրամանատարները անշարժ մնացել ելին իրենց տեղերում: Դեկալոնգը կանգ եր առել Զելյարում և նախանձելով Միխելսոնին, դիտմամբ չեր ուզում աշակցել նրան: Ֆրեյմանը, անձնապես քաջ մարդ, սակայն դեհե-

բոտ ու անվճռական առաջնորդ, կանգնած եր Կիզիլկայա բերդում, դժգոհ լինելով Տիմաշովից, վորը իր լավագուցն այբուձին առած գնացել եր դեպի Զելախրսկի բերդը։ Սաանիսլավսկին իւմանալով, վոր Պուգաչովը Վերխո-Յախցկի բերդի մոտ նշանակալից թվով խուժան և հավաքել, հրաժարվեց զինվորական ծառալությունից և թաղնվեց իր սիրած Որսկ բերդում։ Յակութովիչ և Որերնիբեսով գնդապետներն ու մայոր Դուլին գտնվում եյին Ռւֆայի մոտ։ Նրանց շուրջը հանգիստ կերպով հավաքվում եյին բունարար բաշկիրները։ Բիրսկը համարյա թե նրանց աչքի առաջ այրվեց, մինչդեռ նրանք մի տեղից մյուսն ելին անցնում, խուսափելով ամենաչին վտանգից և չմտածելով միահամուռ ոժանդակության մասին։ Իշխան Շչերբատովի կարգադրությամբ, Գոլիցինի զորքն առանց վորսե ոժանդակություն ցույց տալու մնում եր Որենբուրգի և Յախցյան քաղաքի մոտ՝ արդեն իսկ անվտանգ տեղերում, իսկ յերկրամասը, ուր նորից բոնկվեց հրդենը, մնում եր համարյա անպաշտպան։

Պուգաչովը, վորին մայոր Պոպովը յետ եր մղել Կունգուրից, փորձեց շարժվել դեպի Յեկատերինբուրգ, սակայն իմանալով այնտեղ գտնվող զորքերի մասին, դիմեց դեպի ԿրասնոՌւֆիմսկ։

Կամա գետը բաց եր և Ղաղանը վտանգի մեջ։ Բրանտը շտապով Ոսա արվարձանն ուղարկեց մայոր Սկրիպիցինին, տալով նրան կայազորի մի խումբ և զինված գյուղացիներ, իսկ ինքը գրեց իշխան Շչերբատովին, անհապաղ ոգնություն պահանջելով։ Շչերբատովը հույսը դրեց Որենիբեսովի և Դուլինի վրա, վորոնք վտանգի դեպքում պետք ե ոգնեյին մայոր Սկրիպիցինին և վոչ մի նոր կարգադրություն չարեց։

Հունիսի 18-ին Պուգաչովը հայտնվեց Ոսայի առջև։ Սկրիպիցինը դուրս յեկավ նրա դեմ, սակայն կովկի հենց սկզբին կորցնելով յերեք թնդանոթ, շտապով վերադարձավ բերդը։ Պուգաչովը յուրայիններին հրամայեց ձիերից իջնել և գրոհի դիմել։ Խուլարարները քաղաք մտան, ալրեցին այն, սակայն բերդից յետ մղվեցին թնդանոթներով։

Մյուս որը Պուգաչովը իր ավագների հետ ձիով շրջում եր Կամայի ափին, գետը անցնելու հարմար տեղեր վորոնելով։ Նրա հրամանով ճանապարհը կարգի բերդին և ամրացրին ճահճացին տեղերը։ 20-ին նա նորից գրոհեց բերդի վրա և նորից յետ մըղվեց։ Այն ժամանակ Բելոբորովովը նրան խորհուրդ տվեց բերդը

շրջապատել խոտի, հարդի, և կեչու կեղերով և այլպիսով այրել փայտե պատերը։ Տասնհինգ սալ ձիերով տարան բերդի մոտ տարածության վրա, իսկ հետո առաջ մղեցին մարդիկ, վորոնք պաշտպանված եին այդ բարձած սայյերի յետու։ Արդեն տատանվող Սկրիպիցինը պահանջեց մի որ ու գիշերվա ժամկետ և մյուս որն անձնատուր յեղավ, Պուգաչովին ծնկաչոք ընդունելով, սրբապատկերներով և աղու հացով։ Ինքնակոչը գուրգուրեց նրան և սուրբ ձեռից չառավ։ Դժբախտը, մտածելով ժամանակին արդարանալ, կապիտան Սմիրնովի և յենթագնդապետ Մինեյեվի հետ միասին մի նամակ եր գրել Ղաղանի նահանգապետի անունով և այն պահում եր իր մոտ, հարմար առիթի սպասելով գաղտնի ուղարկելու։ Մինեյեվը հայտնեց Պուգաչովին այդ մասին։ Նամակը բռնվեց, Սկրիպիցինը և Սմիրնովը կախվեցին, իսկ մատնիչին Պուգաչովը գնդապետի կոչում տվեց։

Հունիսի 23-ին Պուգաչովն անցավ Կաման և գնաց Իժեվսկի ու Վոտկինսկի ողեգործարանների վրա։ Վենցելը՝ դրանց պետը, չարաչար սպանվեց, գործարանները թալանվեցին և բոլոր գործավորներին հավաքեցին—միացրին չարագործ խուժանին։ Մինեյեվը, վոր իր դաշտանությամբ վաստակել եր Պուգաչովի վատահությունը, նրան խորհուրդ տվեց ուղիղ գնալ Ղաղանի վրա։ Նահանգապետի կարգադրությունները նրան հայտնի եյին, նա պատրաստակամություն հայտնեց Պուգաչովին տանելու և յերաշխավորում եր հաջողության համար։ Պուգաչովը յերկար չտատանվեց և գնաց Ղաղանի վրա։

Շչերբակովը, ստանալով Ոսայի առման լուրը, վախեցավ։ Նա հրաման ուղարկեց Որենիբեսովին գրավել Շումսկոյ գետանցը, իսկ մայոր Մելլինին ուղարկեց դեպի Շուրմանսկի գետանցման տեղը։ Գոլիցինին հրամայեց շուտով առաջ խաղալ դեպի Ռւֆա, վորպեսզի նա այնտեղից գործի ըստ իր հայեցողության, իսկ ինքը հետն առնելով մի եսկադրոն հուսարներ և մի վաշտ գրենադերները, ուղղվեց դեպի Բուգուլմա։

Ղաղանում գտնվում եր միմիայն մեկ ու կես հազար զորք, սակայն վեց հազար բնակիչներն արագ կերպով զինվեցին։ Գեներալ-մայոր Պատլումկինը՝ Պուգաչովի գործի համար հաստատված գաղտնի հանձնաժողովի պետը, յեռանդուն կերպով աջակցում եր նրանց։ Գեներալ-մայոր Լարիոնովը չսպասեց Պուգաչովին։ Նա իր մարդկանց հետ անցավ Վոլգան և մեկնեց Նիժնի-Նովգորոդ։

Դնդապետ Տոլստոյը՝ Ղաղանի ձիավոր լեգիոնի պետը,
դուրս յեկավ Պուգաչովի դեմ և հուլիսի 10-ին հանդիպեց նրան
քաղաքից տասներկու վերստի վրա։ Տեղի ունեցավ կոխի։ Քաջ
Տոլստոյը սպանվեց, իսկ նրա զորախումբը ցրվեց։ Մյուս որը
Պուգաչովը յերևաց Կաղանկա գետակի ձախ ափին և բանակ
զարկեց Տրոիցկայա ալբաղացի մոտ։ Յերեկոյան Ղաղանի բոլոր
բնակիչների աշքի առաջնա ձիով դուրս յեկավ քաղաքը դիտելու
և վերադարձավ բանակատեղ, հրոսումը մինչեւ հաջորդ առավոտ
հետաձգելով։

Ծորեգործ գլուխ

Պուգաչովը Ղաղանում։—Քաղաքի աղետալի վիճակը—Մի խելոսնի յե-
քալը—Յերեք ճակատամարտ—Ղաղանի ազատումը—Պուգաչովի տհօակցու-
թյունն իր ընտանիքի հետ։—Զբարտության հերքումը—Միխելոսնի կարգա-
գրությունը։

Հուլիսի 12-ի արշալույսին, խոռվարարները Պուգաչովի ա-
ռաջնորդությամբ ձգվեցին Յարիցինո գյուղից Արսկոյե կոչված
գաշտով, իրենց առջևից քշելով խոտով ու հարդով լի սայլերը,
վորոնց արանքում մեջ ընդ մեջ թնդանոթներն եյին տանում։
Նրանք արագ կերպով գրավեցին քաղաքամերձ աղյուսաշեն սա-
րայները, պուրակը և քաղաքից գուրս գտնվող Կուդրյավցեվի
տունը, այնուեղ դրին իրենց մարտկոցները, իստ շպրտեցին ճա-
նապարհը պաշտպանող թույլ զորախումբը։ Սա նահանջեց կառու
կաղմած և իր յետեից ուղեկալ գերաններ դնելով։

Ուղիղ Արսկոյե գաշտի դիմաց գտնվում եր քաղաքավին
գլխավոր մարտկոցը։ Պուգաչովը չփնաց նրա վրա, այլ իր աջ
թեր դեպի արվարձանն ուղարկեց գործարանային գյուղացինե-
րի մի խառնիճաղանձ խումբ՝ դավաճան Մինեյելի առաջնորդու-
թյամբ։ Այս սրիկաները՝ մեծ մասամբ անզեն, կազակների մըտ-
րակների տակ ճարպկորեն վազում եյին մի հեղեղատից մյուսը,
մի բլրագողից մյուսը, սողալով անցնում եյին թնդանոթային
զարկերի յենթակա բարձրությունները և այսպիսով մտնում
արվարձանի հենց ծայրին գտնվող ձորակները։ Սույն վտանգա-
վոր տեղը պաշտպանում եյին գիմնազիստները, մի հատիկ թըն-
դանոթով։ Սակայն, չնայած նրանց կրակոցներին, բունտարար-
ները ճշտությամբ կատարեցին Պուգաչովի հրամանը. նրանք
մագլցեցին բարձունքի վրա, սոսկ բոռնցքներով ցրեցին զիմ-
սազիստներին, թնդանոթը խեցին, գրավեցին նահանգապետա-

կան ամառային տունը, վոր միացած եր արվաբձանների հետ. թնդանոթը դրին գարպասի մեջ, սկսեցին կրակել փողոցների լեռկայնքով և սովար խմբերով ներս խուժեցին արվարձանները: Մյուս կողմից, Պուգաչովի ձախ թել հարձակվեց Սուկոննայա ավանի վրա: Մահուդագործները (զանազան կոչման մարդիկ և մեծ մասամբ բռնցքամարտողներ), վոգելորված յեղիսկոպոս Բենիամինի կողմից, զինվեցին՝ ինչով կարող ելին, թնդանոթը դրին Գորլովի ողեաւան մոտ և պատրաստվեցին պաշտպանության: Բաշկիրները Շարնայա սարից նետեր տեղացին նրանց վրա և իրենք վաղեցին մտան փողոցները: Մահուդագործները փորձեցին նրանց դիմավորել նիդակներով ու թրերով. սակայն նրանց թնդանոթը առաջին իսկ զարկի հետ պայթեց և սպանեց արձակողին: Այդ ժամանակ Պուգաչովը Շարնայա սարի վրա դրեց իր թնդանոթները և կարտեչ տեղաց թե յուրայինների, թե թշնամու վրա: Ավանը այրվեց: Մահուդագործները փախանուովարարները տապահեցին պահակներին, ուղեկալ գերանները և ներս խուժեցին քաղաքի փողոցներով: Բոցը տեսնելուն պես բնակիչները և քաղաքային զորքը թնդանոթը թողնելով, իրենց նետեցին բերդը՝ վրապես վերջին ապաստարան: Պատրոմկինը բերդը մտավ նրանց հետ միասին: Քաղաքը դարձավ խոռվարաններին ավար, Նրանք սկսեցին թալանել աներն ու վաճառականների խանութները. մտնում ելին յեկեղեցիներն ու վանքերը, պոկտում ելին պատկերակալները, մորթոտում բոլոր նրանց, ովքեր պատահում ելին գերմանական տարազով¹⁾: Պուգաչովն իր մարտկոցները դնելով Գոստինիյ-Դվորի պանդոկում՝ յեկեղեցիների յետեր, հաղթական կամարների մոտ, կրակում եր բերդի վրա, առանձնապես Սպասսկիյ կոչված վանքի վրա, վորը բերդի աջ անկյունն եր բռնում և վորի հանմենի պատերը հազիվ ելին դիմանում: Մյուս կողմից, Մինելեվը մի թնդանոթ ներս քաշելով Ղազանի վանքի դարպասը, իսկ մյուսը դնելով յեկեղեցու գավթում, կրակում եր բերդի ամենավտանգավոր տեղի վրա: Այնտեղից նետված մի ոռւմբ ջարդեց նրա թնդանոթներից մեկը: Ավազակները կանանց շորեր, տերտերական ժամաշապիկներ հագած աղաղակով վազում ելին փողոցներով, թալանելով ու այրելով աները, բերդը պաշարողները նախանձում ելին նրանց,

1) Յեկոպական ձեւ զորեր հագնում ելին պետական ժառայության մեջ գանվող չինովնիկները (աստիճանավորները) և պաշտոնատար աղնվականները: Ծ

յերկյուղելով, վոր իրենք առանց ավարի կմնան... Հանկարծ Պուգաչովը հրամայեց նրանց նահանջել և նախապես ելի մի քանի տներ այրելով, վերադարձավ իր բանակատեղը: Սկսվեց մի փոթորիկ: Կրակե ծովը բռնեց ամբողջ քաղաքը: Կայծերն ու շիկացած ածուխի կտորները դեպի բերդ թռան և վառեցին մի քանի փայտե տանիքները: Սույն ըոպեյին մի պատի մաս դղբուդոցով վուշ յեկավ և տակովն արավ մի քանի մարդ: Բերդում իրար սեղմված՝ պաշարվածները հուսահատ աղաղակները բարձրացրին, կարծելով, վոր չարագործը դռները խորտակելով ներս և խուժում և վոր արդեն հասել և իրենց վերջին ժամը:

Քաղաքից գերիներին քշեցին և ավարը կրեցին: Բաշկիրները, չնայած Պուգաչովի խիստ արգելքներին, մտրակներով խփում ելին ժողովրդին և նիզակներով ծակոտում հետ ընկնող կանանց ու յերեխաներին: Շատերը խեղդվեցին, ծանծաղուտով կազանկա գետն անցնելիս: Բանակատեղ քշված ժողովրդին ծունկ չոքեցրին թնդանոթների առջև: Կանաչը լաց ու կոծ բարձրացրին: Նրանց ներումն հայտնեցին: Բոլորը գոռացին ուռուս և նետվեցին դեպի Պուգաչովի կայանը: Պուգաչովը նստել եր բաղկաթոռի վրա, ընդունելով Ղազանի թաթարների ընծաները, վորոնք յեկել ելին նրան իրենց խոնարհությունը հայտնելու: Ապա հարցըին՝ հի և կամենում ծառայել թագավոր Պյոտր Ֆեոդորովիչին: Շատ ցանկացողներ գտնվեցին:

Հարձակման բոլոր ժամանակ յեպիսկոպոս Բենիամինը գլուխվում եր բերդում, Ավետման տաճարում և ժողովրդի հետ ծընկաշոք աղոթում եր աստծուն քրիստոնյաների փրկության համար: Հրաձգությունը հազիվ եր լոել, վոր նա վերցրեց հրաշագործ սրբապատկերները և չնայած հրդեհի անտանելի տապին և գերաններին, այդտեղ գտնված բոլոր հոգեվորականության հետ ժողովրդի ուղեկցությամբ ներսից շրջեց բերդը մաղթանքի յերգասացությամբ: Յերեկոյան գեմ փոթորիկը հանդարտվեց և ընկնող քամին դարձավ հակառակ կողմը: Վրա հասավ գիշերը՝ սոսկալի—բնակիչների համար: Այրվող ածուխի շեղջակուտեր դարձած Ղազանը մխում և կարմրին եր տալիս խավարի մեջ: Վոչ վոք չքնեց: Լուսանալուն պես բնակիչները շտապեցին բարձրանալ բերդի պարիսպների վրա և իրենց հայացքներն ուղղեցին դեպի այն կողմը, վորտեղից նրանք նոր հարձակում ելին սպասում: Սակայն, փոխանակ Պուգաչովյան հրոսակախմբերի, նրանք զալմանքով տեսան Միխելոսի հուսարներին, վորոնք սրարշավ քա-

զաք եյին գալիս, նրա կողմից նահանգապետի մոտ ուղարկված սպայի առաջնորդությամբ:

Վոչ-վոք չգիտեր, վոր դեռ նախորյակին Միխելսոնը քաղաքից յոթ վերստի վրա արյունահեղ կորիվ եր ունեցել Պուգաչովի հետ և վոր խոռվարաները անկարգ նահանջել եյին:

Մենք թողինք Միխելսոնին, վորն անխոնջ կերպով հետապնդում եր Պուգաչովի փութկոտ շարժումները: Ուֆայում նա թողեց իր հիվանդներին ու վիրավորներին, հետն առավ մայոր Դուվեյին և հունիսի 21-ին գտնվում եր Բուրնովոյում՝ Բիրսկից մի քանի վերստի վրա: Յակուբովիչի այրած կամուրջը խռովարաները նորից վերաշնել եյին: Մոտ յերեք հազար հոգի դուրս յեկան նրա դեմ: Նա ջարդեց նրանց և Դուվեյին ուղարկեց բաշկիրների մի հրոսակախմբի դեմ, վորը գտնվում եր վոչ այնքան հեռու տարածության վրա: Դուվեյին ցրեց նրանց: Միխելսոնը գնաց Ոսայի վրա և հունիսի 27-ին ճանապարհին ջարդելով բաշկիրների և թաթարների խուժանը, նրանցից իմացալ Ոսայի առման և Պուգաչովի՝ Կամայից անցնելու մասին: Միխելսոնը գնաց նրա հետքերով: Կամայի վրա վոչ կամուրջ կար, վոչ նավակներ: Այրուձին լողալով անցավ գետը, հետեւկը՝ լաստերով: Միխելսոնը Պուգաչովին իր աջ կողմում թողնելով, ուղիղ գնաց գեպի Հազան և հուլիսի 11-ի յերեկոյան արդեն գտնվում էր նրանից տասնհինգ վերստի վրա:

Դիշերը նրա զորախումբը շարժվեց իր տեղից: Առավոտյան Ղազանից քառասունհինգ վերստի վրա նա լսեց թնդանոթածքության ճայներ: Կես որվագեմ թանձր, բոսորագույն ծուխը նրան հայտնի դարձրեց քաղաքի վիճակը:

Կեսորվա շոգը և զորախմբի հոգնածությունը Միխելսոնին հարկադրեց մի ժամ գաղար տալ: Նույն միջոցին նա իմացավ, վոր վոչ հեռվում գտնվում ե խռովարաների մի խուժան: Միխելսոնը հարձակվեց նրանց վրա և չորս հարյուր հոգու գերի վերցրեց. մնացածները փախան դեպի Հազան և Պուգաչովին հայտնեցին թշնամու մոտենալու մասին: Հենց այդ ժամանակ եր, վոր Պուգաչովը յերկյուղ կրելով անակնկալ հարձակումից, բերդից նահանջեց և յուրայիններին հրամայեց շուտով դուրս գալ քաղաքից, իսկ ինքը բռնելով նպաստավոր գերքեր, ճակատ կաղմեց Յարիցինոյի մոտ, Հազանից յոթ վերստի վրա:

Այդ մասին տեղեկություն ստանալուն պես Միխելսոնը մի զորասունով շարժվեց անտառի միջով և գաշտ դուրս գալով իր

առջև տեսակ խոռվարաներին, վորոնք կանգնել եյին ուղմական կարգով:

Միխելսոնը Խարինին ուղարկեց նրանց ձախ թեմ դեմ, Դուվեյին՝ աջ թեմ, իսկ ինքը գնաց ուղիղ դեպի թշնամու մարտկոցը: Պուգաչովը՝ հաղթությունից սիրտ առած, և գրաված թշնամությունով ուժեղացած, հարձակուան ընդունեց սաստիկ կրակով: Մարտկոցի առաջ տարածվում եր ճահիճը, վորի միջով Միխելսոնը պետք ե անցներ, մինչդեռ Խարինը և Դուվեյն աշխատում եյին շրջապատել թշնամուն: Միխելսոնը գրավեց մարտկոցը. Դուվեյն աջ թեմում նույնպես խլեց յերկու թնդանոթ: Խուզարները, բաժանվելով յերկու հոծ խմբերի, շարժվեցին—մի մասը՝ Խարինի դեմ և մնալով խրամատի այն կողմի կապանում մարտկոցները դրեց և կրակ բացեց. մյուսներն աշխատում ելին անցնել զորախմբի թիկունքը: Թողնելով Դուվեյին, Միխելսոնը գնաց Խարինին ոգնելու, վոր թշնամու ոումբերի տակ անցնում եր ձորակով. Վերջապես հինգ ժամվառ համառ կովից հետո Պուգաչովը ջարդվեց և փախավ, կորցնելով ութ հարյուր մարդ սպանված և հարյուր ութսուն հոգի գերի ընկած: Միխելսոնի կորուստն աննշան եր: Գիշերվա մթությունն ու զորախմբի հոգնածությունը Միխելսոնին թույլ չտվին հետապնդել Պուգաչովին:

Գիշերելով կովի վայրում, Միխելսոնը լուսադեմին գնաց դեպի Ղազան: Ամեն բոլե նրան հանդիպում եյին կողոպտիչների խմբեր, վորոնք ամբողջ գիշեր հարեցողությամբ ելին ըզբաղվել այրված քաղաքի ավերակների վրա: Նրանց սրակուոր ելին անում և գերի վերցնում: Արսկոյե գաշտ հասնելով, Միխելսոնը տեսավ մոտեցող թշնամուն. Պուգաչովն իմանալով նրա զորախմբի սակավաթիվ լինելու մասին, շտապեց կանխել նրա միացումը քաղաքի զորքի հետ: Միխելսոնն այդ մասին նահանգապետին տեղեկացնելու համար մարդ ուղարկելով՝ թնդանոթածքությամբ դիմավորեց աղաղակներով ու կանչերով իր վրա հարձակվող խուժանին և հարկադրեց նրան նահանջել: Պատյումկինը քաղաքից վրա հասավ կայազորով: Պուգաչովն անցավ Կազանկան և հեռացավ քաղաքից տասնհինգ վերստ՝ Սուխայա Ռեկա գյուղը: Նրան հետապնդել անհնար եր. Միխելսոնը չուներ մինչև իսկ յերեսուն պիտանի ձի:

Ղազանն աղատված եր: Բնակիչները խռնվեցին բերդի պարսպի վրա, վոր գոնե հեռվից տեսնեն իրենց աղատարարի բանա-

Ալ. Միկելսոնը տեղից չեր շարժվում, նոր հարձակման սպասելով: Խսկապես, Պուգաչովը զայրացած իր անհաջողություններից, այնուամենայնիվ հուսը չեր կարում վերջ ի վերջո Միկելսոնին հաղթելու: Նա ամեն կողմից նոր սրիկայախմբեր հավաքեց, միացնելով իր առանձին զորամասերին և հունիսի 15-ի առավոտյան, հրամայելով, վոր իր խառնիճաղանձ դորքին կարդան մասիփեսուր, ուր նա հայտնում եր իր դիտավորություն՝ գնալ դեպի Մոսկվա, յերրորդ անգամ նետվեց Միկելսոնի վրա: Նրա դորքը բաղկացած եր քսանհինդ հազար ամեն կարգի թափթփուկներից: Բազմամարդ խուժանները շարժվեցին նույն այն ճանապարհով, վորով արդեն յերկու անգամ փախել եյին: Փոշուամպերը, վայրենի աղաղակները, աղմուկն ու դղրդյունը հայտնի դարձրին նրանց մոտենալը: Միկելսոնը նրանց դիմ դուրս յեկավ ութ հարյուր կարարիներներով, հուսարներով և չուգուելան կաղակներով: Նա գրավեց նախկին կովի վայրը՝ ծարիցինի մոտ և իր զորքը բաժանեց յերեք խմբի, մեկը մյուսից մոտ տարածությամբ: Բունտարարները հարձակվեցին նրա վրա: Յահիկյան կաղակները կանգնած եյին թիկունքում և Պուգաչովի հրամանով պետք ե սրախողխող անելին փախչողներին: Սակայն Միկելսոնը և Խարինը յերկու կողմից հարվածեցին նրանց, տապալեցին ու քշեցին: Ամեն ինչ վերջացավ մի վայրկյանում: Իսկուր Պուգաչովն աշխատեց պահել յեկած խուժանը՝ նախ սրարշավ հասնելով մինչև իր առաջին բանակատեղը, ապա և յերկրորդը: Խարինը յեռանդուն կերպով հետապնդեց նրան, ժամանակ չտալով վոչ մի տեղ կանգ առնելու: Սույն բանակատեղերում գտնվում եյին մինչև տաս հազար Դաղանի բնակիչներ՝ ամեն սերի ու աստիճանի: Նրանք աղատվեցին: Կաղանկա գետակը լիքն եր մեռած մարմիններով: Իննու հազար գերի և իննը թնդանոթ մնացին հաղթողի ձեռքում: Կովի ժամանակ սպանվել եյին մինչև յերկու հազար հոգի, մեծ մասամբ թաթարներ ու բաշկիրներ: Միկելսոնը կորցրեց մոտ հարյուր մարդ սպանված ու վիրավոր: Նա քաղաք մտավ խանդավառ բնակիչների՝ իր հաղթության վկաների կանչերի տակ: Նահանգապետը՝ հիվանդությունից տանջված, վորից նա մեռավ յերկու շաբաթ հետո, բերդի պարիսպներից դուրս դիմավորեց հաղթողին, աղնվականության և հոգեորականության ուղեկցությամբ: Միկելսոնը դնաց ուղիղ դեպի տաճար, ուր սրբազան բնիամինը գոհարան մաղթանք կատարեց:

Հազանի դրությունը սոսկալի յեր, նրա մեջ գտնված յերկու հազար ութ հարյուր վաթսուն յոթ տներից յերկու հազար հիսուն յոթը այրված եր: Քսանհինդ յեկեղեցին և յերեք վանքը նույնպես այրված եյին: Գաստինից-Դվորը և մնացած տները, յեկեղեցիներն ու վանքերը կողոպտված եյին: Գտնվեցին մինչև յերեք հարյուր սպանված ու վիրավոր բնակիչներ. մոտ հինգ հարյուր մարդ անհետ կորան: Սպանվածների մեջ եյին գտնվում գիմնազիայի գիրեկառը՝ կանիցը, մի քանի ուսուցիչներ և աշակերտներ ու գնդապետ Ռադիոնովը: Գեներալ-մայոր Կուդրյավցելը, հարյուր տասնամյա մի ծերունի, չուղեց պատսպարվել բերդում՝ չնայած ամեն տեսակ հորդորների: Նա ծնկաչոք աղոթք և անում Դաղանի կուսանաց վանքում: Ներս են վագում մի քանի կողոպտիչներ: Նա սկսում է հորդորել նրանց: Զարագործները սպանում են նրան յեկեղեցու գավթում:

Այսպես եր տոնում իր վերադարձը խեղճ կոճղավորը, վորը մի տարի գրանից առաջ փախել եր Ղազանից: Բանտի շենքը, վորտեղ նա մտակ ու տաժանկը ություն պիտի տեսներ, այրել եր, իսկ կալանավորները՝ նրա վոչ հեռու անցյալի ընկերները ազատ ելին արձակված: Զորանոցներում արգեն մի քանի ամիս եր, ինչ պահնվում եր կազակունի Սոֆիա Պուգաչովան իր յերեք յերեխաներով: Ասում են, վոր ինքնակոչը, նրանց տեսներով, լաց ե յեղել, սակայն չի գավաճանել ինքն իրեն: Նա հրամայել և նրանց բանակատեղ տանել, ասելով, ինչպես հավատացնում են. յես գիտեմ երան. Երա մարդը ինձ մեծ ծառայություն ե մատուցել: Դավաճան Մինեյնը՝ Ղազանի աղետի գլխավոր մեղապարտը, Պուգաչովի առաջին պարտության ժամանակ գերի ընկալ և սաղմական դատարանի վորոշումով քշեց շարքի միջով և ծեծվելով մահացվեց¹⁾:

Ղազանի իշխանությունն սկսեց հոգ տանել բնակիչներին անվնաս մնացած տներում տեղափորելու համար: Նրանք հրավիրվեցին բանակատեղ՝ Պուգաչովից իւլիած ավարը ջոկելու և

1) Տանջալից մահապատժի մի տեսակը, յերբ գատապարտյալին հարեագրու եյին քայլել ւերկարք կանգնած զինվորների միջով, վորոնցից յուրաքանչյուրը մի հարված եր աեղում մահակով: Պատիժը լինում եր յերկու կարգի. կամ վորոշ թվով հարվածներ, կամ ցմահ—հարվածում երին արքան, վոր դատապարտյալը մեռնում եր: Հազարակե ելին այն գեղքերը, յերբ վորոշ թվով հարվածներ ստացողը կենքանի, եր մնում: Ծ. թ.

իրենց սեփականությունը յետ ստանալու համար։ Շտապեցին մի կերպ բաժանել։ Ունեվոր մարդիկ չքավոր դարձան։ ով տնանկ եր՝ աչքը բացեց հարուստ։

Պատմությունը պետք ե աերքի այն զրապարտանքը, վոր մարդիկ թեթևամիտ կերպով կրկնում են. պնդում եյին, վոր Միխելսոնը կարող եր կանխել Ղազանի գրավումը, վոր նա դիտամբ խոռվարաներին ժամանակ ե տվել քաղաքը թալանելու, վորպեսզի իր հերթին հարուստ ավար ձեռք ձգի, շահը գերադասելով փառքից, պատիվներից և թագավորական պարգևներից, վոր սպասում եր Ղազանի փրկչին և բունտը խաղաղեցնողին։

Ընթերցողները տեսան, թե Միխելսոնը ինչպես արագ և ինչպես անխոնչ եր հետապնդում Պուգաչովին, Յեթե Պատյոմի կինը և Բրանտը կատարեցին իրենց գործը և կարողանային դիմանալ գոյն մի քանի ժամ, ապա Ղազանը կփրկվեր։ Միխելսոնի զինվորներն, ի հարկե, հարստացան. սակայն մեղ ամոթ կլիներ առանց ապացուցման մեղադրել հին, վաստակավոր ռազմիկին, վոր իր ամբողջ կյանքն անց եր կացրել պատվի դաշտում և մեռել ե վորպես ոռւսական զորքերի գլխավոր հրամանատար։

Հուլիսի 14-ին Ղազան հասալ յենթագնդապետ կոմս Մելինը և Միխելսոնի կողմից ուղարկվեց Պուգաչովին հետապնդելու հնքը Միխելսոնը մնաց քաղաքում—իր այրուձին թարմացնելու և պաշարեղեն պատրաստելու համար։ Մյուս պետերը շտապով մի քանի ուազմական կարգադրություններ արին, քանի վոր, չնայած Պուգաչովի պարտությանը, արդեն գիտելին, թե վորչափ վտանգավոր եր սույն ձեռներեց ու գործունյա խոռվարը։ Նրա շարժումներն այնպես արագ եյին ու աննախատեսելի, վոր հնար չկար նրան հետապնդելու, մանավանդ վոր այրուձին չափից դուրս ուժասպառ եր յեղել։ Աշխատում եյին կտրել նրա ճանապարհը, սակայն մեծ տարածության վրա ցըրված զորքերը չեցին կարողանում ամեն տեղ հասնել և արագ շրջումներ կատարել։ Պետք ե ասել և այն, վոր այն ժամանակվա զորապետների մեջ հազիվ կդտնվեր մեկը, վորն ի վիճակի լիներ Պուգաչովի կամ նրա ավելի քիչ հայտնի համախոնների հախից գալ։

ՊՐԵՐՈՐՈՒ ԳԼՈՒԽ

Պուգաչովը Վոլգա, ի այն կողմում—Ընդհանուր իրարանցում—Գեներալ Սառպիշինի նամակը—Ցեկատերինայի դիտափորությունը—Կոմս Պ. Իվ. Պանին—Զորքերի շարժումը—Պետքալի գրավումը—Վակումսկու մահը—Դերժավինի գեները Բոշնյակի հետ—Սարատովի գրավումը—Պուգաչովը Ցարիցինի սոտ—Աստղաբաշին Լովիցի մահը—Պուգաչովի պարաւթյունը—Սաւվորովի—Պուգաչովը հանձնված ե կառավարության ձեռք—Նրա խոսակցությունը կօմք Պանինի հետ—Պուգաչովի և նրա համախոններին դաշը—Բունտարաբների մահապատիժը։

Զիեր փոխելով Պուգաչովը փախչում եր Կոկչայսկի ճանապարհով, յերեք հարյուր յափկյան և իլեցկի կազակների հետ ու վերջապես ընկավ անտառու Խարինը, վոր նրան հետապնդում եր ամբողջ յերեսուն վերստ, ստիպված յեղավ կանգ առնել։ Պուգաչովը գիշերեց անտառում։ Նրա ընտանիքը հետն եր։ Նրա ընկերների մեջ գտնվում եյին յերկու նոր անձինք։ Նրանցից մեկը յերիտասարդ Պուգաչովին եր, փառապանծ կոնֆեգերատի հարազատ յեղբայրը¹⁾, Վորպես ուազմագերի նա գտնվում եր Ղազանում և դեպի Ռուսաստանը տածած իր ատելությունից միացալ Պուգաչովի հրօսակախմբին։ Յերկրորդը ռեֆորմատորական դավանության պատկանող մի պատոր եր։ Ղազանի հըրդեհի միջոցին նրան տարել եյին Պուգաչովի մոտ։ ինքնակոչը ճանաչել եր նրան։ մի ժամանակ քաղաքի փողոցներով շղթաշակապ անցնելիս Պուգաչովը նրանից վողորմություն եր ստացել։ Խեղճ պաստորը մահվան եր սպասում։ Պուգաչովը սիրալիր ընդունեց նրան և գնդապետի աստիճան շնորհեց։ Պաստոր գլն-

1) Նրանք յերեք յեղբայր եյին։ Ավագը հայտնի եր իր հանդուզն մահափորձով՝ ուղղված Մատանիսլավ Պոյաշտովկի թագավորի անձի դեմ, կրասերը 1772 թվից գտնվում եր դերության մեջ և ապրում նահանգապետի տանը, ուր նրան ընդունում եյին իբրև հարազատի։

Մանոթ. հեղինակի

դապետին նստեցրել ելին բաշկիրական ձիու վրա: Նա ուղեկցեց Պուգաչովի փախուստը և մի քանի որ անց արդեն հետ ընկալ նրանից և վերադարձավ Ղազան:

Պուգաչովը յերկու որ թափառում եր մերթ այս, մերթ այն կողմը, այդ կերպ խաբելով ուղարկված հետապնդումը: Նրա սրիկաները, ցրվելով, սովորական կողոպւտներ ելին կատարում: Բելորորդովը բռնվեց Ղազանի շրջականերում, մտրակով ծեծվեց, հետո արդիք Սոսկվա և մահապատժվեց: Մի քանի հարյուր փախստականներ միացան Պուգաչովին: Հուլիսի 18-ին նա հանկարծ ուղղվեց դեպի Վոլգա՝ կոկչայսկի գետանցը և իր գորքի ամենալավ մասով՝ հինգ հարյուր մարդկանց հետ անցավ մյուս կողմը:

Պուգաչովի գետանցումն ընդհանուր իրարանցում առաջացրեց: Վոլգայի ամբողջ արևմտյան կողմն ապաստամբվեց և անձնատուր լեղավ ինքնակոչին: Կալվածատերերին պատկանող գյուղացիները բռնտ արին: Այլադավանները և նոր մկրտվածները¹⁾ սկսեցին սպանել ոռւս քահանաներին: Զորավարները քաղաքներից փախստ, ազնվականները՝ կալվածքներից: Խաժամուժ ժողովուրդը վորսում եր թե՛նրանց և թե՛ մյուսներին ու ամեն կողմից բերում և ներկայացնում եր Պուգաչովին: Պուգաչովը ժողովուրդին ազատություն հայտարարեց, ազնվական ցեղի վոչընշացում, պարտիքների ներում և աղի ձրի բաշխում: Նա գնաց դեպի Ցիվլսկ, քաղաքը թալանեց, զորավարին կախեց և իր հրոսակախումքը յերկու մասի բաժանելով, մի մասն ուղարկեց Նիժեգորոդսկայա ճանապարհով, իսկ մյուսը՝ Ալատիրսկի ուղիով և այդպիսով խղեց Նիժնիի և Ղազանի հաղորդակցությունը: Նիժեգորոդի նահանգապատշը՝ գեներալ-պորուչիկ Ստուպիշինը գրեց իշխան Վոլկոնսկուն, թե Ղազանի վիճակն և սպասում նաև Նիժնիին և վոր նա չի յերաշխավորում նաև Սոսկվայի համար: Ղազանի և Որենբուրգի նահանգներում գտնվող բոլոր զորախըմբերը շարժվեցին և ուղղվեցին Պուգաչովի դեմ: Շչերբատովը թուլումայից, իսկ իշխան Գոլիցինը Մենզելինսկուց շտապեցին դեպի Ղազան: Մելինն անցավ Վոլգան և հուլիսի 19-ին դուրս

1) Նվաճած մանր ազգությունների մեջ ցարլզմի գաղութային և քսանագիային (տարասփոռումն) զուգընթաց մուտք եր գործում և ուղղափառ զափառքը, Այսուղ խոսքը բռնի կերպով կամ խաբեբայությամբ ուղղափառ դարձածների մասին եւ: Ծ. թ.

ցեկավ Սվյաժսկից. Մանսուրովը Յակով քաղաքից շարժվեց գեպի Սիլլրան. Մուֆելը գնաց Սիմբէրսկի վրա. Միսելսոնը Զեբրոկսարիից փութաց դեպի Արդամաս, վորպեսզի կտրի Պուգաչովի ճանապարհը դեպի Մոսկվա...

Աակայն Պուգաչովն այլու դիտավորություն չուներ հին մայրաքաղաքի վրա գնալու: Ամեն կողմից շըջապատված կառավարական գորքերով, հավատ չընծայելով իր համախոհներին, նա արդեն իր փրկության մասին եր մտածում: Նրա նպատակն եր՝ անցնել կուբանի այն կողմը, կամ թե՛ Պարսկաստան: Գրլիսավոր բռնտարարները նախատեսում ելին իրենց սկսած գործի վախճանը և արդեն սակարկում ելին իրենց առաջնորդի գլուխը: Պերֆիլեվը բոլոր հանցավարտ կազակների անունից գաղտնի կերպով մի հավատարմատար, ուղարկեց Պետերբուրգ, ինքնակոչին հանձնելու առաջարկությամբ: Կառավարությունը, վոր մի անգամ խարվել եր նրանից, լավ չեր հավատում նրան, սակայն բանակցությունների մեջ մտավ նրա հետ: Պուգաչովը փախավ, բայց նրա փախուստը ասես արշավանք լիներ: Յերեք նրա հաջողություններն այնպես սոսկալի չեյին, յերբեք խոռվությունը չեր մոլեգնել այլպիսի ուժով: Ապստամբությունը մի գյուղից մյուսն եր անցնում, մի գավառից մյուսը: Հերիք եր, վոր հայտնվեյին յերկու-յերեք չարագործներ, վորպեսզի ամբողջ մարգեր բռնտ անեյին: Կազմվում ելին կողոպտիչների և բռնտարարների առանձին հրոսակախմբեր և յուրաքանչյուրն իր Պուգաչովն ուներ...

Այս ցավալի լուրերը խոր տպավորություն գործեցին Պետերբուրգում և մթագնեցին այն ուրախությունը, վոր թողել եր տաճկական պատերազմի վախճանը և Քյուչուկ-Կայնարջիի փառավոր հաշտության կնքումը: Թագուհին, վոր անբավական եր իշխան Շչերբատովի գանդաղկոտությունից, զեռևս հուկիսի ըսկպին, վճռեց նրան յետ կանչել և գորքի գլխավոր հրամանատարությունն հանձնել իշխան Գոլիցինին: Այս հրամանը տանող սուրհանդակը կանգ առավ Նիժնի-Նովգորոդում՝ ճանապարհի անապահովության պատճառով: Իսկ յերբ թագուհին իմացավ Ղազանի առման և բռնտը Վոլգայի այն կողմը փոխադրվելու մասին, այն ժամանակ նա արդեն մտածում եր ինքը մեկնել այդ յերկրամասը, ուր սաստկանում եր աղետն ու վտանգը, և անձամբ դեկավարել զորքը: Կոմս Նիկիտա Խվանովիչ Պանինը կարողացավ համոզել թագուհուն թողնել այդ դիտավորությունը:

Թագուհին չգիտեր՝ ում հանձնի հայրենիքի փրկությունը։ Սույն ժամանակ մի ազնվատոհմիկ՝ պալատից հեռացված և Բիբիկովի պես աչքից ընկած՝ կոմս Պյոտր Իվանովիչ Պանինը ինքը պատրաստակամություն հայտնեց իր վրա վերցնել այն սխրագործությունը, վորը չեր ավարտել իր նախորդը։ Յեկատերինան յերախտագիտությամբ տեսավ իր բարեճնունդ հապատակի յեռանդը և կոմս Պանինը այն ժամանակ, յերբ իր գյուղացիներին ու դարպասավորներին¹⁾՝ զինելով պատրաստվում եր դուրս գալ Պուգաչովի դեմ, իր գյուղում հրաման ստացավ ընդունել խոռվությամբ բռնված նահանգների և այստեղ ուղարկված զորքերի իշխանությունը։ Այսպիսով Բենդերի²⁾ նվաճողը պատերազմի դուրս յեկավ մի հասարակ կազակի դեմ, վոր դրանից չորս տարի առաջ, անհայտ կերպով ծառայում եր նրա հրամանատարությանը հանձնված զորքի մեջ։

Հուլիսի 20-ին Պուգաչովը կուրմիշի մոտ լողալով անցավ Սուրա գետը։ Ազնվականները և չինովնիկները փախան։ Խաժամութ ամբոխը դիմավորեց նրան գետափին՝ սրբոց պատկերներով ու հացով։ Կարդացվեց վրդովեցուցիչ մանիֆեստը։ Հաշմանդամ զինվորների զորախումը բերվեց Պուգաչովի մոտ։ Դրա պետ մայոր Ոլլովը և մի յենթասպա, վորի անունը դժբախտաբար չի պահպել, միայն նրանք չուղեցին իերզիկ և յերես առ յերես մերկացը ինքնակոչին։ Նրանց կախեցին և մեռած վիճակում հարվածեցին մտրակներով։ Ոլլովի այրին փրկվեց իր տան սպասավորների ձեռքով։ Պուգաչովը հրամայեց պետական ողի բաժանել չուպաշներին։ Կախեց մի քանի ազնվականների և գնաց Յաղը ինքնակի վրա, քաղաքը թողնելով յակայան չորս կազակների իշխանության տակ և նրանց տնօրինությանը հանձնելով իրեն միացած վախտուն ձորտերին։ Նա իր յետելից մի փոքրիկ հրո-

1) Дворовые — феодалական Ռուսությում բաժնեկարգածավոր և այսպես կոչված մեծ իշխանների պալատական շտաբը, սկսած բոյարներից մինչև դուստրաներն ու խոհարարները։ Այստեղ խոռվը կալվածատիրական ճորտերից նրանց պահանքը և փոխարարները։ Այստեղ խոռվը կալվածատերը հողից կտրած պահում եր կալվածատիրական ասպին ե, փորոնց կալվածատերը հողից կտրած պահում եր կալվածատիրական ատանը՝ այլ և այլ ծառայություններ անելու։ Դարպասավորների թիվը շատ աճեց եր, հաճախ մինչև մի քանի հարյուրի թիվ համարում մի կոլվածքում։

2) Բենդերի — քաղաք այժմյան Բեռնարաբիաում, Դնեստրը գետի աջ ափին։ Ռուսաստանը ար քաղաքն ստացել է 1806—1812 թ. թ. ռուս-տաճկական պատերազմի հետեանքով։ համաձայն Բուլիարեստում կնքված դաշնակը (1812) ամբողջ Բեսսարաբիան անցավ Ռուսաստանին։ Ծ. թ.

սակախումբ թողեց՝ կոմս Մելինին բռնելու համար։ Դեպի Արգամաս շարժվող Միխելսոնը՝ Խարինին ուղարկեց Յագրինսկ, ուր շտապեց և կոմս Մելինը։ Պուգաչովին իմանալով այդ մասին, շրջվեց գեպի Ալատիր. բայց իր շարժումը թագցնելով. գեպի Յագրինսկ ուղարկեց մի հրոսակախումբ, վորը յետ մղվեց զորավարի և բնակիչների կողմից, իսկ դրանից հետո նրանց հանդիպեց կոմս Մելինը և բոլորին ցրիկ տվեց։ Մելինը շտապեց գեպի Ալատիր, ճանապարհին ազատեց Կուրմիշը, ուր կախեց մի քանի խոռվարարների, իսկ իրեն զորավար անվանող կազակինեալ վերցրեց վորպես ուղմագերի։ Հաշմանդամ զինվորների սպաները, վորոնք յերգում ելին տվել ինքնակոչին, արդարանում եյին նրանով թե իրենք յերգում տվել են վոչ թե տնկեղծ սրտով, այլ նորին Կայսերական Սեծուրյան շահները պահպանելու համար։ «Յեվ վոր մենք, գրել ելին նրանք Ստուպիշինին, աստծու և մեր ամենավողորմած թագուհու առջև խախտել ենք յերգումը և այն չարագործին յերզիկ, դրանում մենք մատուցում ենք մեր քրիստենեական զղումը և լալագին աղերսում՝ թողություն տալ սույն մեր ակամա հանցանքը, քանի վոր ալդ բանին մեզ հասցրել և միայն մահվան սարսափը։ Քսան մարդ ստորագրել են սույն ամոթալի մեղայականը։

Պուգաչովը սանում եր արտասովոր արագությամբ, ամեն կողմ իր հրոսակախմբերն ուղարկելով։ Զգիտեյին՝ գրանցից վորի մեջ և գտնվում նա ինքը։ Հասնել նրան անհնար եր. նժուկ նստած նա սլանում եր գյուղական ճանապարհներով, ձիելը փոխելով և իր յետելից խոռվարկուներ թողնելով, վորոնք թվով յերկու, յերեք և հինգից վոչ ալել, անվտանգ կերպով շրջում եյին գյուղերում ու քաղաքներում, ամենուրեք նոր հրոսակախմբեր հավաքելով։ Նրանցից յերեքը հայտնվեցին Նիմին-Նովգորոդի շրջակայքում։ Դեմիովի գյուղացիները կապուտեցին նրանց և ներկայացրին Ստուպիշինին։ Սա հրամայեց բեռնանավակների վրա կախաղան բարձրացնել նրանց և թողնել Վոլգայի հոգու մոտով։

Հուլիսի 27-ին Պուգաչովը մտավ Սարանսկ, նրան դիմավորեց վոչ միայն հասարակ ժողովուրդը, այլ և հոգեորականությունն ու վաճառականությունը... Յերեք հարյուր ազնվականների՝ ամեն հասակի ու սեռի՝ նա կախեց այդտեղ. գյուղացիներն ու դարպասավորները խմբով գալիս հավաքվում եյին նրա չուրջը։ Քաղաքից նա դուրս յեկավ 30-ին։ Մյուս որը Մելինը մտավ Սա-

բանսկ, պահակների հսկողության տակ առավ պրապորչիկ Շախմամեդովին, վորին ինքնակոչը զորապետ եր կարգել ինչպես և հոգեոր ու աղնվականական կոչման այլաշքի ընկնող դավաճաններին, իսկ հասարակ մարդկանց՝ հրամայեց մտրակով ծեծել կախաղանի տակ:

Միխելոնը Արզամասից ընկավ Պուգաչովի յետելը. Մուֆելը Սիբիրից շտապեց դուրս գալ նրա դեմ: Մելինը գնում եր՝ կրնկակոխ հետապնդելով նրան: Այսպիսով յերեք զորախմբեր շրջապատեցին Պուգաչովին: Իշխան Շէրբատովն անհամբերությամբ եր սպասում Բաշկիրիայից յեկող զորքերին, վորապեսզի ոգնություն ուղարկի գործող զորախմբերին և ինքն ուղում եր շտապել նրանց յետեկից. սակայն ստանալով հուլիսի Հի հրամանը, իշխանությունը հանձնեց իշխան Դոլցինին և մեկնեց Պետերբուրգ:

Նույն միջոցին Պուգաչովը մոտեցավ Պենզային: Զորավար Վսեկոլժսկին մի առ ժամանակ խաժամուժը պահել եր հնազանդության մեջ և ժամանակ տվեց աղնվականներին փախչելու: Պուգաչովը յերեաց քաղաքի առաջ: Բնակիչները նրա դեմ դուրս յեկան սրբապատկերներով ու հացով և նրա առջև ծունկ չոքեցին: Պուգաչովը մտավ Պենզա: Վսեկոլժսկին, վորին քաղաքի զորք լքել եր, տասներկու աղնվականների հետ փակվեց իր տանը և վճռեց պաշտպանվել: Տունը կրակ տվին. քաջ Վսեկոլժսկին ընկավ իր ընկերների հետ. պետական և աղնվականական տները կողոպտվեցին: Պուգաչովը կարվածատիրական մի մուժիկի զորավար կարգեց և գնաց Սարատովի վրա:

Տեղեկանալով Պենզայի գրավման մասին, Սարատովի իշխանությունն սկսեց իր կարգադրություններն անել:

Այդ ժամանակ Սարատովումն եր գտնվում է Երժավինը: Նա ուղարկված եր (ինչպես մենք արդեն տեսանք) Մալիկովկա գյուղը, վորապեսզի կտրի Պուգաչովի ճանապարհը նրա՝ դեպի իր գիղ փախչելու զեղքում: Երժավինը տեղեկանալով կիրգիզկայսակների հետ Պուգաչովի ունեցած հարաբերությունների մասին, կարողացավ նրանց կտրել Ուղեն գետերով չվող հորդաներից և մտաղրվել եր գնալ Յահիկյան քաղաքն աղատելու, սակայն գեներալ Մանսուրովը նախադգուշացրեց նրան: Հուլիսի վերջին նա հասավ Սարատով, ու գվարդիայի պոլուչիկի աստիճանը, կտրուկ ինքն ու կրակու բնակորությունը կարեոր աղբցություն ունեցան ունեցան արամականությունը տակ:

Ոգոստոսի 1-ին Եկրժավինը գաղութավորների խնամակալության գրասենյակի գլխավոր դատավոր Լոդիժինսկու հետ միասին Սարատովի պարետ Բոշնյակին հրամայեց իր մոտ գալ խորհրդակցելու այն միջոցների մասին, վորոնք պետք և ձեռք առնվելին ներկա հանգամանքներում: Երժավինը պնդում եր, վոր գրասենյակային մագալինների մոտ, քաղաքի ներսում պետք և ամրություններ շինել, պետական գանձը փոխադրել այնտեղ, Վոլգայի վրա յեղած նավակներն այրել, ափի յերկարությամբ մարտկոցներ դնել ու գնալ Պուգաչովի դեմ: Բոշնյակը չեր համաձայնում թողնել իր բերդը և ուղում եր ամրանալ քաղաքի յետեկի մասում: Վիճեցին, տաքացան—և Երժավինը համբերությունը կորցրած ասաջարկեց ձերբակալել պարետին: Բոշնյակը մնաց անդրդվելի, կրկնելով, թե նա չի ուղում թողնել վոր իրեն կստանված բերդը և աստծո տաճարները թալանվեն: Երժավինը նրան թողնելով, յեկավ մագիստրատ, առաջարկեց, վոր բուրու բնակիչները անխմտիր գան հողային աշխատանքների այն տեղը, վոր նշանակել և Լոդիժինսկին: Բոշնյակը գանգատվեց, սակայն վոչ վոք չմատեց նրան: Սույն վեճերի մասին վորպես հուշաթուղթ մնաց Երժավինի կծու նամակը՝ ուղղված համառ պարետին:

Ոգոստոսի 4-ին Սարատովում իմացան, վոր Պուգաչովը գուրս և յեկել Պենզայից և մոտենում ե Պետրովսկին: Երժավինը պահանջեց Դոնի կազակների մի զորախմումը և նրանց հետ ճանապարհ ընկավ դեպի Պետրովսկի, վորպեսզի ախտեղից դուրս բերի պետական գանձը, վառողը և թնդանոթները: Սակայն քաղաքին մոտենալիս նա լսեց զանգերի զողանջուն և տեսավ խոռվարների առաջավոր խառնիխուռան խմբերը, վորոնք քաղաք եյին մտնում և հոգեորականությունը, վոր սրբապատկերներով ու հացով գուրս եր յեկել նրանց դիմավորելու: Յեսառուի և յերկու կազակների հետ նա ազատ քշեց ձիերը և տեսնելով, վոր ազևս անհլիք չկա, նրանց հետ միասին վերադարձավ Սարատով: Նրա զորախմումը մնաց ճանապարհին, Պուգաչովին սպասելով: Ինքնակոչն իր համախոնների հետ մոտեցավ նրանց: Նրան ընդունեցին ծնկաչոք: Նրանցից լսելով գվարդիական սպայի մասին, Պուգաչովը տեղն ու տեղը ձին փոխեց և տեղը ձեռքն առնելով ինքը չորս կազակների հետ սլացավ հետապնդելու: Երժավինին ուղեկցող կազակներից մեկին Պուգաչովը տեղահարեց: Երժավինը կարողացավ մի կերպ հասնել Սարատով, վորտեղից հաջորդ որը յեկավ լոդիժինսկու հետ, քաղաքի

պաշտպանությունը թողնելով իր կողմից ծաղրված Բոշնյակին հոգատարությանը:

Ողոստոսի 5-ին Պուգաչովը շարժվեց գեպի Սարատով։ Նրա զորքը բաղկացած եր լեռեք հարյուր յահիկան և Դոնի հարյուր հիսուն կազակներից, վորոնք նախորյակին եյին միացել նրան, և մինչև տաս հազար կալմիկներից, բաշկիրներից, յասակ թաթարներից¹⁾, կալվածատիրական գյուղացիներից, ճորտերից և ամեն տեսակ սրիկաներից։ Մինչև յերկու հազար հոգի մի կերպ զինվել եյին, մյուսները գնում եյին կացիներով, լեղաններով

6-ին Պուգաչովը մոտեցավ Սաբատովին և կանդ առավ քաղաքից յերեք վեցսուի վրա:

Բոշնյակը սարատովյան կազակներ ուղարկեց ռազմագերի վորսալու համար, բայց նրանք անձնատուր յեղան Պուգաչովին, Նույն միջոցին բնակիչները Կորյակով վաճառականին, դավաճանական առաջարկություններով, գաղտնի ուղարկեցին ինքնակոչի մոտ: Բունտարարները ձի նստած մոտենաւմ երին բերդին, զինվորների հետ խոսակցելով: Բոշնյակը հրամակեց կրակել: Այն ժամանակ բնակիչները, քաղաքակություն Պրոտոպոպովի առաջնորդությամբ, բացահայտորեն գրգռվեցին և դիմեցին Բոշնյակին, պահանջելով, վոր նա չսկսի կոիվը և սպասի Կորյակովի վերադարձին: Բոշնյակը հարցրեց. ի՞նչպես նրանք համարձակվեցին առանց իր գիտության բանակցությունների մեջ մտնել ինքնակոչի հետ: Նրանք շարունակեցին աղմկել: Մինչ այս, մինչ այն Կորյակովը վերադարձավ, հետը մի վրգովեցուցիչ նամակ բերելով: Բոշնյակը այն խլեց դափանանի ձեռքից, պատոեց և կոխոտեց, խսկ Կորյակովին՝ հրամայեց պահակների հսկողության տակ առնել: Վաճառականները նրան հանդիսատ չեցին տալիս խնդիրներով ու սպառնալիքներով, և Բոշնյակը հարկադրված եր զիջել նրանց ու աղատել Կորյակովին: Անոււանենայնիվ նա պատրաստվեց պաշտպանության: Ալգ ժամանակ Պուգաչովը գրավեց Սարատովի վրա իշխող Սոկոլովա կոչված սարը, մարտկոցը դրեց այնտեղ և սկսեց կրակ տեղալ քաղաքի վրա: Առաջին զարկեց

1) Յառակ (թյուրք. որենք) — բնահարկ, վոր Մերձգոլգայն ի երկրամասում և Սլքիբում ապրող ժողովուրդներից հավաքում երբն տեղական մանր-մոլուր իշխանները, իսկ ուստական գերջիշանության ամրապնդման հետ ցարական կառավարության գործականները: Բնահարկ տվող թաթարները: Ծ. թ.

հետո բերդական կազակները և բնակիչները դես ու դեն փախան։ Բոշնյակը հրամայեց կրակել մորտիրից, սակայն ռումբը ընկապ հիսուս սաժենի վրա։ Նա մի պառւյտ արեց իր զորքի մեջ և ամենուրեք հուսալքում տեսավ, սակայն իր արիությունը չեր կորցնում։ Խոռվարաբները հարձակվեցին բերդի վրա։ Նա կրակ բացեց և արդեն կարողացել եր յետ մղել նրանց, յերբ հանկարծ յերեք հարյուր հրետափուրներ թնդանոթների սեպերը և պատրույգները խլելով, բերդից դուրս վագեցին և անձնատուր յեղան։ Այդ միջոցին ինքը Պուգաչովը սարից հարձակվեց բերդի վրա։ Այդ ժամանակ Բոշնյակը վճռեց սարատովյան մի բատալիոն առած՝ զենքով ճանապարհ բանալ խոռվարաբների խառնիճաղանճ խմբերի միջով։ Նա հրամայեց մայոր Սալմանովին առաջ շարժվել բատալիոնի կեսի հետ, սակայն նրա մեջ վախկոտովյուն կամ դավաճանելու պատրաստակամություն նկատելով, զրկեց նրան իշխանությունից։ Մայոր Բուտիրինը միշամտեց նրա համար և Բոշնյակը յերկրորդ անգամ հանդես բերեց թուլություն։ Նա Սալմանովին թողեց իր տեղում և դառնալով բատալիոնի յերկրորդ կեսին հրամայեց զրոշակները պարզել ու դուրս գալ ամրություններից։ Սույն բոպելին Սալմանովն անձնատուր լեզավ և Բոշնյակը մնաց վաթսուն հոգով՝ սպանել ու զինվորներ սիասին առած։ Քաջ Բոշնյակը այս մի բուռն մարդկանցով գուրս լեկալ բերդից և ամբողջ վեց ժամ անընդհատ գնում երգուրս մնաց վաթսուն հոգով՝ սպանել ու զինվորներ մաղանճ խմբերի միջով։ Գիշերը դադարեցրեց կոիվը։ Բոշնյակը հասավ Վոլգայի ափերին։ Գանձարկը և դիվանական գործերը գետով ուղարկեց Աստրախան, իսկ ինքը ոգոստոսի 11-ին ապհովաբար հասավ Յարիցին։

Առաջին մուլտֆիլմը՝ Սարաստովը գրավելով կոճղավորներին ազատ արձակեցին, բացին հայի և աղի ամբարները, ողետները ջարդեցին և տները թալանեցին։ Պուգաչովը կախեց իր ձեռն ընկած բոլոր աղնվականներին և արգելեց մարմինները թաղել։ Քաղաքի պարետ նշանակեց կազակ հիսնապետ Ռևֆիմցովին, իսկ ողոստոսի 9-ի կեսորին դուրս յեկավ քաղաքից։ 11-ին քարու-քանդ Սարաստովը մտավ Մուֆելը, իսկ 14-ին՝ Միլինելսոնը։ Յեր-կուսը միանալով շտապեցին Պուգաչովի հետևից։

Պուգաչովը գնում եր կոլպայի հոսանքով ցած։ Այդտեղ
բնակեցրած ոտարերկրացիները՝ մեծ մասամբ շրջմոլիկներ և
անպիտաններ, բոլորը միացան նրան, գրգռված մի լեռ կոնֆե-

գերատի կողմից (անհայտ ե, թե անունով ով ե նա, միայն Պուլավսկին չեր. վերջինս դեռևս այն ժամանակ թողեց Պուգաչովին, զայրացած նրա գաղանային դաժանությունից): Պուգաչովը նրանցից կազմեց հուսարական մի գունդ: Վոլգայի կազակները նույնպես անցան նրա կողմը:

Այսպիսով որպեսի վրա Պուգաչովն ուժեղանում եր, Նրա զորքը արգեն բաղկացած եր քամն հաղարից: Նրա հրոսակախմբերը լցրին Նիժնի-Նովգորոդի, Վարոնեժի և Աստրախանի նահանգները: Փախստական ճորտ Յեփիկնեյեվը, վոր նույնպես Պյոտր III եր կոչվում, գրավեց հնսարան, Տրոիցիլը, Նարովչատը և Կերենսկը, կախեց տեղական զորավարներին ու ազնվականներին և ամենուրեք սահմանեց իր վարչությունը: Ավագակ Ֆիրսկան մոտենում եր Սիմբիրսկին, կովի մեջ սպանելով գընդապետ Ռիշկովին, վորը բռնել եր բունսի սկզբում Որենբուրգի մոտ սպանված Զերնիշովի տեղը: Կայազորը դավաճանեց նրան: Այնուամենայնիվ Սիմբիրսկը փրկվեց գնդապետ Որենի սիրենասովի գալով: Ֆիրսկան շրջակաքը լցրեց սպանություններով ու թարանով: Ուրիշ չարագործներ թալանեցին և այրեցին վերին ու Ներքին Լոմովները: Այս լայնարձակ յերկրի վիճակը սոսկալի յեր: Ազնվականությունը մատնված եր վոչչացման: Բոլոր գյուղերում կալվածատիրական տների դարպասներից կախված եյին կալվածատերերը կամ նրանց վարիչները: Խոռովարաները և նրանց հետապնդող զորախմբերը գյուղացիներից խլում եյին ձիեր, պաշարեղեններ և նրանց վերջին ունեցվածքը: Ամենուրեք իշխանություն չկար այլևս, ժողովուրդը չգիտեր թե ում յենթարկվի: Այն հարցին, թե՞ ում եք հավատարիմ—Պյոտր Ֆյոդորովիչին կամ Յեկատերինա Ալեքսեյեվսկային, խաղաղ մարդիկ չեյին համարձակվում պատասխանել չիմանալով թե հարցնողները վո՞ր կողմին են պատկանում:

Ոգոստոսի 13-ին Պուգաչովը մոտեցավ Դմիտրիեվսկին (Կամիշինկային), Նրա դեմ գուրս յեկավ մայոր Դիցը հինգ հարյուր կայազորակին զինվորներով, հաղար Դոնի կազակներով և հինգ հարյուր կամբիկներով, վորոնց առաջնորդում եյին Դունդուկով և Դերենեկ իշխանները: Կոիվն սկսվեց: Կալմիկները ցաք ու ցրիվ յեղան թնդանոթալին առաջին իսկ զարկի միջոցին: Կազակները քաջարը կովում եցին և հասան մինչև թընդանոթները, սակայն կտրվեցին միուս զորքից և անձնատուր յեղան: Դիցը սպանվեց, կայազորի զինվորները, բոլոր թնդանոթ-

ներով, գերի ընկան: Պուգաչովը գիշերեց կովի վայրում: Մյուս որը նա գրավեց Դուկովկան և շարժվեց գետի Յարիցին:

Սույն քաղաքում, վոր լավ ամրացված եր, իշխում եր գընդապետ Ցիպլետյովը: Նրա հետ եր և քաջ Բոշնյակը: Ոգոստոսի 21-ին Պուգաչովը մոտեցավ իր սովորական հանդինությամբ: Կորուստով յետ մղվելով, նա բերդից հեռացավ ութ վերստ: Նրա դեմ ուղարկեցին մեկ ու կես հազար Դոնի կազակներ, սակայն յետ վերադարձան միայն չորս հարյուր, մյուսներն անձնատուր չեղան:

Մյուս որը Պուգաչովը քաղաքին մոտեցավ Վոլգայի կողմից և Բոշնյակը նորից յետ մղեց նրան: Նույն միջոցին նա լսեց զորախմբերի մոտենալու մասին և շտապով սկսեց քաշվել դեպի Սալեպտա:

Միխելսոնը, Մուֆելը և Մելինը 20-ին հասան Դուբովկա, իսկ 22-ին մտան Ցարիցին:

Պուգաչովը փախչում եր Վոլգայի ափով: Այդտեղ նա պատահեց աստղաբաշխ Լովիցին և հարցըց՝ ի՞նչ մարդ ե նա: Լսելով, վոր Լովիցը դիտելիս և յեղել յերկնային լուսատուների ընթացքը, նա հրամայեց աստղերին մատիկ կախել նրան: Այդունկտ հնոխողեցելով, վոր նույնպես ալդտեղ եր, կարողացավ փախչել:

Մարեպտացում Պուգաչովը հանդստանում եր ամբողջ մի քանի որ, իր վրանում թագնվելով յերկու հարձերի հետ: Նրա ընտանիքը ևս ալդտեղ եր գտնվում: Նա գետի հոսանքով ցած գնաց դեպի Զորնիյ Յար: Միխելսոնը կրնկակոխ հետեւում եր նրան: Վերջապես, 25-ին, լուսադեմին նա հասավ Պուգաչովին՝ Ցարիցինից հարյուր հինգ վերստի վրա:

Պուգաչովը կանգնած եր բարձրության վրա, յերկու ձանապարհների միջև, Միխելսոնը գիշերը անցավ նրա թիկունքը և կանգնեց խոռվարանների դիմաց: Առավոտյան Պուգաչովը նորից տեսավ իր առջև իր ահարկու հալածողին, սակայն չափոթիքը, այլ համարձակ կերպով գնաց Միխելսոնի վրա, իր հետևակ սրիկայախմբերը ուղղելով Դոնի և չուզուելով կազակների գեմ, վորոնք բռնել եյին զորախմբի յերկու թեվը: Կոիվը յերկար չակեց: Թնդանոթալին մի քանի զարկեր քանդեցին խոռվարների շարքերը: Միխելսոնը զարկերն ուղղեց նրանց վրա: Նրանք փախան, թողնելով թնդանոթներն ու ամբողջ գումակը: Պուգաչովը, կամուքին անցնելով, իդուր աշխատում եր պահել նրանց:

Նա փախավ նրանց հետ միասին։ Նրանց ջարդելով հետապնդեցին քառասուն վերստ։ Պուգաչովը կորցրեց մինչև չորս հազար սպանված և մինչև յոթ հազար գերի ընկած։ Մնացածները ցըրվեցին։ Պուգաչովը կովի վարդից յոթանասուն վերստի վրա անցավ Վոլգան, Զերնոյարսկից վերև չորս նավակով և գնաց գեղի մարդագետինների կողմը, վոչ ավել քան յերեսուն կազակներով։ Նրան հետապնդող այրուձին ուշացավ քառորդ ժամ։ Այն փախըստականները, վորոնք չկարողացան ժամանակին նավակներ նստել, նետվեցին ջուրը՝ լողալով անցնելու համար և բոլորն ել խեղդվեցին։

Սույն պարտությունը վերջինն եր ու վճռականը, կոմս Պանինը, վոր այդ ժամանակ Կերենսկ եր հասել, ուրախալի լուր ուղարկեց Պետերպուրգ, իր տեղեկագրի մեջ լիակատար արդարացիություն տալով Միխելսոնի դյուրաշարժությանը, հմտությանը, քաջությանը։ Նույն միջոցին մի նոր, նշանավոր դեմք լեռնաց անցքերի թատերաբեմի վրա։ Սուվորովը հասավ Յարիցին։

Դեռևս Բիբիկովի կենդանության ժամանակ պետական կուլլեգիան տեսնելով խոռվության լրջությունը, կանչեց Սուվորովին, վորն այդ ժամանակ գտնվում եր Սիլիստրիսյի պատերի տակ¹⁾, սակայն կոմս Ռումյանցեվը չթողեց նրան, վորպեսզի Յեվոպային չափից դուրս մեծ հասկացողություն չտրվի պետության ներքին ոնհանգստությունների մասին։ Այսպիսին եր Սուվորովի համբավը²⁾: Իսկ պատերազմն ավարտելուց հետո Սուվորովը հրաման ստացավ անհապաղ մեկնել Մոսկվա, իշխան Վոլկոնսկու մոտ, նոր հանձնարարություններ ընդունելու համար։ Նա տեսնվեց կոմս Պանինի հետ նրա գյուղում և հայտնվեց Միխելսոնի զորախմբում վերջին հաղթությունից մի քանի որ հետո Սուվորովը կոմս Պանինից առաջադրություն ուներ զորապետների և նահանգապետների անունով—կատարել նրա բոլոր հրամանները։ Նա ընդունեց Միխելսոնի զորամասի հրամա-

1) Սիլլուտը իտար քաղաք այժմյան Ռուսինիայի սահմաններում (Դորությանը)։

2) Սուվորով Յ. Վ. (1729-1800)—ռուս հռչակավոր զորավար։ Մասնակցել է յոթնամյա պատերազմին, ոռուս-տաճկական պատերազմներին՝ Յեկատերինա Ա-ի որով, ինչպես նաև լեների դեմ ոռուների մղած արշավանքներին (XVIII դ. վերջին)։ 1799 թ. Սուվորովը դեկազրել է ոռուս-պատրիական միացյալ զորքերը Հյուսու, Խաղթություններ և տարել Տրեբիե և Նովի մոտ, քշել ե այնտեղից Քրանսիական զորքերին, ապա դժվարին անցում կատարել շվեյցարական Ալպերով։ Շագումով յեղել է հասարակ զիսկոր։

նատարությունը, հետևակազորը նստեցրեց Պուգաչովից խլված ձիերի վրա և Ցարիցինի մատ անցավ Վոլգան։ Բունտարար գյուղերից մեկում, վորպես պատիժ, նա վերցրեց հիսուն զույգ յեղներ և այդ պաշարով գնաց դեպի լայնարձակ տափաստանի խորքերը, ուր վոչ անտառ կա, վոչ ջուր և ուր նա իր ճանապարհը պետք ե ուղղեր, արեի, իսկ գիշերը՝ աստղերի ոգնությամբ։

Պուգաչովը թափառում երենց այս տափաստանում։ Զորքերն ամեն կողմից շրջապատեցին նրան։ Մելլինը և Մուֆելը, վորոնք նույնպես անցել ելին Վոլգան, կտրում ելին նրա ճանապարհը դեպի հյուսիսի։ Դաշտային մի թեթև զորախումը Աստրախանից գալիս եր նրան դեմ հանդիման։ իշխան Գոլիցինը և Մանսուրովը փակում ելին նրա ճանապարհը Ցահիկից։ Դունդուկովը իր կալմիկների հետ չափչփում եր տափաստանում։ Հեծելաղետեր ելին սահմանված Գուրեվից մինչև Սարատով և Սևծովից մինչև Կրասնիյ Ցարը։ Պուգաչովը համար չուներ իրեն նեղող ցանցերից դուրս պլանելու։ Նրա համախոհները՝ մի կողմից տեսնելով անխուսափելի կործանումը, իսկ մյուս կողմից՝ ներման արժանանալու հույսը, սկսեցին համաձայնության գալ և վճռեցին նրան հատնձնել կառավարության ձեռը։

Պուգաչովն ուղղում եր գնալ դեպի Կասպից ծով, հուսարով մի կերպ կտրել Կիրդիկ-Ղայսակլիան տափաստանները։ Կազակները արտաքուստ համաձայնվեցին դրան, սակայն ասելով, վորուզում են հետները վերցնել իրենց կանանց ու յերեխաներին, նրան տարան դեպի Ուզեն, վորն այնտեղի հանցավորների ու փախստականների սովորական ապաստարանն եր։ Սեպտեմբերի 14-ին նրանք հասան այնտեղացի հնադաշների գյուղը։ Այստեղ կացացավ վերջին խորհրդակցությունը։ Այն կազակները, վորոնք չհամաձայնեցին հանձնվել կառավարության ձեռը, ցըլեցին։ Մյուսները գնացին դեպի Պուգաչովի ռազմակայանը։

Պուգաչովը մենակ նստած եր մտախոհ։ Նրա գենքը կախված եր քիչ հեռու։ Լսելով ներս մտնող կազակների վոտնաձայնը, նա գլուխը բարձրացրեց և հարցրեց թե՝ ի՞նչ են ուղղում։ Նրանք սկսեցին խոսել իրենց հուսահատական դրության մասին և միաժամանակ կասաց մոտենալով, աշխատում ելին նրան շրջապատել և կտրել կախված զիսկոր։ Պուգաչովը սկսեց նորից հորդուել նրանց՝ դեպի Գուրեվի քաղաք գնալու։ Կազակները պատասխանեցին, վորնրանք յերկար ժամանակ գնացել են նրա յետեղական պարագաներով։

վից և վոր արդեն ժամանակ ե, վոր ինքը գնա նրանց յետելից:— ի՞նչ ե, ասաց Պուգաչովը, դուք ուղում եք զավաճանել ձեր թագավորին:— ի՞նչ արած, — պատասխանեցին կազակները և հանկարծ հարձակվեցին վրան: Պուգաչովը կարողացավ աղասիլել նրանց ձեռքից: Նրանք յետ քաշվեցին մի քանի քայլ:— Ես վադուց եի տեսնում ձեր դավաճանությունը, ասաց Պուգաչովը և մոտ կանչելով իրեն սիրելի՝ իլեցի կազակ Տվորոդովին, պարզեց նրան իր ձեռները և ասաց. կապի՛ր: Տվորոդովին ուղում եր յետ վոլորել նրա արմունկները: Պուգաչովը թույլ չտվեց: Մի՞ք յես ակազակ եմ, — ասաց նա զայրացկոտ: Կազակները նրան ձի նստեցրին և տարան Յափկյան քաղաք: Ամբողջ անապարհին Պուգաչովը նրանց սպաւնում եր մեծ իշխանի վրեժինդրությամբ: Մի անգամ նա հնար գտավ ձեռքերն աղատելու, խլեց սուրը և փշտովը, կրակելով վիրավորեց կազակներից մեկին և գոռաց՝ վորպեսզի դավաճաններին կապեն: Սակայն վոչ վոք այլևս չեր լսում նրան: Կազակները, մոտենալով Յափկյան քաղաքին, մարդ ուղարկեցին այդ մասին պարետին հայտնելու: Կազակ Խարչովը և սերժանտ Բարդովակին ուղարկվեցին նրան դիմավորելու. Պուգաչովին ընդունեցին, վոտքերը կոճղի մեջ դրին և բերին քաղաք՝ ուղիղ գվարդիայի կապիտան-պարուչիկ Մավրինի՝ քննիչ— հանձնաժողովի անդամի մոտ:

Մավրինը հարցաքննեց ինքնակոչին: Պուգաչովը առաջին իսկ խոսքից պարզեց իր դեմքը. Ասծուն հանելի յեր, ասաց նա, պատմել Ռուսաստանը իմ նզովյալիս միջոցով: Բնակիչներին հրամայվեց հավաքվել քաղաքի հրապարակի վրա. այստեղ տարվեցին և շղթայակալ բունտարարները: Մավրինը դուրս բերեց Պուգաչովին և ցույց տվեց ժողովրդին: Բոլորը ճանաչեցին նրան: Բունտարարներն իջեցրին գլուխները: Պուգաչովը բարձր ձախով սկսեց նրանց մեղադրել և ասաց. դուք կործանեցիք ինձ. դուք մի քանի որ անքնիատ քայլանձում ելիք ինձ՝ հանձն առնել հանգուցյալ մեծ քագավորի անունը. յերկար ժամանակ յես չելի համաձայնում, յեվ յերբ յես համաձայնեցի, ապա ամեն ինչ, վոր յես անում ելի, ձեր կամքով ու համապայնությամբ եր, մինչդեռ դուք հանախ գործում ելիք առանց իմ գիտության յել մինչեվ անգամ հակառակ իմ կամքի: Բունտարարները վոչ մի բառը չպատասխանեցին:

Սուվորովը նույն ժամանակները հասավ Ուղենի ափը և անապատականներից իմացավ, վոր Պուգաչովին կապել են իր համախոհները, և վոր նրան տարել են Յափկյան քաղաք: Սու-

վորովն ինքն ել շտապեց այնտեղ: Գիշերով նա ձանապարհը կորցրեց և գնաց գեղի այն կրակները, վոր տափաստանում այստեղ ու այնտեղ վառել եյին գողություն անող կիրգիզները: Սուվորովը հարձակվեց նրանց վրա և քեց, կորցնելով մի քանի մարդ, այդ թվում և իր աղյուտանս Մաքսիմովիչին: Մի քանի որից նա ժամանեց Յափկյան քաղաք: Սիմոնովը Պուգաչովին հանձննեց նրան: Սուվորովը հետաքրքրությամբ հարց ու փորձ արեց գերի խոռվարկույին, նրա ուղմական գործողությունների և դիտավորությունների մասին և նրան տարավ Սիմբիրսկ, ուր պետք ե գար և կոմս Պանինը:

Պուգաչովը նստած եր փայտե վանդակում յերկանիվ սայշակի վրա: Մի ուժեղ զորախումբ յերկու թնդանոթներով շրջապատել եր նրան: Սուվորովը նրանից չեր բաժանվում: Մոստախ գլուղում (Սամարայից հարյուր քառասուն վերատի վրա) հրդեհ ընկալ այն խրճիթի մոտ, ուր Պուգաչովն եր գիշերել: Նրան հանեցին վանդակից, իր վորդու՝ կայտառ ու համարձակ մի տղայի հետ, կապեցին սայլակին և ամբողջ գիշեր Սուվորովն ինքը պահակ կանգնեց նրանց: Կոսպորեյում՝ Սամարայի դիմացը գիշերը ալեկոծ ժամանակ Սուվորովն անցավ Վոլգան և Սիմբիրսկ ընկալ հոկտեմբերի սկզբին:

Պուգաչովին ուղիղ տարան կոմս Պանինի տունը, վոր նրան դիմավորեց մուտքի մոտ, իր շտաբով շրջապատված:— Դու ի՞նչ մարդ ես, — հարցրեց նա ինքնակոչին:— Յեմելյան Խվանով Պուգաչովն եմ, պատասխանեց նա:— Այդ ի՞նչպես դու համարձակվեցիր, գո՞զ, թագավոր կոչել քեզ, — շարունակեց Պանինը:— Յես ագուալ չեմ տարարկեց Պուգաչովը բառախաղով¹⁾ և իր սովորությամբ այլաբանըներն բացատրելով), յես ագուալի նույն եմ, իսկ ու ասած ագուալը հալա բույսում ե: Պետք ե իմանալ, վոր յափկյան բունտարարները՝ ի հերքումն ընդհանուր կարծիքի՝ լուր եկին տարածել, վոր նրանց մեջ իսկապես գտնվելու և յեղել վոմն Պուգաչով, բայց վորը իրենց ղեկավարող թագավոր Պյոտր III-ի հետ ընդհանուր վոչինչ չունի: Պանինը տեսնելով, վոր Պուգաչովի հանդինությունն ապշեցրեց տան մոտ խոնդած ժողովրդին, հարվածեց ինքնակոչի գեմքին՝ արյունելու աստիճան և նրա մորուքից պոկեց մի փունջ մազ: Պուգաչովը ծունկի յեկալ և ներումն խնդրեց: Նրան

1) Բառախաղը կազմված է ոռուելուն օր (գող) և օրօն (աղոալ) բառերից: Ծ. թ.

բանտ դրին խիստ հսկողության տակ, ձեռներն ու վոտները կապած, մեջքին լերկաթե ողակ հազցրած, վորի շղթան պտուտակով ամրացված եր պատին: Ակաղեմիկ Ռիչկովը՝ Միմբիրսկ քաղաքի սպանված պարետի հայրը տեսավ նրան այնտեղ և նկարագրեց իր տեսակցությունը: (Պուգաչովը ուխա¹ յեր ուսում փայտե ամանից: Տեսնելով Ռիչկովին, նա ասաց նրան. «Բարով եք յեկել» և նրան հրավիրեց իր հետ ճաշելու: Դրանից, գրում եակաղեմիկը, յես նանաշեցի երա սոր հօգին): Ռիչկովը հարցրեց նրան,—ի՞նչպես նա համարձակվեց այդպիսի մեծ չարագործություններ անելու: Պուգաչովը պատասխանեց. մեղավոր եմ ասծու յեվ բագումու առաջ, բայց պիտի տեսատեմ քավել իմ բոլոր հանցանեները: Իր վորդու մասին խոսելիս Ռիչկովը չկարողացավ պահել արցունքները. Պուգաչովը՝ նրան նայելով՝ ինքն ել լաց յեղավ:

Վերջապես Պուգաչովին ուղարկեցին Մոսկվա, ուր պետք ե վճռվեր նրա վիճակը: Նրան տանում եյին ձմեռալին կիրիտակայով, ընակիշներեց վերցրած փոխնեփոխ ձիերով. գվարդիալի կապիտան Գալախովը և կապիտան Պովլալո-Շվեյկովսկին, վորը դրանից մի քանի ամիս առաջ գերի յեր յեղել ինքնակոչի մոտ, ուղեկցում եյին նրան: Նա շղթայսկապ եր. Զինվորները իրենց ձեռքերով եյին կերակում նրան և ասում յերեխաներին, վորոնք խոնվում եյին նրա վանդակի մոտ.—հիշեցեք, յերեխեք, վոր դուք տեսել եք Պուգաչովին: Ծեր մարդիկ դեռ պատմում են նրա համարձակ պատասխանների մասին, վոր նա տվել ե անցնող պարոնների հարցերին: Ամբողջ ճանապարհին նա ուրախ եր և հանգիստ: Մոսկվայում նրան դիմավորեց բազմամարդ ժողովուրդը, վորը քիչ ժամանակ դրանից առաջ անհամբերությամբ սպասում եր նրան և հազիվ եր իսպաղվել ահավոր չարագործի բոնվելով: Նրան նստեցրին Մոնետնիյ Դվորում, ուր առավոտից մինչև գիշեր յերկու ամիս անընդհատ հետաքրքրվողները կարող եյին նրան տեսնել պատին գամված և իր անզորության մեջ ել ավելի սարսափելի: Պատմում են, վոր շատ կանաչք ուշաթափավելի են, վոր շատ կանաչք ուշաթափավելի են նրա հրացայտ հալացքից ու ահեղ ձայնից: Դատից առաջ նա ցուց տվեց հոգու անասելի թուլություն: Հարկադըրված եյին աստիճանաբար նախապատրաստել նրան՝ մահվան դատավճիռը լսելու համար: Պուգաչովը և Պերֆիլեվը դատա-

պարտվեցին քառահատման¹), Զիկան գլխատման. Շիգալեվը, Պադուրովը և Տորնովը՝ կախաղանի. տամնութ մարդ՝ մարակով ծեծվելու և տաժանակիր աշխատանքի ուղարկվելու:—Պուգաչովի և նրա համախոհների մահապատիժը կատարվեց Մոսկվայում 1775 թվի հունվարի 10-ին: Առավատից ժողովրդի անհամար բազմություն խոնվել եր Բոլոտայում, ուր մի բարձր տախտակամած եր կառուցված: Նրա վրա նստած եյին դահիճները և ողի եյին խմում, սպասելով զոհերին: Տախտակամածի մոտ հաստատված եյին յերեք կախաղանները: Շուրջը շարքի եյին կանգնել հետեվակ գընդերը: Սպահները մուշտակներ եյին հագել՝ դաժան սառնամանիքի պատճառով: Տների և խանութների տանիքները ծածկված եյին մարդկանցով. ցած հրապարակն ու մերձակա փողոցները լիքն ելին կառքերով ու կարետներով: Հանկարծ ամեն ինչ յերերաց ու աղմկեց. գոռացին՝ «Քերոնւմ են, բերում», Կիրասիրների²) գորախմբի յետեկց գալիս եր սահնակը, վրան բարձր ամբիոնով: Նրա վրա, գլուխ բաց, նստած եր Պուգաչովը, գիմացը՝ խոստովանահայրը: Այդտեղ եր գտնվում նաև դադտնի եքսպերտիցիալի³) չինովնիկը: Պուգաչովը՝ քանի գեռ տանում եյին նրան՝ աջ ու ձախ գլուխ եր տալիս: Սահնակի յետեկց գալիս եր ձիավոր զինվորների մի խումբ և քայլում եր մցուս դասապարտյաների խումբը: Ականատեսը (վորը այն ժամանակ նոր եր դուքս յեկել պատանեկությունից, հիմա մի ծերունի յե պուետի և պետական գործչի փառքով պսակված), հետեյալ կերպ ենկարագրում արյունոտ քստմնելի տեսարանը.

«Սահնակը կանգ առավ կառափնատեղի աստիճանների գիմացը: Պուգաչովը և նրա սիրելի Պերֆիլեվը խոստովանահոր և յերկու չինովնիկների ուղեկցությամբ հազիվ բարձրացան եղափոտի վրա, յերբ լսեց հրամայական խոսքը. պատվի, և չինովնիկներից մեկը սկսեց կարդալ մանիքեստը: Համարյա ամեն մի բառ հասնում եր ինձ:»

1) Կամ՝ քառահատման (գետվուանու)՝ մահապատիժի մի տեսակը, վորի ժամանակ դատապարտյալն վեց մաս եյին անում տանջանքներն ավելացնելու նպատակով նախ կարում եյին նրա վոտքերն ու ձեռքերը, ապա գլուխը:

2) Կիրասիրների եքսպերտիցիալի ահավանական դաշտը:

3) Գաղտնական գործությունների գործակությունների գործակությունների մասնակիցների գաղափար և նկատմամբ կիրառվող դաժան սպաթիժը տեղերում անցել կերպով իրականացնելու համար: Ծ. թ.

1) Ուխա-ձկնասպաս: Ծ. թ.

« Յերբ կարդացողն արտասանեց գլխավոր չարագործի առունը և մականունը, ինչպես և ստանիցայի անունը, ուր նա ծնվել եր, որերպալիցմեյսերը բարձր ձայնով հարցրեց նրան.— արդյոք դու յես Դոնի կաղակ Յեմելյա Պուգաչովը. նա նույն քան բարձր պատասխանեց. այդպես ե, տեր իմ, յես Դոնի կաղակ, Զիմովեյսկայա ստանիցայի Յեմելյա Պուգաչովն եմ. Հետո, մանիթեստի ընթերցման շարունակության բոլոր ժամանակ նա, նայելով տաճարին, շուտուուտ խաչակնքում եր, մինչդեռ նրա զինակից Պերֆիլեր, բարձրահասակ, կորաթիկունք, չհնու և կատաղի տեսքով, անշարժ կանգնած եր, աչքերը, գետին հառած: Մանիթեստի ընթերցումից հետո խոստովանահայրը նրանց մի քանի խոսք ասաց, որինեց նրանց և իջակ եշաֆութից: Մանիթեստը կարդացովը հետեւեց նրան: Այս ժամանակ Պուգաչովը խաչը համբուրելով մի քանի անգամ ծունկի յեկավ, յերեսը դեպի տաճարները դարձրեց, հետո փութելու տեսքով սկսեց հրաժեշտ տալ ժողովրդին. ամեն կողմ գլուխ եր տալիս, ընդհատվող ձայնով ասելով, Եերի՛ր, ուղղափառ ծողովուրդ. բողոքյան արախնու վոր յես նեղացրել եմ եեզ... Եերի՛ր, ուղղափառ ծողովուրդ: Այդ խոսքի հետ եկզեկուտորը¹⁾ նշան տվից. դանիթերը վրա ընկան նրա շոբերը հանելու. պատուեցին վոշխարի մորթուց կարած ձերմակ մուշտակը, սկսեցին ծփիկ-ծփիկ անել մետաքսե մոռագույն կիսակաֆտանի թիքերը: Այս ժամանակ նա ձեռքերն իրար զարկեց, ընկավ մեջքի վրա և մի ակնթարթում նրա արլունաշաղ գլուխն արդեն կախված եր ողում²⁾...

Դանիթը գաղտնի հրաման եր ստացել կարմել հանցավոր ների տանջանքները. Կտրեցին դիակի վոտքերն ու ձեռքերը.

1) Եկ գեկուտուր (լու. բառացի կատարածու) — մինչ հեղափոխական Ռուսաստանում այսպես ելին կոչվում այն չինովասիկները (աստիճանավորները), վորոնք վարում ելին պետական դիվանատան տնտեսական բաժինները: Այստեղ նշանակում և հրապարակորեն տեղի ունեցող մահապատճի կատարածու: Ծ. թ.

2) Այս մահապատճի մանրամասնությունները զարմանալի կերպով հիշեցնում են մահապատճի մի այլ Դոնի կաղակի, զոր մոլեկում եր Պուգաչովից հարյուր տարի առաջ համարյա մինուուն տեղերում և նույնպիս սարսափելի հաջողություններով: Տես Relation des particularités de la rébellion de Stenka—Razin contre le grand Duc de Moscovie. La naissance, le progrès et la fin de cette rébellion avec la manière dont fut pris ce rebelle, sa sentence de mort et son exécution, traduit de l'anglais par C. Desmarest. MDCLXXXII [Մանրամասն տեղեկագիր Ստեփան Ռազինի ապատամբության մասին ընդդեմ Մոսկվային մեծ իշխանի: Այս ապատամբության սկզբնավորությունը, զարգացումը և վախճանը հանդերձ նկարագրությամբ—այս խոսքարկույթի ինչպես բռնվելը, նրա մահվան գատագիրը և մահապատճը: Անդերենից թարգմանեց Ս. Դեմոսը, 1682. Ծ. թ.] Այս գերքը շատ հաղաղուտ ե, դրանից մի որինակ յես տեսել եմ Ս. Ա. Նորովի գրադարանում, զոր հիմա պատկանում ե իշխան Ի. Ի. Տրուբեցլոյին:

դահիճները դրանք տարան եշափոտի չորս անկյունները, գլուխիլցուց տվին հետո արդեն մի յերկար ցցի վրա: Պերֆիլեվը, խաչակնքելով ընկավ յերեսն ի վայր ու մնաց անշարժ: Դահիճները բարձրացը նրան և մահապատճի յենթարկեցին այնպես, ինչպես Պուգաչովին: Այնինչ Շիգայեվը, Պաղուը և Ծորնովը արդեն կախված ելին վերջին զղաձկությունների մեջ... Սույն այս ժամանակ հնչեց զանգակը. Զիկային տարան Ուֆա, ուր պետք ե կատարվեր նրա մահապատճի: Հետո սկսվեցին առևտրական պատիժները¹⁾, ժողովուրդը ցրվեց. հետաքրքրվողների մի փոքրիկ խումբ մնաց սկան մոտ, վորին մեկը մյուսի յետեկից կապվում ելին մտրակմա՛, դատապարտված հանցավորները: Քառահատման յենթարկված խովարարների կտրված անդամները տարվեցին Մոսկվայի ուղեկալները և մի քանի որ հետո այրվեցին նրանց մարմինների հետ միասին: Դահիճները մոխիրը քամուն ալիքն: Ներման արժանացած խոռվարարների կտրված անդամները տարվեցին Մոսկվայի ուղեկալները և մի քանի որ հետո այրվեցին նրանց մարմինների հետ միասին: Դահիճները մոխիրը քամուն ալիքն: Ներման արժանացած խոռվարարներին մահապատճի մյուս որը բերին կանգնեցրին Գրանովիտայա պալատի առջև: Նրանց ներումն հայտարարեցին և բոլոր ժողովրդի ներկայությամբ նրանց վրայից հանեցին շղթաները:

Այսպես վերջացավ մի բուռը անհնաղանդ կաղակների ձեռով սկսած խոռվությունը, վորը մեծացավ իշխանության անհերելի անհոգության պատճառով և վորը ցնցեց պետությունը Սիբիրից մինչև Մոսկվա և Կուրբանից մինչ Մուլումի անտառները: Յերկար ժամանակ լիակատար հանգստություն չեր հաստատվում: Պանինը և Մոսկվորովը մի ամբողջ տարի մնացին խաղաղեցված նահանգներում, նրանց մեջ հաստատելով թուլացած վարչությունը, նորոգելով քաղաքներն ու բերդերը և արմատախիլ անելով խափանված բունտի վերջին բողբոջները: 1775 թվի վերջում հրապարակվեց ընդհանուր ներում և հրամայվեց

1) Մի շարք հանցանքների դեպքում (գատավորների կաշառակերություն ամոթալի վարմունք յեկեղեցում և այլն) մեղապարտներին ծիծում ելին մտրակով քաղաքի մարդաբան հրապարակներում, ուր սովորաբար յեռուն առեսուբեր լինում: Ծ. թ.

բոլոր գործերը հավետ մոռացության տալ: Յեկատերինան, կամ մենալով վոչնչացնել սոսկալի եպոխայի հիշողությունը, վերացրեց հին անունը այն գետի, վորի ափերը խոռվության առաջին վկաներն եյին լեղել Յափկյան կազակները վերանվանվեցին ուրալան, իսկ նրանց փոքրիկ քաղաքը կոչվեց սույն այս անունով: Սակայն սոսկալի բունտարարի հետքերը մնացին այն վայրերում, ուր նա մոլեգնել եր: Ժողովուրդը դեռևս վառ կերպով հիշում ե այս արյունալի ժամանակը, վորը—այնպես արտահայտիչ—նա անվանեց պուգաչովին ա:

ՊՈՒՇԿԻՆԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹⁾

1

Եջ 16. Պուգաչովն արդեն հինգերորդ ինքնակոչն եր, վորընդունել եր կայսր Պյոտրը Յ-րդի անունը: Վոչ միայն հասարակ ժողովրդի, այլ և բարձր դասի մեջ գոյություն ե ունեցել մի կարծիք, վոր իր թե թագավորը կենդանի ե և գտնվում է կալանքի տակ: Ինքը մեծ իշխան Պավել Պետրովիչը յերկար ժամանակ հավատում եր կամ ուզում եր հավատալ այդ լուրին: Գահ բարձրանալուն պես թագավորի առաջին հարցը կոմս Գուգովիչին այս եր: Կենդանի՞ ե արդյոք իմ հայրը:

2

Եջ 18. Պուգաչովն ասել ե, վոր ինքը թագուհին ե ոգնելիրեն թաքնվելու:

3

Եջ 20. Պուգաչովի առաջին վրդովեցուցիչ կոչը Յափկյան կազակներին՝ ժողովրդական պերճախօսության, թեպետ և անդրագետ, սակայն զարմանալի մի նմուշն ե: Դա առավել ազդեցություն ունեցավ, մանավանդ, վոր Ռեյնսդորֆի հրապարակումները գրված եյին նույնքան թույլ վորքան և ձիշտ, ձգձգված յերկիմաստություններով, պարբերությունների վերջում բայերով:

1) <Այս նկատողությունները Պուգկինը 1835 թ. հունվարի 25-ին ներկայացրել ե Նիկոլայ Լ-ին վորպես մի նյութ, վոր Շինքը չի վսահացել տպագրելու, սակայն վորը կարող ե հետաքրքրական լինել նորին մեծության համար: Եջերի թվանշումները համապատասխանում են «Պուգաչովի պատմության» առաջին հրատարակությանը: Քառակուսի փակագծերում նշանակվում են այն տողերը, վոր պահպանվել են հեղինակի նկատողությունների սեպագության մեջ միայն: >

Մասնի՛ ռուս. իմք.
(ԹИԽԼ, 1936 թ. Վ հ. Եջ 446)

Եջ 25. Խեղճ Խարլովը բերդի առման նախորդյակին հարքած եր, սակայն յես չվճռեցի դա ասելու՝ հարգելով նրա քաջությունն ու գեղեցիկ ժահը:

Եջ 34. Սույն Նաշնորդինը հետոց նա եւ, վորը ապտակ հասցրեց
Սուվորովին (գրանից հետո Սուվորովը նրան տեսնելու միջտ
թաքնվում եր և ասում. վախում եմ, վախում, նա կովում ե):
Նաշնորդինը (Վոյին Վասիլիկիչ) իր ժամանակ ամենառառարտի
մարդկանցից մեկն եր: Վորդին գրի ե առել նրա հուշերը. կյան-
քում ապելի զվարճալի բան չեմ կարդացել: Թագավոր Պավել
Պետրովիչը միրում եր նրան և գահ բարձրանալուց հետո ծա-
ռայության հրավիրեց նրան: Նաշնորդինը պատասխանեց թագա-
վորին. Դուք դյուրաբորբոք եք և յես եմ գյուրաբորբոք. ծա-
ռայությունն ինձ շահ չի բերի: Թագավորը գյուղեր շնորհեց
նրան կոսարոմայի նահանգում, ուր և նա առանձնացավ: Նա Յե-
լլիզավետա թագուհու սանիկն եր և մեռավ 1809 թվին:

Եջ 54. Զերնիշովը (նա, վորի մասին Յեկատերինա II խոսում և իր հուշերում) մի ժամանակ կամերդ-լակեց և յեղել։ Պետերբուրգից նա հեռացվեց Յելիզավետա Պետրովնա թագուհու հրամանով¹)։ Թագուհի Յեկատերինան գահ բարձրանալով առատորեն իր վողորմածությունները շնորհեց նրան և նրա յեղբորը։ Ավագը մեռագ Պետերբուրգում վորաբես բերդի պարետ։

Եջ 55. Սըանից առաջ Կառուը ոգտագործվեց այնպիսի գործերում, վորոնք պահանջում եյին հաստատակամություն և մինչև իսկ դաժանություն (վոր զեռևս չի պայմանավորում քաջությունը և Կառուը ապացուցեց դա): (Մազոմում նա Մաձիվիլի պահարկուն եր): Պարտված յերկու տաժանակիրներից նա փախալ տեսդի, վոսկորների ջարդունքի, Փիստույաշի և ջերմախտի

1) [Նա և նրա յեղալը Պյոտր III-ի սիրելիներն եղին, վորը նրանցից մեկին գնդապետ դարձեց և մի գունդ պվեց նրան, իսկ բերկրորդին՝ Ինթա- գնդապետ: Յեկատերինան առաջինին բըրկադիլը աստիճան ջնորհեց և դարձրեց Ա. Գետերբուրզի պարետ: իսկ նրայեղալը (վորին հետո կախեցին)՝ գնդապետ և Սիմբիլը պարետ: Գետերբուրզի պարետը ծերության հասակում կապված եր Տրավինայի հետ՝ նա ամբողջ որը այդ կողման տանն եր, պատռւանի առաջ նստած, իսկ վերջալույսին ուզնորպում եր գեպի բերդ]: Մանոթ. հետ.

պատրվակով։ Համսելով Մոսկվան նա ուզում եր արդարացումներով ներկայանալ իշխան Վոլխոնսկուն, վորը նրան չընդունեց։ Կառուր յիշավ աղնվականների ժողովարանը, սակայն նրա յերեալը այնպիսի աղմուկ և այնպիսի աղաղակներ բարձրացրեց։ Վոր նա հարկագրված եր շտապով հեռանալու։ Այժմ, յեթե մինչեւ իսկ կա ընդհանուր կարծիք, ապա դա յերևան ե գալիս անհամեմատ անվրով, քան թե հնումն եր լինում։ Սույն մարդը, վոր պատիվը զոհաբերեց իր անվտանգության համար, այնուամենայիվ բռնի մահ ունեցավ։ Նա սպանվեց իր գյուղացիների ձեռքով, վորոնք նրա դաժանությունից կորցրել ելին իրենց համբերությունը։

Եջ 56. [Ա. ի. Բիբլիկովի պալատական հարաբերությունները չափազանց հետաքրքրական են։ Նա այն ժամանակվա ամենապահիվ մարդկանցից մեկն է]։ Թագուհին հարգում եր Բիբլիկովին և հավատացած եր նրա ջանադրության վրա, սակայն յերբեք չի սիրել նրան։ Ցեկատերինայի թագավորության սկզբում գաղտնի բանակցությունների համար նա ուղարկվեց Խոլմոգորի, ուր պահվում եր գերախտ Խոանն Անտոնովիչի ընտանիքը։ Բիբլիկովը վերադարձավ խելանեղորեն սիրահարված իշխանուհի Ցեկատերինային (վոր բնավ դուր չեկավ թագուհուն)։ [Նրա ազատամտությունն ու նրա մշտական ոպպովիցիան հայտնի ենին] Բիբլիկովին կասկածում եյին, թե նա բարեհաճ և գեպի այն կուսակցությանը, վորը իբր թե ուղղում եր թագավորի գահը բարձրացնել մեծ իշխանին։ [Գոյություն ունեցել և արդյոք այդպիսի կուսակցություն թե վոչ—այդ ուրիշ հարց է]։ Սույն տեսլով անդադար շփոթության մեջ եյին պահում թագուհուն և գրանով թունավորում ելին հարաբերությունները մոր և վորդու, վորին գրգռում ու դաժանեցնում եյին [անիրավացի կասկածները], ամենորյա մանր-մունը վրդովմունքները և պալատական ժամանակակի (վրեմենից) ստոր հանդգնությունը։ Բիբլիկովը քանիցս միջնորդ և յեղել թագուհու և մեծ իշխանի միջև։ Ահա հազարավոր որինակներից մեկը. մի անգամ մեծ իշխանը խոսելով ուղղմական շարժումների մասին իր մոտ և կանչում գնդապետ Բիբլիկովին (Ալեքսանդր Խիչին յեղբորը) և հարցում՝ վ՞երքան ժամանակում նրա գունդը տագնապի գեպօրում կարող և համանել Գատչինո։ Մյուս որը Ալեքսանդր Խիչը իմաս

նում ե, վոր մեծ իշխանի հարցի մասին լուր ե տրված և վոր նրա լեզոր ձեռքից խլում են գունդը: Ալեքսանդր իլիչը իր յեղաբորը հարց փորձ անելով անմիջապես վազում ե թագուհու մոտ և բացատրում նրան, վոր մեծ իշխանի խոսքերը վոչ այլ ինչ են յեղել, յեթե վոչ ռազմական դատողություն և վոչ թե դավադրություն: Թագուհին հանգստանում ե, սակայն ասում՝ յեղաբորդ ասա, վոր տագնապի դեպքում նրա գունդը պետք ե գնա Պետերբուրգ և վոչ թե Գատչինու:

9

Եջ 73. Գուստավ III-ը 1790 թվին¹⁾ հայտնելով իր բոլոր դժգոհությունները, նրանով եր պարծենում, վոր նա չի ոգտվել Պուգաչովի առաջացրած իրարանացումով: —Պարծենալու բան կա, ասել ե թագուհին, վոր թագավորը դաշնակցության մեջ չի մտել փախստական մի տաժանակրի հետ, վորը կանայք ու յերեխաններ ե կախել:

10

Եջ 74. Ռուբալյան կազակները (մանավանդ ծեր մարդիկ) մինչև հիմա ել կապված են Պուգաչովի հիշատակին: Մեղք ե ասել, թե մենք գանգատվում ենք նրանից, —ասում եր ինձ 80-ամյա մի կազակուհի, —նա մեզ չարիք չի պատճառել —Հապա մի պատմիր ինձ, ասում եի յես Դ. Պյանովին, —թե ինչպես Պուգաչովը յեղել ե քո հարսանեայրը: —Նա քեզ համար ե Պուգաչով, —զյուրացած պատասխանեց ինձ ծերը, —իսկ ինձ համար նա մեծ թագավոր Պյոտր Ֆեոդորովիչն եր: Յերբ յես հիշեցի նրա անասնական դաժանության մասին, ծերերն արդարացնում եին նրան, ասելով, կամքը նրանը չեր, մեր հարբեցողներն ե-յին պղտորում նրա միտքը:

11

Եջ 82. [Կերժավինը յերկու կազակների հետ Մալիկովկայից վոչ հեռու մի գյուղի մոտենալիս տեղեկանում ե, վոր բազմաթիվ մարդիկ են հավաքվել և ուղում են գնալ Պուգաչովին միանալու: Նա ուղիղ գնում ե հավաքա-խրճիթը և գրագիր Զլորինից (հետագայում հարուստ) բացատրություն պահանջում, թե ժողովուրդն ինչու համար ե հավաքվել և ում հրամանով, Գլուխավորները դուրս են գալիս և հայտնում, վոր գնում են թա-

1) Շվեդական թագավոր 1771—92. օն. 1746 թ: Խոսքը Ռուսաստանի հետ 1788—90 թ: թ: վարած պատերազմի մասին եւ ծ. թ:

գավոր Պյոտր Ֆյոդորովիչին միանալու և քիչ ե մնում հարձակվեն Դերժավինի վրա: Նա հրամայում ե յերկուսին կախել, իսկ ժողովրդին հրամայում ե մտրակներ բերել և ծեծում ե ամբողջ գյուղը: Հավաքվածները թողնում դես ու դեն են փախչում: Դերժավինը հավատացրել եր, թե իր հետեւ յերեք գունդ ե գալիս: (Լսել եմ սենատոր Բարանովից) ի. ի. Դիմիտրեկը հավատացնում եր, վոր Դերժավինը այս յերկու զինականներին կախել ե ավելի շուտ պոետիկ հետաքրքրությունից, քան թե իսկական անհրաժեշտությունից դրդված:

12

Եջ 84. Իշխան Ուրուսովի կատարած մահապատիժները Բազիկիայում անասելի են: Մոտ 130 մարդ մահապատժվում են ամեն տեսակ տանջանքներ կրելով: [Վոմանց ցից եյին հանում, ուրիշներին կախում եյին՝ կողերից կեռ անցկացրած, վոմանց քառահատում եյին]: Մնացածներին՝ մոտ հազար հոգու (գրում ե Ոիչկովը) ներեցին, կտրելով նրանց քթերն ու ականջները: Շատերը այս ներկածներից պետք ե կենդանի լինելին Պուգաչովյան բունափառական ժամանակ:

13

Եջ 93. Իշխան Գոլիցինը՝ Պուգաչովին առաջին հարված հասցնողը՝ յերիտասարդ և գեղեցիկ տղամարդ եր: Թագուհին նրան նկատեց Մոսկվայում պարահանդեսի ժամանակ (1775): և ասաց. ինչ գեղեցիկ ե, իսկական Կյոկլա¹⁾: Այդ բառը նրան խորտակեց: Շեղելմը (հետագայում ամուսնացած Պուտյոմկինի բարեկամուհիներից մեկի հետ) Գոլիցինին մենամարտի կանչեց և սրախողխող արագ, ասում են, զավաճանորեն: Մոսկվան մեղադրում եր Պուտյոմկինին:

14

Եջ 135. [Վորոշ պատժաբանների ցուցումը, վորոնք պնդում եյին, թե ազնվականներից վոչ մեկը խառն չի յեղել Պուգաչովի բունափառին, միանգամացն անիրավացի եւ Բաղմաթիվ սպաններ (վորոնք իրենց աստիճանով ազնվականներ եյին դարձել) ծառայում եյին Պուգաչովի շարքերում, չհաշված նրանց, ովքեր վախեցի եյին միացել նրան]: Նշանակալից ե այն տարբերությունը, վոր կառավարությունը դնում եր անհատական ազնվականության և տոհմական ազնվականության միջև: Պրապոր-

1) Կյոկլա—(փղը)—խաղատիկնիկ:

շիկ Մինելը և մի քանի այլ սպաներ քշվեցին շարքի միջով¹⁾, պատժվեցին բատոններով²⁾ և այլն։ Իսկ Շվանվիչը միայն խայտառակից՝ գլխի վերև սուրը կոտրելով։ Յեկատերինան արդեն իսկ պատրաստվում էր ազնվականությունն ազատել մարմնական պատժից։ Շվանվիչը վորդին եր կրոնշտագտի պարետի, վորը մի ժամանակ թրագաշույնով պանդոկային վեճի միջոցին ճեղքել եր Ալեքսեյ Ռոլովի (Չեսմենսկու) այտը։

15

Եջ 137. Ովքբեր եյին այն բանիմաց համախոհները³⁾, վորոնք վարում ելին ինքնակոչի գործողությունները։ — Պերֆելիք, Շիգավելը։ — Դա կարգվի Պուգաչովի պրոցեսից, սակայն ցավոք սրտի յես չեմ կարդացել այն, չհամարձակվելով կնքատել առանց բարձրագույն բարեհաճության։

16

Եջ 138. Յերիսասարդ Պուլավսկին կապ ուներ Ղաղանի ծեր նահանգակետի կնոջ հետ։

17

Եջ 145. Սարանսկում վանահայր Ալեքսանդրը խաչով ու ավետարանով եր ընդունել Պուգաչովին և ժամասացության ժամանակ մաղթանքին հիշել եր թագուհի Ռւստինյա Պետրովնային։ Վանահայրը քաղաքացիական դատի արվեց Ղաղանում, 1774 թվի հոկտ. 13-ի կեսերին շղթայակառ բերվեց տաճար։ Նրան սեղան բարձրացրին և հագցրին իր լրիվ զգեստավորումը։ Զինվորները սվինները հագցրած կանգնել եյին հլուսիսային դրսերի մոտ։ Ավագ յերեցը և ավագ սարկավագը նրան կանգնեցրին յեկեղեցու մեջտեղ, բոլոր զգեստավորությամբ ու շղթայակապ։ Պատարագից հետո նրան դուրս բերին հրապարակ։ Կարդացին իր հանցանքները։ Դրանից հետո նրա վրայից հանեցին շուրջառները, խուզեցին մազերն ու մորուքը և քշեցին ցմահ բանտարկության։ Ժողովուրդը սոսկումի մեջ եր և խղճում եր հանցավորին։ Հրովարտակով հրամայված եր կուսակրոնի շորերով գուրս բերել Ալեքսանդրին։ Սակայն Պոտյոմկինը (Պյոտր Սերգիևիչը) զանց առավ այն, մեծ եփեկտի համար։

1) Տես 95 եջի ծան։

2) Ետօգ—բիր, հաստ մահակներ, վորոնցով ծեծում՝ եյին հանցավորներն։

3) Այս մասին տես՝ Դյուբրավին, Հ. Փ. „Պուգաչև և его сообщники“, СПБ. 1884, том III, стр. 329—352. Ե. Բ.

Եջ 157. Իսկական պատճառը, վորով Ռումյանցեր չուղեց Քողնել Սուվորովին—նախանձն եր, վոր նա տածում եր գեղի Բիբիկովը, ինչպես և ընդհանրապես գեղի բոլոր մարդիկ, վորոնց ախոյականությունը նրան վտանգավոր եր թվում։ [Սուվորովի փոխարեն նա ուղարկեց Շէրբատովին։ Կայսրուհի Յեկատերինան չեր սիրում Ռումյանցերին՝ նրա ստոր բնավորության համար։]

18

Եջ 164. Պագուրովը, վորակես գեպուտատ, անվանական հրովարտակով տրված արտօնությունների ույժով, վոչ մի գեպօւմ չպետք ե մահվան պատիժ ստանար. մի գուցե նա չգիտեր այդ. մի գուցե դատավորները չեն մտածել այդ մասին. այնուամենայնիվ սույն չարագործի մահապատիժը հակառակնական ե։ [Ահա հաղարավոր որինակներից մեկը, վորոնք ապացուցում են փաստաբանների անհրաժեշտությունը։]

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամբողջ հասարակ ժողովուրդը կողմնակից եր Պուգաչովին։ Հոգևորականությունը բարյացակամ եր գեղի նա, վոչ միայն տերաբերներն ու կուսակրոնները, այլև ցեղիսկոպոսները։ Միայն ազնվականությունն եր բացարձակ կերպով անցել կառավարության կողմը։ Պուգաչովը և նրա համախոհները սկզբում ուղղում եյին ազնվականներին ևս թեքել իրենց կողմը, սակայն նրանց շահերը չափից գուրս հակագեր եյին (NB Դպիրների և չինվանիկների դասակարգը դեռևս սակավաթիվ եթ ու վճռականապես պատկանում եր հասարակ ժողովրդին։ Նույնը կարելի յե ասել նաև զինվորի աստիճանից սպայության արժանացածների մասին։ Այս վերջիններից շատերը Պուգաչովի հրոսակախմբերում եյին։ Միայն Շվանվիչն եր խակական ազնվականներից)։

Բոլոր գերմանացին, վորոնք միջին աստիճաններ ունեյին, ազնիվ կերպով կատարեցին իրենց գործը. Միխելսոնը, Մուֆելը, Մելինը, Դիցը, Դմերինը, Դուլե եւ։ Սակայն բոլոր նրանք, ովքեր բրիգադիրի և գեներալի աստիճաններ ունեյին, գործում եյին թուզ, վեհերուտ, առանց ջանադրության. Ռեյնսդորֆ, Բրանտ, Կառո, Ֆրեյման, Կորֆ, Վալենշտերն, Բիլով, Դեկանդ եւ։

Քննության առնելով Պուգաչովի և նրա համախոհները ձեռնարկած միջոցները, պետք ե խոստավաններ, վոր խոռվարաներն ընտրել են ամենահուսավի և իրական միջոցներ՝ իրենց

Նպատակին հասնելու համար, կառավարությունն իր կողմից
դորձել ե թույլ, դանդաղ, սխալներով:

Չկա չարիք առանց բարիքի. Պուգաչովի բունտը կառավա-
րությանն ապացուցեց շատ փոփոխությունների անհրաժեշտու-
թյանը և 1775 թվին նահանգները նոր սահմանում ստացան:
Պետական իշխանությունը կենտրոնացվեց. չափից դուրս լայ-
նարձակ նահանգները բաժանվեցին. պետության բոլոր մասերի
հաղորդակցությունը դարձավ արագ և ալին:

Այս հրատարակության մեջ ընթերցողների ուշադրությանն ե ներկա-
ցացվում Պուգաչովի պատմության բուն տեքստը և մոտ յերկու տասնակ նկա-
տողություններ, զոր Պուշկինը 1835 թ. հունվարի 25-ին ներկայացրել ե Նի-
կոլայ Տ-ին փորպես մի նուռիթ, զոր Շինքը չի կատարելու, ոսկայն
փորը կարող ե հետաքրքրական լինել նորին մեծության համար։ Պրանով
հիմնականում լրիվ պիտի համարել «Պուգաչովի պատմությունը», սկզբունք,
զոր կիրառվում և Պուշկինի իրեկերի նորագույն վոչ-լիակատար հրատարակու-
թյունների մեջ։ Սակայն, զորոց դաղափար տալու համար այն շրջանակների
մասին, զոր ճեղինակի կենդանության որով և հետագայում ընդունել ե պատ-
մական այս հորակապ աշխատությունը, համառոտ գծերով նշենք մի շարք հա-
վելյալ նուռիթեր, զորոնք լրացնում են այն։

«Պուգաչովի պատմության» առաջին՝ 1834 թ. հրատարակությունն ամ-
փոփում է ճեղինակի առաջաբանը, աեքստը, ծանոթություններն ու հասուկ
անունների ցանկը, ապա և մի քարտեղ (Որենքուրդի, Դադանի, Նիժեգորոդի
և Սստրախանի նահանգների՝ մինչ 1775 թ.), անդրագետ Պուգաչովի ձեռքով
արված խղմողների և նրա կնիքի պատճենները, ինքնակոչի հրովարտակների
ստորագրությունը և վերջապես Բրաստի, Ռեյսագորպի, Կառուի, Բիբիկովի,
Շչերբատովի, իջև Գոլիցինի, Միխելսոնի ու Բոջնակի ստորագրությունների
պատճենները։

Այս նուռիթերի մեջ ծավալով ամենամեծ տեղը՝ տեքստից հետո՝ բռնում
են ծանոթությունները—թվով ավելի քան հայրուր, յուրաքանչյուր գլխի հա-
մար առանձին թվանիշներով։ Ճեղինակը հանդամանորեն լուսաբանություններ
և տալիս կաղակների նախորդների, թաթարական գերիշխանության հարակից
այլ և այլ պատմական կատարաթղթերի, կաղակների արշավանքների, նրանց
զբաղմունքների (ձկնորսության, թղանակների ամենամանրաժաման նկարա-
գրություններ և այլն) ու կալմակների փախուստի, մասին։ Այս բաժնում
կան նաև աշխարհագրական մի շարք տեղեկություններ, զինվորների յերգեր,
հատվածներ ուսարյերից գրականությունից, ուսու մատենադրությունից, ուսկ-
մական տեղեկանքներ, քաղվածքներ, արխիվային փաստաթղթերից, զանազան
գեպքեր Պուգաչովի կյանքից, ճառեր, նամակներ, Պուգաչովի մասին ընտանե-
կան բնույթի հիշատակություններ, գամբանագրեր, ուղերձներ, Յեկատերինայի
նամակներից մի յերկուսը, կեսսագրական ակնարկներ՝ անցքերին մասնակից

անձանց վերաբերյալ, սպանված ազնվականների ու կալվածատերների ընդարձակ անվանացուցակները և այն, ու վերջում — Պուդաչովի մահապատճի նկարագրությունը ականատեսի կողմից:

Հետագա հրատարակությունները ամփոփում են նաև նոր նույնական վերաբերյալ կայսրին ներկայացրած նկատողություններից կարենոր տեղ և բռնում Պուդաչովի բունտի պատմության մասին «Сын Отечества» ժուրնալում 1835 թ. հունվարին տպած վերլուծման պատասխանը, վոր Պուդաչով գետների և իր խմբագրությամբ լույս տեսնող «Современник»-ի 1836 թ. 3-րդ գրքում: Պատասխանը վոչ արևինչ ե, յեթե վոչ Պուդաչովի բացատրությունները վոմն բրոնեն կու քննադատության առիթով: Այնչափ շահեկան և այն առաջաբանը, վորով Պուդաչովն սկսում եր հոդվածը: Անա այդ մասի լրիվ թարգմանությունը:

«Պուդաչովի բունտի պատմության» լույս տեսնելուց մի քամի որ հետո «Сын Отечества»-ի մեջ յերեվաց այս գրքի վերլուծությունը: Յես պարտք համարեցի ուշադրությամբ կարգալ այն, հուսալով ոգտվել անհայտ քննադատի նկատողություններից: Իրոք, դա ինձ ցուց տվեց սեկ սիալ և յերեք կարեռը վրիպակները: Զողվածն ընդհանուր առամամբ ինձ թվաց վորպես յերկը մի մարդու, վորը քիչ տեղեկություններ ունի իմ նկարագրած նյութի սատին: Յես պատրաստվում եյի մի ուրիշ հրատարակության մեջ ուղղել նկատված սիալանքները, արդարանալ անիրավացի սեղադրանքների հանդեպ և իմ անկեղծ զնորդականությունն հանդես բերել ուղենգնեստին, մանավանդ վոր նրա վերլուծությունը գրված ե ամենան մեղմությամբ ու բարյացակամությամբ:

Վերջերս «Северная Пчела»-ում առված եր, վոր այս վերլուծությունը կազմել ե հանդուցալ Բրոնեսկին՝ «История Донского войска»-ի հեղինակը: Սա ինձ հարկադրեց վերստին կարգալ նրա քննադատությունը և առարկել դրան իմ ժուռնակում, քանի վոր «Պուդաչովի բունտի պատմությունը» հասարակության մեջ վոչ մի հաջողություն չունենալով, հավանորեն չի ունենա և նոր հրատարակություն:

Եր հոգվածի սկզբում քննադատը ափսոսանք հայտնելով այն մասին, վոր «Պուդաչովի բունտի պատմությունը» գրված ե թմրած, սառը, չոր և վոչ թե Բայրոնի բոցագոր վրձնով կլին, խոստովանում ե, վոր այդ գիրքը ամենաթագավին նուութ ե, վոր ապագա պատմագրին՝ առանց մինչեւ իսկ Պուդաչովի դեռևս չկնքատված գործի ոժանդակության դժվար չի լինի ուղղելու վորու պ ո բ տ ի ք դիտավորություններ, անջշան աչքաթողանքներ և այս մեռած նյութին նոր և փայլուն կյանք տալուա: Ծնդ արևմ ու Բրոնեսկին այս պոետիք գիտակորությունները և աչքաթողանքները նշում ե «վոչ թե հեղինակին դատապարտելու նպատակով, այլ միայն հոգուտ դիտությունների, հոգուտ նրա (հեղինակի) թարգմ.) և ընդհանուրից: Հետեւնք մեր ռեցենզինակի յուրաքանչյուր քայլին»:

Հետո գալիս են Պուդաչովի լուրջ ու հիմնավոր բացատրականները ի պատասխան Բրոնեսկու քննադատության այլ և այլ կետերի:

Հատուկ ուշադրության արժանի ե մինչեւ կտմեմերյան «Դիտության ձեմարանի» հրատարակությունը¹⁾, վորից և կատարել ենք մեր թարգմանությունը, ապա համեմատել նորագույն ստուգված տեքստերի հետ, ուր բայց

1) Сочинения Пушкина, том XI, История пугачевского бунта, изд. Академии Наук, ШТБ, 1914 г.

վերեւում հիշված բոլոր նյութերից զետեղված են նաև Յեկատերինա III-ի մասին համար ները, հրամանագրերը, նուրալի խանի, Բիրիկովի, կոմս Պանինի և Գերժավինի նամակները, ժամանակակից մարդկանց պատմաժները և իմբարյական ընդարձակ ծանոթությունները: Այսկելի քան ութիւնարյուր մեծագիր ենիր ունեցող այս հատորը ամփոփում ե մի շարք այբբենական ցուցակներով և ալին:

Անդրադառնալով Պուդաչովի այս յերկի հայերեն ներկա թարգմանությանը, պետք ե ասենք, վոր հետեւելով նորերս լույս տեսած ուսուերեն միհատորակի¹⁾ սկզբունքին, վերնադիքը գրել ենք «Պուդաչովի պատմությունը» այն հմաքով, վոր նույն այդ վերնադիքը ե ունեցել Պուդաչովի ձեռագիրը, սակայն նեկոլայ Լ-ը փոխել ե այն, պատճառաբանելով, թե «ավագակը չի կարող ունենալ իր պատմությունը»:

Մանոթությունների բաժնում վորոշ տեսեր՝ ինչպես դա նշագած ե՝ ոգտադրությունը ենք հեղինակի բացատրությունները, մյուսները նպատակ ունեն ոգություն հասկանալի գարձնել նաև աշակերտության ու միջին ընթերցողի համար:

Գլուխ սկզբում գնում ենք շղթայակաս Պուդաչովի պորտրետ, վոր իր ժամանակ Պուդաչովի պատվերով Փարիզում փորագրված ե յեղել «Պուդաչովի պատմության» 1834 թ. հրատ. համար: Այս պատվերը կատարվել ե փարիզաբնակ Ֆ. Բելիզար գրավաճառի միջոցով:

ԹԱՐԴՄԱՆԻՒՅ

1) А. Пушкин, Сочинения, редакция, биографический очерк и примечания М. Томашевского, вступительная статья В. Десницкого, Гослитиздат, 1935, Ленинград.



Պատ. խմբագիր՝ Ս. Զ. ուրյան
Թարգմանիչ՝ Ա. Սուլիկասյան
Տէխ. խմբագիր՝ Ա. Ալեքսանդրյան
Մրագրիչ՝ Ա. Շահբարդյան
Տիտուլը յեկ կազմը Տ. Խաչվան Եյանի
Խուպերը Հ. Շավարշյան

766



13.168